

U.U. പ്രസാദൻ

മുരുക്കുളമ്പു
ചന്ദ്രമാലക്കുളം



891.71 | 26500
Դ-90 | Պաշտպահ. Ա. Ա.
Պազմանդ աշխար-
հութ անձս.



Луи

100XII. 3. 6.

А. С. ПУШКИН

*ИСТОРИЯ
ПУГАЧЕВА*



ГОСУДАРСТВЕННОЕ ИЗДАТЕЛЬСТВО ССРА
1936 · Е Р Е В А Н

831.71
Պ-80


Ա.Ս. ՊՈՒԾԿԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊՈՒԳԱՉՈՎԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
3 6 0 6 4 ս ն • 1 9 3 6





90130204



Ա. Թ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Սույն պատմական հատվածը կազմում եր իմ կազմած աշխատանքի մի մասը։ Նրանում ի մի յեն հավաքված այն բոլորը, ինչ հրապարակել են կառավարությունը Պուգաչովի վերաբերյալ, և՝ այն, ինչ ինձ հավաստի յե թվացել նրա մասին խստդ ոտարերկրյա դրսղների գործերում։ Նմանապես և առիթ եմ ունեցել ոգտվելու վորոշ ձեռագրերից, ավանդություններից և կենդանի մարդկանց վկայություններից։


Պուգաչովի գործը՝ ցարդ չկնքատված, գտնվում եր պիտական սանկտուատերության արխիվում ուրիշ այլ կարևոր թղթերի հետ, վորոնք յերբեմն պետական գաղանիքներ են յեղել, հիմա դարձած են պատմական նյութեր, թագավոր-կայսրը զահ բարձրանալուց հետո հրամայեց դրանք կարգի բերել։ Սույն զանձրը դուրս են բերված ներքնահարկերից, ուր մի քանի հեղեղութեր ալցելել են նրանց և հաղիվ չեն վոչնչացրել։

Ապագա պատմաբանը, վորին կթույլատրվի հնքատել Պուգաչովի գործը, հեշտությամբ կուղղի և կըրացնի իմ աշխատանքը — վորն, իհարկե, կատարյալ չե, սակայն՝ բարեխիղճ ե։ Պատմական այն եջը, վորի վրա հանդիպում են Յեկատերինայի, Ռումյանցեպի, յերկու Պանինների, Սուվորովի, Բիրիկովի, Մինելաունի և Դերժավինի անունները, չպետք ե կորագի գալիք սերմանդների համար։

Ա. Պուտին

2-ն Կոյնմբերէ 1832.

Բոլղին գրադ.



Ա. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Սույն պատմական հատվածը կազմում եր իմ կազմած աշխատանքի մի մասը։ Նրանում ի մի յեն հավաքված այն բոլորը, ինչ հրապարակել ե կառավարությունը Պուդաչովի, վերաբերյալ, և՝ այն, ինչ ինձ հավաստի յե թվացել նրա մասին խռովզ ոտարերկրյա դրոզների գործերում։ Նմանապես և առիթ եմ ունեցել ողտվերու վորոշ ձեռագրերից, ավանդություններից և կենդանի մարդկանց վկայություններից։


Պուդաչովի, գործը՝ ցարդ չկնքատված, գտնվում եր պետական սանկտոպետերութեան արխիվում ուրիշ այլ կարևոր թղթերի հետ, վորոնց յերբեմն պետական գաղանիքներ են յեղել, հիմա դարձած են պատմական նյութեր։ Թագավոր-կայսրը գահ բարձրանալուց հետո հրամայեց դրանք կարգի բերել Սույն պանձերը դուրս են բերված ներքնահարկերից, ուր մի քանի հեղեղութենք ալցելել են նրանց և հաղիվ չեն վաչնչացընել։

Ապագա պատմաբանը, վորին կթույլատրվի կնքատել Պուդաչովի գործը, հեշտությամբ կուղղի և կլրացնի իմ աշխատանքը — վորն, իհարկե, կատարյալ չե, սակայն՝ բարեխիղճ եւ Պատմական այն եջը, վորի վրա հանդիպում են Յեկատերինայի, Ռումյանցելի, յերկու Պանինների, Սուվորովի, Բիբիկովի, Մինելսոնի և Դերժավինի անունները, չպետք ե կորսվի գալիք սերունդների համար։

Ա. Պուդաչով

2-3 Նոյեմբերի 1833.

Բոլորին գրուդ.



Ա Խ Ա Զ Ի Ն Մ Ա Ս

Ինձ թվում ե, թե ամեն ահանկ պիտագորությունների և արկածների ուսույն գողին գոչ միայն միշտէ, այլ վոչ իսկ ամենա- զերազանց պատմազիբը հաղիք թե կարողանար կարդին նկարո- ւորել. մի գողի, վորի բոլոր արարքները բանականություններ և ուսումնական կարգ ու կանոններ չեն, այլ՝ հանգստություններ, զիազի- եր կամ հաջողություններ են հախված յեղեւ մնան և ընթաց Պա- րագանց (կարծում եմ) զբանց մանրամասնությունները գոչ միայն պատմեն, այլ չառ մասը հիշել է վիճակի չե, զորքանով գոյք զբանց անդի յին ունեցել գոյք թե նրա անմիջական, այլ նրա բազմաթիվ համառների լի ու լի կամքով ու խիզախությունը և զանազան զայրեամ հանկարեց:

Վանահայր Գլատին Լուսարակի

Ա Ռ Ա Ջ Ի Ը Գ Լ Ո Ւ Խ

Յայիշյան կազմիների սկզբնավորությունը — Պահարիկ ավանդություններ — Տարա- կան հրավարտությունները — Ավարտությունները Կառուց ենքի վրա: — Սահենկա Ռու- զին: — Նեշայը և Շամայը: — Գետրոս Մեծը զիտագորությունները: — Ներքին Հուղութեները: — Վաշիստուն Խոզովզի փախուստը: — Յայիշյան կազմիների բուժաց: — Նրանց խողադիցնումը:

Յայիկը՝ Յեկատերինա Ա-ի հրամանով վերանվանած Ուրալ, սկիեզին և առնում այն լեռներից, վորոնք նրան տվել են նրա այժմյան անունը. հոսում և զբանց շղթայի յերկարությամբ դեպի հարավ մինչև այն տեղ, ուր յերբեմն զրված և յեղեւ Որեն- րուրդի հիմքը և ուր հիմա գտնվում ե Որսկ բերդը. այդուհետ, կարելով դրանց քարքարու շղթան, շրջվում և դեպի արևմուտք և հոսելով ավելի քան յերկու հազար հինգ հարյուր վերսա, թափվում և կասպից ծովը. Նա վոռողում և Բաշկիրիայի մի մասը, կազմում և Որենքուրդի նաևնցի համարյա ամրող հա-

բավ-արեւելլան սահմանը. այլից նրան մռանենում են անդրվոլ-
գյան տափառաւաները. ձախից ընկած են տիտուր անապատները,
ուր թափառում են հորդաները վալրենի ցեղերի, վորոնք մեզա-
նում հայտնի յեն կիրզիդ-կալսակ անունով. Արագընքաց և նրա
հոսանքը, պղտոր ջրերը լի յեն տմեն տեսակ ձկներով. ափերը
մեծ մասամբ կավային են, ավազոտ և անտառազուրկ, սակայն
վողովովով մարգագետիներ ունեցող աեղերում նրանք հարմար
են անտառապահության համար. Գետաբերանի մոտ Յափէլ թա-
փուտ բարձր շամբեր ունի, ուր թաքնվում են վայրի խողերն
ու վագրերը.

Առաջ դետի ափերին, տասնեւինգերորդ դարում, յերեա-
ցին Դոնի կազակները, վորոնք նավարկություններ եյին ունե-
նում Խզալին ծովի վրա¹⁾: Նրանք ձմեռում եյին զետի՝ այն
ժամանակ զերես անտառով ծածկված և իրենց մեկուսացմամբ
անվատնու ափերին. գարնանը նորից ծով եյին զուրս գալիս,
ավազակություն անում մինչև խոր աշուն և ձմռան դեմ վերա-
դառնում Յափէլ. Գետի հոսանքով միշտ վեր, մի տեղից զեսի
մյուսը շարժվելով, վերջապես նրանք իրենց մշտական բնավայր
ընտրեցին Կոլովրատնոյե կոչված տեղը, այժմյան Ուրալսկից
վաթսուն վերստի վրա:

Նորաբնակների հարևան վայրերում թափառում ելին մի
քանի թաթարական ընտանիքներ, վորոնք անջատվել եյին Վու-
կե Հորդայի²⁾ ուլումներից³⁾ և ազատ-արձակ բնակավայր ելին
փնտրում նույն ալդ. Յափէլի ափերին, Սկզբում այդ յերկու ցե-
ղերը թշնամանքի մեջ ելին, սակայն վերջին ժամանակները բա-
րեկամական հարաբերությունների մեջ մտան. կազակներն սկսե-
ցին կանալք առնել թաթարական ուլումներից. Պահպանվել ե

1) Կամ՝ Խվալիսի ժող — Ըստ ուռունեց այսպիս եյին կոչում կառողից ծագը:

2) Վասկ Հորդա — մեծորական ֆեոդ. պետություն, զոր հաստատվել XIII դ. հուներին և բնում եր Ստորին Վալզոյի գույդ ափերին ընկած բնզար-
ձակ առշատաթյունները. Մաս 2 զար ուստ իշխանները առւրց եյին վերում
վ. Հ.-ին և վաստական կախման մեջ եյին նրանից: Ենորեկի ներքին կոտորչի
յերկողուսկությունների, այս զարեկ առզմական բնակալությունը հարճ մր-
ջուռու վերածվեց տառաձին խոնությունների — Ղազանի, Աստրախանի, Նո-
գայի և Նորմի, գործելով վորոնք մի թույլ ֆեպերացիա:

3) Ուլումներ — թյուրք-մոնղոլական ժագամ ունեցած մի վագրիկ ող-
զություն եր և ապրում եր այժմյան Կամչիկոյը առնաներում:

այսպիսի մի պոետիկ ավանդություն։ Կազակները՝ ամուրի ապրելու սաստիկ սովոր, միմյանց հետ ուխտ են կապած լեղել սպանել ծնվագ զավակներին, իսկ կանանց՝ լքել նոր արշավանքի դրաբս զալիս, Նրանց առամաներից մեկը, Դուզնյա անունով, առաջին զանց առավ զաժան որենքը, խնայելով իր ջանել կնոջը, և կազակները առամանի որինակով հնագանգվեցին ընտանեականության լծին, Մինչև հիմա ել ուրալյան ափերի լուսավորված և հյուրասուր ընակիչները իրենց խրախճաններին խմում են Գուզնիսա տատիկի կենացը։

Ապրելով սպասականություններով, շրջապատված թշնամի ցեղերով, կազակները զգում եյին մի ուժեղ հովանավորության անհրաժեշտությունը և Միխայիլ Ֆեոդորովիչի թագավորության որով իրենց կողմից մարդ ուղարկեցին Մոսկվա՝ թագավորին խնդրելու, վոր նու իրենց ընդունի իր բարձր ձեռքի ներքո, Կազակների բնակավայրը անտեր Յափկի ափերին կարող եր թվալ վորովես նվաճում, վորի կարևորությունն ակներեւ եր, Թագավորը փայփակեց նոր հպատակներին և մի հրովարտակ շնորհեց Յափկ գետի վերաբերյալ, ակունքներից մինչև գետաբերանը նրանց տալով և թույլատրելով բնակուրյան նամար ազատ մարդիկ նամախմբի իրենց ուղը։

Նրանց թիվը քանի զնաց մեծացագ, Նրանք շարունակեցին նավարկություններ անել Կասպից ծովի վրա, այստեղ միացան Դոնի կազակների հետ, միասին հարձակումներ ելին զործում պարսից առևտության նավերի վրա և կողովառում ծովամերձ գյողերը։ Շահը գանգավառից ցարին, Մոսկվայից խրատական թղթեր ուղարկվեցին գեղպի Յափկ և Դոն։

Կազակները նավակներով, գետեւ ավարով բեռնված, Վոլգայով գնացին Նիժնի-Նովգորոդ, այստեղից ուղևորվեցին Մոսկվա և ներկայացան արքունիքին՝ մեղայական գալով, յուրաքանչյուրն իր համար հետը տանելով կացինն ու գլխառման կոճղը։ Նրանց հրամակվեց մեկնել Լեհաստան և Ռիգայի մոտերքը, իրենց հանցանքներն այստեղ լավ ծառալությամբ քավելու համար, իսկ գեղպի Յափկ ուղարկվեցին սարելեցները¹⁾, վորոնք հետագայում մի ցեղ կազմեցին կազակների հետ։

1) Սահելցիներ — այսպէս եյին կոչվում Մոսկվայան թողովորության ծառական ընտրք զորքի զինվորները սկսած 16 դ. մինչև 18 դ. «կըրները», Ռուսական թյան մեջ հայտնի և Սահելցների բանար 1682 թ.,

Ստենկա Ռազինը այցելեց Յահկյան քնակատեղերը։ Տարեպատվածների վկայությամբ կազակները Նրան ընդունեցին վորպես թշնամու։ Այս խիզախ խռովարկուն վերցրեց Նրանց փոքրիկ քաղաքը, իսկ այստեղ գտնված սարելեցները սպանվեցին կամ ջրահեղմ յեղան։

Թաթարական տարեպատվածյան հետ համախոս ավանդությունը նույն այդ ժամանակին և վերագրում Յահկյան յերկու առամմանների՝ Նեշայի և Շամայի որշավանքները Առաջինը, կամ մավոր զորք հավաքելով, զիմեց զեպի Խիզա, հուսալով հարուստ ավար ձեռք բերել, Բախտը ժապում եր Նրան։ Դժվարին ճանապարհորդությանից հետո կազակները հասան Խիզա, Այդ ժամանակ խանը իր զորքով պատերազմի մեջ եր, Առանց վորեն խոչընդութիւնների զրավեց քաղաքը, բայց նա յերկար մնաց այստեղ և ուշ շարժվեց յետ դառնալու։ Ավարով ծանրաբեռնված կազակներին վրա հասավ կովից վերապարձող խանը Սիր-Դարիայի ափին, ջարդեց ու բնաշնչեց Նրանց, Միայն յերեք հոգի վերագարձան Յահկի, լուր տալով քաջ Նեշայի մահվան մասին։ Մի քանի տարի հետո մի ուրիշ առամման, Շամայ մականունով, գնաց Նրա հետքերով։ Բայց նա գերի ընկազ տափառանարձնակ կալմիկների ձեռքը, իսկ Նրա կազակներն առաջ անցան, ճանապարհը կորցրին, Խիզա դուրս չեկան, այլ հասան մինչև Արալյան ծովը, ուր և հարկադրված յեղան ձմեռել, Վրա հասավ սովոր Դժբախտ Թափառաշրջիկները սպանում ելին միմյանց և ուսում։ Մեծ մասը կոտորվեց, Վերջապես մնացածներն իրենց կողմից մարդ ուղարկեցին Խիզայի խանին, վորպեսզի նա ընդունի իրենց և փրկի սովաման լինելուց։ Խիզայիները յեկան Նրանց յետելից, բոլորին հավաքեցին և վորպես ստրուկներ տարան իրենց քաղաքը, Այստեղ ել Նրանց կորան։ Իսկ Շամային, մի քանի տարի հետո կալմիկները բերին յահկյան զորաբանակը՝ հավանորեն զիրիների հետ փոխանակելու համար։ Այդ ժամանակվանից ստուգ կազակների հեռագոր արշավանքների դուրս գալու սերը, Քիչ-քիչ Նրանց ընտելացան ընտանեական ու քաղաքացիական կյանքին։

Յահկյան կազակները հլու-հնագոտնդ ծառալում եյին Սոսկովյան Պրիկազի¹⁾ կարգագրով, սակայն տներում պահպանում

1) Պրիկազներ — պետական հՀայարկություններ, վորոնք դըմագործ եյին վորչական ռուսական ճյուղերը Սոսկովյան թագավորության մեջ։

եյին իրենց կառավարման նախնական լեզանակը։ Իրավունքների կատարյալ ազատությունն եր՝ ատամանները և ազագները՝ ժողովրդի կողմէց ընտրվող, ժողովրդական վորոշութերի ժամանակավոր գործադրողներն եյին։ կային շրջաններ (քրցի) կամ խորհրդակցություններ (советы), ուր յուրաքանչյուր կազակ ազատ ձայնի իրավունք ուներ և ուր հասարակական բոլոր գործերը վճռվում ելին ձայների մեծամասնությամբ։ Հայր վոչ մի դրավոր վարուում։ Պավաճանության, լերկշտության, սպանության և զողության դեպքերում հանցավորին դնում եյին պարկի մեջ յիկ նետու զուրք։ այսպիսիք են ուույն վարչության հիմանական գծերը։ Դեռևս Դոնից իրենց հետ բերած պարզ ու բոի կարգերին Յափկան կազակները միացրին և այլ կարգեր՝ տեղական, վարունք վերաբերում եյին ձկնորսությանը — Նրանց հարստության զվարվոր զբաղմունքին և իրավունքին՝ ծառայության համար վարձել պահանջման թվով կազակներ, — չափազանց բարդ և ծայրակեր ճշգրտութերով վրայացած կարգեր։

Գետրոս Մէծը միջնուներ ձեռք առավ լաիկյան կազակներին պետական վարչության ընդհանուր սիստեմի մեջ մտցնելու համար։ 1720 թվին յափկան զորքը հանձնված եր ռազմական կոլեգիալի գերատեսչությանը, կազակները զրգավեցին, այցեցին իրենց փոքրիկ քաղաքը, դիտավորություն ունենալով փախչել դեպի Կիրզիդյան տափաստանները, սակայն նրանց գաժանարար խաղողացրեց զնոպնա Զախարովը։ Նրանց մեջ վիճակագրություն կատարեցին, զինվորական ծառալություն սահմանվեց և ոռօնիկ նշանակվեց։ Թագավորն ինքը նշանակեց զրական առամանին։

Աննա Խոանովնայի և Յելիսավետա Գետրովնայի թագավորության ժամանակ կառավարությունն ուղղում եր իրավորին Պլոտի դիտավորությունները։ Դրան նպաստում եյին զորական առաման Մերկուրին և զորական ազագ Լոգինովի միջև ծագած յերկառակությունները և դրանց հետանքով կազակների բաժանումը յերկու մասի — ատամանական և լոգինովական կամ ժողովրդական։ 1740 թվին վորոշված եր վերակազմել յափկյան զորքի ներքին վարչությունը, և ներկայուելը, վորոն այն ժամանակ Որենքուրդի նահանգապետն եր, ռազմական կոլեգիային ներկայացրեց նոր կազմակերպության նախագիծը, սակայն դիտավորությունների և առաջազրանքների մեծ մասը մեաց անկատար՝ մինչև Յեկատերինա II թագուհու գահ բարձրանալը։

1762 թվից իսկ լոգինովական լաիկյան կաղակները սկսեցին զանգատվել զանազան ճնշումներից, վոր Նրանք կրում եյին դորքի մեջ կառավարության հաստատած կանցելու, ինչնակամ հարկեր դնելու և ձենորառության հնավանդ իրավունքներն ու սովորությունները խօսիտելու համար։ Այս զանգատաները քննելու նպատակով նրանց մոտ ուղարկված աստիճանավորները չկարողացան կամ չկամեցան բավարարել դրանք։ Թանիցս ապստամբվեցին կազմիները և գեներալ-մայորներ Պոտապովը և Զերեպովը (առաջինը 1766 թվին, իսկ յերկրորդը՝ 1767-ին) հարկադրված եյին դիմել զենքի ուժին և մահապատիժների սարսափին։ Յահիկ փոքրիկ քաղաքում հիմնվեց քննիչ հանձնաժողով, Նրա կազմի մեջ կային զեներալ-մայորներ Պոտապովը, Զերեպովը, Բրիմֆելդը և Դավիդովը ու գվարդիայի կապիտան Զերիչևը, Զորական ատաման Անդրեյ Բորոդինը հետացվեց։ Նրա տեղ ընտրվեց Պյոտր Տամբրովչեվը։ Կանցելիարայի անդամները դատապարտվեցին՝ բացի յետ պահած զրամաներից, նաև կալից տույժ վճարել զորքին, սակայն նրանք կարողացան խուսափել զատափնիուր կատարելուց, կազմիները չեյին կորցնում իրենց հույսերը, Նրանք փորձեցին իրեն իսկ թագուհուն անդեկացնել իրենց արդարացի զանգատները։ Սակայն նրանց ուղարկած մարդկանց ռազմական կոլեգիալի նախագահն կուս Զերնիշովի, Հրամանով Գետերբուրգում գաղանի կերպով բանեցին, շղթայակապ արին և պատժեցին վորպես խռովարարների։ Նույն միջոցին հրամայված եր մի քանի հարյուր կազմիներ ծառայության կարգել Նղղարում։ Տեղական իշխանությունն ողտվեց և առևյն գեղագով, վորպեսզի նոր ճնշումներով վրեժինդիք լինի ժողովրդից՝ Նրա ընդդիմազրության համար։ Իմացան, վոր կառավարությունը դիտավորություն ուներ կազմիներից հուսարական հեծելագաշտեր կազմել և վոր արդեն հրամայված ե ամերիկ նրանց մորուքները։ Գեներալ-մայոր Տրատերներեղը, վորն այդ նպատակով ուղարկված եր Յափիկ փոքրիկ քաղաքը, կազմիները հուզվեցին։ Վերջապես, 1771 թվին խռովությունն լերհան յեկավ իր բովանդակ ուժով։

Մի գեպը, վոչ պակաս կարենոր, առիթ լեզավ զրան։ Վոլոգայի և Յափիկի միջն, Աստրախանի և Սարատովի անծայրածիր տափառատաների վրա թափառում եյին խաղաղասեր կուլմիկները, վորոնք տասնութերորդ դարի սկզբում Զինաստանի սահ-

մաններից լեկել ելին սպիտակ ցարի հովանավորության տակ։ Այդ ժամանակից նրանք հավատարմությամբ ծառալում ելին Ռուսաստանին, պաշտպանելով նրա հարազալին սահմանները։ Ռուս գավառակապեաները, ոգտվելով նրանց միամտությունից և վարչության կենտրոնից հեռու գտնվելուց, սկսեցին հարստահարել նրանց։ Սույն խաղաղ ու բարի ժողովրդի գանգաները շելին համարմ բարձրագույն իշխանությանը։ Կորցնելով իրենց համբերությունը, նրանք վճռեցին թողնել Ռուսաստանը և գաղտնի բանակցություններ վարեցին շինուան կառավարության հետ նրանց համար դժվար շեր առանց կասկածներ հարուցելու քոչելով գալհասնել մինչև Յափկի ափը։ Յեզ հանկարծ նրանց՝ թիւվ լերեսում հազար կիրիտաներն անցան գետի մլուս կողմը և կիրիտան տափառաններով ձգվեցին դեպի իրենց նախկին հալբենիքի սահմանները։ Կառավարությունը փութաց արգելել անսպասելի փախուստը, Յափկյան զորքին հրամարվեց դուրս գալ հետապնդելու, սակայն կազակները (բացի շատ սահմանի համայնքներից) չլսեցին և բացե ի բաց հրաժարվեցին ամեն տեսակ ծառայությունից։

Խովությունը դադարեցնելու համար այսաեղի իշխանության պետերը դիմեցին խոտագուն միջոցների, բայց պատիժներն ալևս շելին կարող խօսադեցնել դաժանացած մարդկանց։ 1771 թվի հունվարի 13-ին նրանք հավաքվեցին հրազարակի վրա, յեկեղեցիներից զերցըին սրբազնակերները և կազակ կիրապիչնիկովի առաջնորդությամբ զնացին գվարդիալի կապիսան Դուրնուլի մոտ, զորը քննիչ հանձնաժողովի գործերով գտնվում եր յափկյան փաքրիկ քաղաքում։ Նրանք պահանջեցին կանցելյարիսի անդամների հրաժարեցումը և չվճարած ռոճիկի հատուցումը։ Գեներալ-մայոր Տրաուբենքերգը զորքով և թնդանոթներով գուրս լեկալ նրանց դեմ, հրամայելով ցրվել, սակայն վոչ նրա հրամանները, վոչ զորական ատամանի հորդորանքները չունեցան մոչ մի ազդեցություն։ Տրաուբենքերգը հրամայեց կրակել։ կազակները հարձակվեցին թնդանոթների վրա։ Տեղի ունեցավ կափվ խոռվարարներն հաղթեցին։ Տրաուբենքերգը սպանվեց իր տան դարպասի մոտ։ Դուրնովը վերքեր ստացավ։ Տամբովցելին կախեցին, կանցելյարիսի անդամներին կալանքի տակ դրին, իսկ նրանց տեղ հաստատվեց նոր իշխանություն։



Առողջաբարները ցնծում եյին, Նրանք իրենց կողմից ընտրյալներ ուղարկեցին Պետքը բուրգ, վորպեսզի բացարձին և արդարացնեն արյունահեղ զեզքը, Նույն միջոցին նրանց խաղաղեցման համար Մոսկվալից ուղարկվեց գեներալ-մայոր Յորեյմանը մի վաշտ գրենադերներով¹⁾ ու հրետանիով։ Յորեյմանը գարնանը հասավ Որենը բուրգ, ուր սպասեց մինչև զետերի բացվելը և, հետո վերցնելով գաշտային լերկու թիթե զորախումը ու մի քանի կաղակներ, գնաց յափկան փոքրիկ քաղաքի վրա, Խոռվարաբները թվով յերեք հազար, զուրս յեկան նրա դեմ. յերկու հակառակորդ գորքերը հանդիպեցին իրար քաղաքից յոթանասուն վերստի վրա։ Հաւնիսի Յ-ին և Գ-ին անդի ունեցան տաք կոխմանը Յորեյմանը կարտելով եր ճանապարհ բացում իր համար։ Խոռվարաբները սըարշավ վերապարձան իրենց աները, վերցրին կանանց ու յերեխաներին և սկսեցին անցնել Զազան գետով, զիտավորություն ունենալով փախչել զեզի կասպից ծով։ Յորեյմանը, վոր նրանց հետեւ քաղաք եր մտել, կարողացավ սպառնալիքներով ու հորդորներով ժողովրդին պահել։ Դնացողների յետենից հետապնդում ուղարկվեց և համարյա բոլորին բռնեցին։ Որենը բուրգում հիմնադրվեց քննիչ հանձնաժողով՝ զնզապետ Ներոնովի նախագահությամբ։ Բազմաթիվ խռով վարարները ուղարկվեցին այսուհետ Բանահերում տեղ չնեց։ Նրանց անդավորեցին Հյուրատան և Դրամերի փոխանակության²⁾ խանութներում։ Նախկին կազակալին վարչությունը վերացվեց, Իշխանությունը հանձնվեց լափկյան պարեա, լինթագնդապետ Սիմոնովին։ Զորական ավագ Մարտեմիան Բորոդինին և ավագ (հասարակ) Մոստովչիկովին։ Հրամայվեց ներկա լինել նրա կանցելյարիալում։ Բունակի հեղինակները պատժեցին մտքակով։ մտու հարյուր մարդ աքսորվեց Սիրիք, մյոււներին զինվոր քեցցին (HB³⁾ բռլորը փախան)։ Խացածներին ներեցին և յերկըրդ անզամ յերդվել ավին։ Սույն խիստ և անհրաժեշտ միջոցները վե-

1) Գրենադերներ գոշտի ընտեր զինվորներն եյին, վորոնց պարտականությունն եր կոմիտաժանակ ձեռնանահակներ չորտել թշնամու վրա։ Հետազոտման այսպիս կուզում եյին ընտեր հետեւ դուրստահերը։

2) Բնագրում՝ „... по лавкам Гостиинного и Меноваго дворцов...“

3) Nota bene (լուս.) — Շատ նկատիք, աներսելու և նկատելու

ըսնաստատեցին արտաքին կարգը, սակայն անդորրությունն անհուսալի լեր: «Հայա ինչեր պիտի լինեն», — ասում ելին ներգած խռովարաբները. «Խոպթո կցնցենք Մոսկվանք: — Կաղակ-ները մինչ այդ ժամանակ դեռևս բաժանված եյին լերկու ձափի. համաձայնականներ և անհամաձայնականներ (կամ, ինչպես շատ ճիշտ թարգմանել ե սույն խոսքերը ռազմական կոլեգիան— հնագանդներ և անհնազանդներ): Դաղանի խորհրդակցությունները տեղի եյին ունենում տափաստանային ումետներում¹⁾ և հետու ընկած խռովորներում²⁾. Անեն ինչ նախազուշակում եր նոր խռովություն: Զկար առաջնորդ: Աղաջնորդը դանվեց:

1) Աւման — իշխանառուն (անդական չեղիով):

2) Խռուոր — պարտի, ոյուղով: — Խռովուազործման այն յեղանակը, յերբ ընակելի չէնքերը և վարելանողերը դանդում են միենայն հոգածառում և այդ հոգը կազմում և մշակողի (—ների) սեփականությունը:

ՅԱՐԵԿԱՐԵՎ ԳԼՈՒԽ

Պուշտավիքի հայանքելը: — Նըս փախուսաց կազմակը: — Կոժենիկովի ցուց-
մանըները: — Խեցնակոչի տառչին հաջողությունները: — Ի, եցէյան կազմակների
դավաճանութիւննը: — Բառիպնոյա բերգի առաւմը: — Նուրալի-Խան: — Ռեյն-
դորպի կորզագոռությունը: — Նիժնի-Ոզերնոյա բերգի առաւմը: — Տառի-
չեղայի առաւմը: — Խորեգակցություն Ռյենքուրգում: — Զերնոսեչնոսկոյա
բերգի առաւմը: — Պուղալովը Մակմարկում: —

Սույն խառնակ ժամանակ, կազմակների մեջ անիցտուն
թրե եր գալիս մի անհայտ շրջմոլիկ, վորովես գործավոր վարձ-
վելով մերթ այս, մերթ այն անսատիրոջ մոտ, և ձեռք զարկե-
լով ամեն տեսակ արհեստի: Նա ականատես յեղավ խոռվության
խազադիցմանը և նրա հեղինակների մահապատժին, մի առ ժա-
մանակ հեռացավ դեպի Խրզիզի մենաստանները. այնաեղից
1772 թիվ վերջին ուղարկվեց Յաիցկի փոքրիկ քաղաքը ձուկ
զնելու համար, ուր և իշխանել եր Դենիս Պյանով կազմակի տանը:
Նա աշքի լեր ընկնում իր ճառերի հանդիպնությամբ, վատարա-
նում եր իշխանությունը և կազմակներին նախապատրաստում
փախչելու դեպի տաճկական սուլթանի մարզերը. նա հավատաց-
նում եր, վոր Դոնի կազմակները չեն հապաղի հետեւ իրենց,
վոր նա սահմանագլխում պատրաստ ունի լերկու հարլուք հա-
զար ուրբի դրամ և յոթանասուն հազար ուրբլու ապրանք և մի
ինչ-վոր փաշա՝ հենց վոր կազմակները դան իր մոտ՝ պետք և
նրանց տա մինչև հինգ միլիոն. առ այժմ նա յուրաքանչյուրին
խոստացավ ամիսը տանաներկու ուրբի ունիկի: Բացի դրանից
նա, ասում եր, վորովես թե յարկյան կազմակների զեմ Մոսկվա-
յից գալիս են յերկու գունդ և վոր ծննդրան կամ մէրառության

որերին անպալման բռնութ կը ինիք Հնագանդներից վամանք ուղղեցին բռնել նրան և ներկալացնել վորպես խռովարկու, սակայն նա թագնվեց Դենիս Պանովի հետ և բռնվեց Մալիկովիկա գյուղում (վոր հիմա Վոլոսկ և կոչվում) իր հետ մի ճանապարհով զնացող գյուղացու ցուցմունքով Սուևն շրջմոլիկը Յնձնյան Պուգաչովն եր, Դոնի կազակ և ազանդավոր, վորը կեղծ անցագրով յեկել եր Լինաստանի սահմանի այն կողմից, որիտավորություն ունենալով ընակություն հաստատել Խրոհիդ գետի ափին, այնտեղի ազանդավորների մեջ։ Պահակների հսկողության տակ նա ուղարկվեց Սիմբիրսկ, իսկ այստեղից՝ Ղազան. և ինչպես ամեն ինչ, վոր յափկյան զորքի գործերի վերաբերյալ կարող եր կարևոր թվական այն ժամանակվա հանգամանքներում, ուստի Որենքուրդի նահանգապետն անհրաժեշտ համարեց այդ ժաման տեղեկացնել պետական ռազմական կոլեգիային իր 1773 թվի հունվարի 18 զեկուցագրով։

Յափկյան խռովարարներն այն ժամանակ հաճախ եյին յերեան գալիս և Ղազանի իշխանությունը մեծ ուշադրություն չդարձրեց ուղարկված հանցագործի վրա։ Պուգաչովը բանտում պահվում եր մյուս բանտարկացներից վոչ խիստ։ Մինչդեռ նրա համախուները քնած չեյին։ Մի անգամ նա բերդական լերկու զինվորների հսկողությամբ շրջում եր քաղաքում՝ վոզորմություն հավաքելով։ Զամոչնայա Ռեզուտկալի մոտ (այսպես եր կոչվում Ղազանի զլիսավոր փողոցներից մեկը) կանգնած եր յեռածի մի սայլակ։ Պուգաչովը մոտեցավ դրան, հանկարծ հրեց իրեն ուղեկցող զինվորներից մեկին։ Մյուսն ոզնեց կողմացոր կալանավորին նստել կիրիտկան և նրա հետ միասին սրաբշավ փախավ քաղաքից։ Դու պատահեց 1773 թվի հունիսի 19-ին։ Յերեք որ հետո Ղազանում ստացվել եր դատարանի վճիռը՝ հաստաված Պետերբուրգում, ըստ վորի Պուգաչովը դատապարտաված եր մօրտականարման և Պելիմ աքսորվելու՝ տաժանակիր աշխատանքների։

Պուգաչովը հայտնվեց պաշտոնաթող կազակ Դանիլ Շելույյակովի խռովարներում։ վորպես գործավոր առաջ նա ապրել եր այստեղ և ուր այդ ժամանակ տեղի ունելին չարագործների խորհրդակցությունները։

Սկզբում պատրաստվում եյին դեպի Տաճկաստան փախչելու, այդ միտքը վաղուց ի վեր ընդհանուր եր բոլոր դժգոհ կազակների համար։ Ղազանի լե, վոր Աննա Խոաննովնալի գահակա-

լության որով Խզնատիք Նեկրասովը կարողացավ այն ի հատար ածել և իր հետ բազմաթիվ կազմեները¹⁾ տարավ Դռնից։ Նրանց հետնորդները մինչև այսոր ել ապրում են տաճկական մարդերում, իրենց համար խորը հալբենիքում պահպանելով նախկին հալբենիքի հավատը, լեզուն ու սովորությունները։ Վերջին տաճկական պատերազմի ժամանակ նրանց կատաղորեն կովում ելին մեր դեմ։ Նրանց մի մասը ներկայացավ կայսր Նիկոլային, վորը զապորոժյան մի նավակով արդեն անցել եր Դանուրը։ Ինչպես և Սեյխ Թագած մասը, նրանց մեղայական բերին իրենց հայրերի համար և վերապարձան իրենց որինական թագավորի տիրապետության տակ։

Սակայն լաիկյան գավաղիքները չափից դուրս կապված եյին իրենց հարուստ, հարազատ ավերին։ Փոխանակ փախչելու, նրանք նոր խոռվություն սկսեցին։ Ինքնակոչությունը նրանց թվաց վորապես մի հուսալի զավանակ։ Այս բանի համար պետք եր սոսկ մի հանդուզն ու վճռական յեկվոր, վորը դեռ անհայտ եր ժողովրդին։ Նրանց ընտրությունն ընկազ Պուգաչովի վրա։ Նրանց համար գմբվար չեր համոզել սրան։ Նրանք անհապաղ սկսեցին համախռներ հավաքել։

Դազանի կոնզավորի փախուստի մասին ռազմական կոլեգիան հայսնեց այն բալոր տեղերը, ուր ըստ յենթադրությունների նա կարող եր թաքնվել։ Շուտով յենթագնդապետ Միմոնովն իմացավավ, վոր փախուստականին տեսել և Յափիկ փոքրիկ քաղաքի մոտեերքը գտնվող խուսարուներում։ Պուգաչովին բռնելու համար զորախմբեր ուղարկվեցին, սակայն գրանում նրանք հաջողություն չունեցան։ Պուգաչովը և նրա գլխավոր համախռները փնտրվելուց փրկվում ելին տեղից աեղ անցնելով և ժամ առ ժամ բազմապատկելով իրենց հրոսակումը։ Նույն միջոցին արտասովոր լուրեր տարածվեցին... Շատ կազմակեր կալանքի տակ առնվեցին Բանեցին Միխայիլ Կոժենչիկովին, տարան պարբեսալին կանցելյարիս և տանջելով նրանից կորզեցին հետևյալ կարևոր ցուցմունքները։ սեպտեմբերի սկզբին նա իր խուստրումն եր գտնվում, յերբ նրա մոտ յեկավ իվան Զարուբինը և

1) Նեկրասովցիներ — Դանի կազմակերի զորախումը, վոր իր առածան Նեկրոսոյի առջնորդությամբ մասնակցել և Մազենոյի համայնք Բուլավիչի պաշտամքությանը ընդգրե Պյատր Լ-ի և պարտաւթյուններ հետ նախ անցել կուրան և աղա Տաճկաստան — Դոբրուշա։

(Մահոք. «Նիկոլայի վիորից»)

զարդեն զազանիք հայտնեց, վոր մի մեծանուն անձնավորություն գտնվում և իրենց կողմերում Նա համոզում եր կոժեկվնիկովին՝ նրան թաքցնել իր խուսորում, կոժեկվնիկովը համաձայնեց, Զարուրինը մեկնեց և հենց նույն գիշերը լուսաբացից առաջ վերադարձավ Տիմոֆեյ Մյասնիկովի և մի անհայտ մարդու հետ, բոլոր յերեքն եւ ձիով. Անծանոթը միշտհասակ եր, լայնաթիկունք ու նիհար: Նա հազար ուներ ուղարի բրդից գործած արմակ, գլխին՝ կալմէիկական բաց կապույտ գլխարկ և զինված եր հրացանով: Զարուրինը և Մյասնիկովը գնացին քաղաք՝ ժողովրդին ազդարարելու նաևար, իսկ անծանոթը Պալով կոժեկվնիկովի մոտ, հայտաբարեց նրան, վոր ինքը կայսր Պյոտր III-ն ե, վոր իր մասին տարածված լուրերը սուտ են յեղեւ վոր նապահակային սպայի ոգուութլամբ փախել ե նիեվ, ուր թաքնվել և մոտ մի տարի, վոր հետո յեղեւ ե Ցարեզրադում և գաղտնի կերպով գտնվել և ուստական զորքի մեջ վերջին տաճկական պատերազմի ժամանակ. վոր այնտեղից նա հայտնվել ե Դոնում և հետո բռնված ե յեղեւ Ցարեցինում, սակայն շուտով ազատվել ե իրեն հավատարիմ կազակների ձեռքով. վոր անցյալ տարի նա գտնվելիս ե յեղեւ Իրգիզում և Յափլան փոքրիկ քաղաքում, ուր նորից ե բռնվել և տարվել Ղաղան. վոր մի անհայտ վաճառականի կողմից յոթհարյուր ուուրլով կաշառված ժամապահը նորից բաց և թողել իրեն. վոր դրանից հետո նա մոտեցած ե յեղեւ Յափլան փոքրիկ քաղաքին, սակայն մի կնոջ միջոցով իմանալով այն խստութլան մտախին, վորը հիմա պահանջվում ե և քննում են անցագրերը, վերագրածել և Սիրքանի ճանապարհը, վորով նա թափառել ե մի առ ժամանակ, մինչեւ վոր Տալովինան ուժեաից նրան առել և կոժեկվնիկովի մոտ են բերել Զարուրինն ու Մյասնիկովը. Այս անհեթեթ պատմությունն անելով, ինքնակոչը սկսել ե բացատրել իր դիտավորությունները, Նա մտազիր եր իր դիմքը բանալ կազակների զորքը ԱԼԱԲՐԵ-ի (աշխանային ձկնորսության) զուրս գալուց հետո— կայազորի ընդդիմադրությունից և զուրտ արյօնանեղությունից խուսափելու համար, իսկ աշխանավորախին նա ուզում եր հալանվել կազակների մեջ, առամանին կապուտել, ուղիղ գնալ Յափլան փոքրիկ քաղաքի վրա, առնել այն և բոլոր ճանապարհներին ուղեկալներ դնել, վորպեսզի ժամանակից շուտ իր մասին վոշ մի աեղ լուր չգնա, Անհաջողության դեպքում սակայն նա մտազիր եր ընկել Ռուս, ամբողջ լերկիրը գրավել իր կողմը, ամե-

Նուրենք նոր դատավորներ դնել (քանի վոր այժմյանների գործերում, նրա ասելով, ինքը շատ անարդարացիություն և նկատել) և թագավորի գահը բարձրացնել մեծ իշխանին: Խաչ չես, տառամ եր նա, այլեւս չեմ ուզում թագավորել: Կոժեմիկովի խուտորում Պուգաչովը մեացել և յերեք որ. Զարուրինը և Մյասնիկովը յեկել են նրա հետեւց և տարել նրան Ռւսիխնա Ռոսսաշ, ուր և նա մտադիր եր թաքնվել մինչև աշխանալին ձկնորսություն. Կոժեմիկովը, Կոնովալովը և Կոչուրովը ուղեկցել են նրան:

Կոժեմիկովին և նրա ցուցմունքով զործին մտանակից կազմակներին կալանավորելը արագացրեց դեպքերի ընթացքը: Մեստեմբարի 18-ին Պուգաչովը Բուլորինյան առաջապահ պոստից մոտեցավ Յափկյան փոքրիկ քաղաքին յերեք հարյուր մարդուց քաղկացած ամբոխով և կանգ առավ քաղաքից յերեք վերստի վրա, Զաղան գետի այն կողմը:

Քաղաքը խլրում ընկավ: Նրանից քիչ ժամանակ առաջ խաղաղեցված բնակիչներն սկսեցին անցնել նոր խովարարների կողմը: Միմոնովը Պուգաչովի դեմ ուղարկեց հինգ հարյուր կազմակ, հետները զորագիր դնելով հետեւսկազոր և յերկու թնդանոթ: Ենրկու հարյուր կազմակներ կապիտան Կոխլովի հրամանաւարությամբ ուղարկվեցին առաջ, Նրանց դեմ դուրս լեկավ մի ձիավոր կազմակ, բարձր պահելով ինքնակոչի վրդովիչ նամակը: Կազմակները պահանջեցին, վոր նամակը կարդացվի իրենց, Կոխլովն ընդդիմացավ դրան: Խովությունն ծագեց և զորախմբի կեսը տեղն ու տեղն անցավ ինքնակոչի կողմը և իր լեռներց քարչ սվեց հիսուն հավատարիմ կազմակների, Նրանց ձիերի սանձերը պինդ բռնած: Տեսնելով այս դավանանությունը իր զորախմբում, նառամովը վերագրձավ քաղաք: Բռնված կազմակներին առան Պուգաչովի մոտ ու Նրանցից առանեմենք հոգու, Պուգաչովի հրամանով կախեցին: Նրա սույն առաջին զոհերն ելին՝ հարյուրապեսներ՝ Վիտոշնով, Զերտորով, Ռայինով և Կոնավարով: Հիսուսպետներ՝ Ռուժենիկով, Տոլստով, Պողյաչևի և Կոլզակով: շարքայիններ՝ Սիրուրովին, Լարզյանյեվ ու Զուկալին:

Մյուս որն Պուգաչովը մոտեցավ քաղաքին, սակայն տեսնելով, վոր իր դեմ զորք և դուրս գալիս, սկսեց նահանջել, տափաստանի վրա ցըելով իր հրոսախումբը: Միմոնովը չհետապնդից Նրան, քանի վոր չեր ուղում կազմակներ կարգել այդ նպատակի:

համար, վախենալով նրանց դավաճանությունից, իսկ հետևակազմորու չեր համարձակվում հեռացնել քաղաքից, վորի ընակիչները պատրաստ եյին բունա սկսելու Ամեն ինչի մասին նա տեղեկացրեց Որենբուրգի նահանգապետին՝ զեներալ-պորուչիկ Ռենադորպին, նրանից թեթև զորք պահանջելով Պուլազովին հետապնդելու համար: Սակայն ուղիղ հաղորդակցությունը Որենբուրգի հետ արդեն կտրված եր և Միմոնովի տեղեկագիրը նահանգապետին հասավ վոչ շատ, քան մի շաբաթից:

Նոր խռովարարներով բազմապատկած հրասախմբով Պուլազովը դիմեց ուղիղ գեպի Խլեցկ փոքրիկ քաղաքը և այնտեղի իշխանության պետ առաման Պորտովիլին հրաման ուղարկեց— իրեն դիմավորելու դուրս գալ և միանալ իրեն: Նա կազակներին խոստացավ շնորհել խաչ ու մորուք (Խլեցկի, ինչպես և յարիկյան կազակները բոլորն ել հնագավաններ եյին), գետեր ու մարզագետիններ, զրամ և պարեն, արճին ու վառող և մշանջնական ազատություն, սպառնալով վրեժինդրություն՝ անհնարդանդության դեպքում: Հավատարիմ իր պարտականությանը, առամանը մտածեց դիմադրություն ցույց տալ բայց կազակները կապեցին նրան ու զանգերի դողանջով և աղ ու հացով ընդունեցին Պուլազովին: Վերջինու կախեց առամանին, յերեք որ տոնեց իր հաղթությունը և հետև առնելով Խլեցկի բոլոր կազակներին և քաղաքի թնդանոթները, գնաց Ռասսիպնայս բերդի վրա:

Այդ յերկրում շինված բերդերը վոչ այլ ինչ եյին, բայց յեթե զգացեր, շրջապատված հյուսացանկով կամ փալոյա ցցապատերով: Մի քանի ծեր զինվորներ և տեղացի կազակներ լերկու կամ յերեք թնդանոթների պաշտպանության տակ ապահով ելին Որենբուրգի նահանջի և նրա սահմանների մոտ տափառատաների վրա ցրված վայրի ցեղերի նետերից ու նիզակներից: Սեպտեմբերի 24-ին Պուլազովը հարձակվեց Ռասսիպնայս բերդի վրա, կազակներն ալսածել ել վավաճանեցին, Բերդը գրավվեց: Պարեստին, մայոր Վելովսկուն, մի քանի սպաների և մի քահանայի կախեցին, իսկ կայազորի վաշտը և հարյուր հիսուն կաղակ միացան խռովարարներին:

Ինքնակոչի համբավն արագ տարածվում եր: Դեռ ևս Բուլորիների առաջապահ պոստից Պուլազովը զրում եր Կիրզիդշահակի խանին, իրեն անհաննելով թաղավոր Պատր III և պահանջելով նրա վորդուն իր մոտ՝ վորպես պատանդ, ու հարյուր

մարդուց բաղկացած ոժանդակ զորք։ Նուրալի-խանը Յախշկի փոքրիկ քաղաքին մոտեցավ տեղական իշխանության հետ բառակցելու պատրվակով, վորին նաև առաջարկեց իր ձառայությունները։ Նրան չսորհակալություն հայտնեցին և պատասխանեցին, վոր հույս ունեն խռովարարների հախիցը գալ առանց նրա ոգնության։ Խնդրակոչի հայտնվելու առաջին տեղեկության հետ խանը Որենքուրդի նահանգապետին ուղարկեց նրա թաթարերին զրած առաջին նամակը։ «Մենք, տափաստաններում ազրող մարդիկ, — գրում եր Նուրալին նահանգապետին, — չգիտենք՝ և այս մարդը, վոր ձին նատած չըջազայում և զետափի յերկանքով։ Խարերմ յե արզյոք, թէ՝ խկական թագավորը Մեր կողմից ուղարկված սուրբանդակը վերադարձավ, հայտնելով, վոր չկարողացավ այդ իմանալ և վոր այդ մարդու մորուքը շեկ եւ։ Ընդ ամին, ովտվելով հանգամանքներից, խանը նահանգապետից պահանջում եր վերադարձնել ամանաթները, քչված անասունները և իրեն հանձնել հորդայից փախած ստրուկներին, Ռեյնագորպը շատապեց պատասխանել, վոր կայսր Պյոտր III-ի վախճանքելը ամրող աշխարհին և հալանի, վոր ինքը թագավորին տեսել և զագայի մեջ և համբուրել նրա մեռած ձեռքը և հորդորեց խանին՝ ինքնակոչի դեպի կիրագիզան տափաստանները փախչելու դեպքում նրան հանձնել կառավարության ձեռքը, դրա փոխարեն խոստանալով թագուհու վողորմածությունը։ Խանի խնդիրները կատարվեցին։ Մինչդեռ Նուրալին բարեկամական հարաբերությունների մեջ մտավ ինքնակոչի հետ, չգաղարելով հավատացնել Ռեյնագորպին իր՝ դեպի կալսորուհին ունեցած ջերմեռանդության մեջ, իսկ կիրագիզներն սկսեցին պատրաստվել առաջակությունների։

Խանի տեղեկությունից անմիջապես հետո Որենքուրդում ստացվեց Յախշկի պարետի տեղեկագիրը, ուղարկված Սամարակի վրալով։ Ապա շուտով ստացվեց և վելովսկու տեղեկագիրը։ Իլեցէ փոքրիկ քաղաքի առման մասին։ Ռեյնագորպը շտապեց միջոցներ ձեռք առնել ծավալվող չարիքը գաղարեցնելու համար, Նա հրամանագրեց ըրիգուդիր բարոն Բիլովին դուրս գալ Որենքուրդից չորս հարյուր հետեւակ զինվորներով և այրուձիով ու վեց զաշտային թնդանոթներով և շարժվել դեպի Յախշկի փոքրիկ քաղաքը, ճանապարհին մարդիկ հավաքելով առաջապահ պատարերից ու բերդերից։ Վերիմնե-Ռուբենայա շրջանի ըրիգագիր բարոն կորֆին հարմայեց վորքան կարելի յե շտապով զնալ դե-

ովի Որենքուրդը՝ յենթազնդապետ Սիմոնովին՝ մալոր Նառումովին՝ դաշտալին զորախմբով և կազմակեներով ուղարկել Բիլովին միանալու համար. Ստավրոպոլի կանցելյարիային¹⁾ հրամալված եր Սիմոնովի մոտ ուղարկել էինդ հարյուր զինված կալմիկներ, իսկ մոտերքում ազրող բաշկիրներին և թաթարներին՝ վորքան-կարելի յի ջաւա հավաքվել և հազար մարդկանցով դիմավորել Նառումովին. Այս կարգադրություններից վոչ մեկը չկատարվեց. Բիլովը զբավեց Տատիշչևա բերդը և այս և ուղում եր շարժվել դեպի Ռուբենայա, սակայն ալզանեղից տասնեւնինք վերստի վրա դիշերը թնդանոթալին զարկեր բանով նահանջեց, յենթազքիլով, վոր Պուգաչովն արդին զբավել և բերդը. Ռեյնսդորֆը յիշելուրդ անգամ հրամայեց նրան փութառ խոռվարաններին ընկճելու. Բիլովը չլսեց և մաց Տատիշչևայի մեջ, Կորֆը արշավանքից հրաժարվում եր գանձան պատրվակներ բանելով, չինդ հարյուր զինված կալմիկների փոխարեն լերեք հարյուրն ել շնավագվեց, նրանք ել ճանապարհից փախան թաշկիրները և թաթարները շեյին լուսմ հրահանգները. Իսկ մալոր Նառումովը և զորական ավագ Բրուգինը գուրս գալով Յահկյան փոքրիկ քաղաքից, հեռվից գնում եյին Պուգաչովի հետքերով և հոկտեմբերի 3-ին Որենքուրդ մտան տափաստանի կողմից՝ թշնամուն չտեսած:

Շասսիպնայալից Պուգաչովը գնաց Նիժնե-Ռուբենայա բերդ-դի վրա, ճանապարհին նա հանդիպեց կապիտան Սուլիմին, վորին Նիժնե-Ռուբենու պարետ մայոր Խարլովը ուղարկել եր Բելովսկուն ովնության. Պուգաչովը նրան կախազան հանեց և վաշաը միացավ խոռվարաններին. Տեղեկանալով Պուգաչովի մոտենալու մասին, Խարլովը Տատիշչևս ուղարկեց իր ջանել կնոջ՝ այնտեղի պարետ Յելազինի աղջկան, իսկ ինքը պատրաստվեց զիմադրելու. Կազմակեները դավանանեցին նրան և անցան Պուգաչովի կողմը. Խարլովը մաց սակավաթիվ զառամլաը զինվորների հետ. Սեպտեմբերի՝ լույս 26-ի գիշերը, նրա ինքին փչեց զինվորներին սիրտ տալու համար կրակել իր լերկու թնդանոթներից և հենց այս դժբախտ զարկերն եյին, վոր կանգնեցրին նրան ովնության գնացող Բիլովին. Առավոտյան Պուգաչովը լերեաց իր զորքի առջևից, նա ձիռվ գնում եր իր զորքի

1) Ստավրոպոլի կանցելյարիան վարում եր Որենքուրդի Նառումովու ընակեցը մեկաված կալմիկների գործերը. Մահոք. Հաղինակի.

առջնից՝ «Զդույշ», թագավորը, —առաց նրան մի ծեր կազմել և թնդանոթը չի հարցնում, թե ում և սպանում: — «Դու, ձեր մարդ, —պատասխանեց ինքնակոչը, —միթե թնդանոթները թագավորների համար են ձուլվում: — Խարլովը մի զինվորից մյուսն եր վաղում և հրամայում կրակել: Վոչ-վոք չլսեց նրան: Նա ճանկեց պատրուզզը, կրակեց մի թնդանոթից և վրա ընկավ մյուսին: Նույն այդ ժամանակ խռովարարները գրավեցին բերդը, հարձակվեցին նրա միակ պաշտպանի վրա և վերքեր հասցրին նրան: Կիսամեռ դրության մեջ նա մտածեց փըրկանցով ազատվել և նրանց տարավ գեղի այն խրճիթը, ուր իր ունեցվածքն եր թաքցված: Այնինչ, բերդի հետևում արդին դըքել ելին կախազանը: Նրա առջև նստած եր Պուգաչովը, ընդունելով բնակիչների և կայազորի լերդումը: Նրա մոտ տարան վերցերից խելացնոր և այրունաքամզող Խարլովին: Նիզակի հարցածով դուրս ընկած նրա աչքը կախվել եր այտի վրա: Պուգաչովը հրամայեց կախազան բարձրացնել նրան և նրա հետ, Ֆիքներ և Կարալերով պրապորչիներին, մի զրագրի և թաթար Բիկրալին: Կայազորն սկսեց ինզրել իր բարի պարեսի համար, սակայն յաիկյան կազակները՝ խռովության պարագլուխները, անողոք ելին: Նոհատակիներից վոչ մենքը փոքրողություն ցուց չավեց: Մահմեդական Բիկրայը, բարձրանալով սանդուխիքի վրա խաչ հանեց և իր վիզն անցկացրեց պարանի ողակը: Մյուս որը Պուգաչովը առաջ շարժվեց և գնաց Տատիշչևալի վրա:

Այս բերդի պետը զնդապետ Յելազինն եր, Կայազորը շատացել եր Բիկրի զորախմբով, վորը այդ բերդում իր ապահովությունն եր փնտաել: Սեպահմերների 27-ին Պուգաչովը լերեցաց բերդը շրջապատղ բարձրունքների վրա: Բոլոր բնակիչները տեսան, թե նա ինչպես այսուել շարեց իր թնդանոթները և ինքն ուղղեց դրանք գեղի բերդ: Խռովարարները, ձիերը մոտ քշեցին պարխազներին, հոգուրելով կայազորին—չլսել բայամերին¹⁾ և կամավոր կերպով անձնատուր լինել: Նրանց պատասխանեցին կրակոցներով: Զիավորները հետ քաշվեցին, Անողուտ հրամայությունը շարունակվեց կեսորից մինչև յերեկո, այդ ժամանակ բերդի մոտ գտնվող խոտի գեղերը բռնկվեցին, վոր վառել ելին պաշարողները: Հրդեն արագությամբ հասավ փայտա ամրաթյուններին: Զինվորները նետվեցին կրակը հանգնելու Պու-

1) Եօրք—իուր ազնվական էին Ռուսաստանու: Մ. թ.

գաշոմն ոգտվելով իրարանցումից հարձակվեց մյուս կողմից, Բերդական կազմակներն անձնատուր լեզան նրան վերավորված ներազինը և ինքը Բիլովը կատաղի դիմադրություն ցույց տվին: Վերջապես խոռվարարները ներս խռամեցին ծխացող փրատակների միջակ, Պետերը բռնվնցին Բիլովի գլուխ կարեցին: Զաղ Յելազինի կաշին քերթեցին: Հարպը հանեցին շարագործները և քեցին իրենց գոտեքերին: Նրա կնոջը թրամեցին: Նրանց աղջիկը՝ նախորդակին այրիացած եարլովան՝ բերվեց Պուգաչովի մոտ, վոր կարգադրել եր մահապատճի յենթարկել իր ծնողներին: Պուգաչովն ապշած մնաց նրա գեղեցկությունից և դժբախտին պահեց իր մոտ վարպետ հարճ, ի սեր նրա խնայելով վերջինիս լոթնամյա յեղբորը: Մայոր Վելովսկու կինը, վոր փախէլ եր Ռասոխանալայից, նույնպես գտնվում եր Տատիշչեվայրերում: Նրան խեղդեցին: Բոլոր սպաներին կախեցին: Մի քանի զինվորների ու բաշկիրների գուրս բերին դաշտը և կարսեչով սպանեցին: Մյուսների մազերը խռացեցին կազակավարի և միացրին խռվարարներին: Յերեսուն թնդանոթ ընկազ հաղթողի ձեռք:

Պուգաչովի հաջողութիւնների լուրերը մեկը մյուսի յետնեց հասնում ելին Որենբուրգութիւն Բերդովսկին հազիվ կարողացավ տեղեկացնել Խլեցկի Փոքրիկ քաղաքի առման մասին, իերը Խարլովը լուր տվեց Ռասոխանալայի գրավման մասին: Դրանից անմիշապես հետո Բիլովը Տատիշչեվայից հաղորդեց Նիժնի-Ռուսու առման մասին, մայոր Կրուպին Չերնոբելնուկից հայտնեց Տատիշչեվովի տակ տեղի ունեցող հրաձգության մասին: Վերջապես (սեպտեմբերի 28-ին) լերնը հարյուր թաթարներ, վորոնց բանի ուժով հավաքել և ուղարկել ելին Տատիշչելու, ճանապարհից վերադարձան, հետները տեղեկություն բերելով Բիլովի և Յելազինի վիճակի մասին: Հրդեհի արագությունից վախեցած Ռեյնուդորպը խորհուրդ գումարեց Որենբուրգի գլխավոր առափնավորներից և նրանք հաստատեցին հետեւալ միջոցառումները.

1) Սակմարա գետի վրայի բոլոր կամուրջները քանդել և փայտը թողնել ջրի հասանքով:

2) Որենը բուրգում պահվող լեռ կոնֆեղերատների 1) գենքը յալել և խստագույն հակողության տակ նրանց ուղարկել Տրոից-կայս բնորդը:

3) Զենք ունեցող տարաստիճանավորներին տեղեր նշանակել քաղաքը պաշտպաննելու համար, նրանց դնելով որեր-պարետի՝ գեներալ մայոր Վալլենցուերին տրամադրության տակ. մէռաները պետք եղատրաստ լինեն հրդեհի դեպքում և գանձեն մաքսալին դիրքեկտոր Որուխովի իշխանության տակ:

4) Սեյխաւան Բաթարներին քաղաք բերել և նրանց զեկավարությունը հանձնարարել կոլեժակի խորհրդական Տիեզչովին:

5) Հրետանին հանձնել իսկական ստատուկի խորհրդական Ստարով-Միլյուկովի անորինությանը, վորը յերբեմն ծառայել եր հրետագորի մեջ:

Բացի գրանից Ռեյնսդորֆը մտածելով այլևս Որենը բուրգի ապահովության մասին, հրամայեց որեր-պարետին կարգի բերել քաղաքի ամբողջունութը և դնել պաշտպանողական վիճակի մեջ: Իսկ Պուգաչովից դեռևս չգրավված փոքրիկ բերդերի կայագործներին հրամալվեց Որենը բուրգը գալ, նախապես թողնելով կամ ջուրը զցելով ծանրություններն ու վառողքը:

Տատիչչելվոյից սեպանմերերի 29-ին, Պուգաչովը դնաց Չերնորեչնսկի վրա: Սույն բերդի մեջ մասցել ելին մի քանի ծեր զինվորներ՝ կապիտան Նեշայեվի գլխավորությամբ, վորը բռնել եր Որենը բուրգում թաղնված պարետի՝ մալոր երուզելի տեղը: Առանց զիմաշըրության նրանց անձնատուր յեղանու Պուգաչովը կախեց կապիտանին, նրա սպասավոր ճորտ աղջկագանգաւի հիման վրա:

Պուգաչովը, թողնելով Որենը բուրգն աջ կողմում, գնաց Սակմարսկ փոքրիկ քաղաքի վրա, վորի բնակիչներն անհամբեր սպասում ելին նրանու Հոկտեմբերի 1-ին թաթարական Դարձալի կոչված ոյուղից նա այստեղ զնաց մի քանի կազակների ուղեկցությամբ: Ականատեսը հետեւյալ կերպ և նկարագրում նրա ժամանումը:

«Եթերդում, ստանիցալին մի խրճիթի մոտ գորգեր ելին փոխած և դրված եր մի սեղան՝ աղ ու հացով, Տերտերը Պուգաչովին սպասում եր խաչով ու սրբոց պատկերներով: Տերը նա

1) Կոնֆեղերատներ—շյախտայի (մանը ողնչվականության) կամ նրա մի մասի պինդած միությունների (կոնֆեղերացիաների) անդամները չին չենասահում, վորսեց հրմանին նորատակներ աղն պահանություն իրավունքների ու որդանությունների դրականությանը:

Այսակող խոօսը լեռասանի անկախության շատագով կոնֆեղերատների մասին եւ Մ. Բ.

բերդ մտավ, սկսեցին զանգերը տալ. հավաքված մարդիկ գըլ-խարիները հանեցին և յերբ ինքնակոշը իշխում եր ձիուց իր յերկու կազակների ոգնությամբ, վորոնք բռնելելին նրա թևատակերից, այս ժամանակ բոլորն ընկան յերեսն ի վայր։ Նա համբուրեց խաչը, համբուրեց աղջ ու հացը և նստելով պատրաստ զրված արոռին, ասաց. վեր կացեֆ, զավակնետ։ Հետո բոլորը համբուրեցին նրա ձեռը. Պուգաչովը հարց ու Փորձ արեց քաղաքի կազակների մասին։ Նրան պատասխանեցին, վոր վոմանք ծառալության մեջ են, մյուսներին իրենց առածան Դանիիլ Դանսկոյի հետ տարել են Որենիրուրդ և վոր միայն քսան մարդ և թողնված փոստային սայրակները քերւու համար, սակայն նրանք ել կորել են։ Նա զարձավ քահանալին և սպառնազին հրամայեց նրան գանել նրանց, ասելով. որ օԵՏԵՐ ես, յեղին ուշեմն առաման. որ յեվ բոլոր բնակիները ձեր զլուխմերով իմձ պատասխանու. յեմ Արանց համար. — Հետո նա զնաց առամանի հոր մոտ, վորի տանը ճաշեր պատրաստված նրա համար. Թե վոր ես վորդիմ այսեղ լիներ, ասաց նա ծերունուն, ապա ձեր նաը կիմեր ազնիվ ու պատվածան. բայց նա աղ ու նացը մռալլիքց Ել իմչ առաման և նա, վոր իր ձեզ բաղել փախսել ե։ — Ճաշից հետո, հարքած, նա այն ե՝ հրամայեց, վոր տանաիրոջը ճահապատժի լենթարկեն, բայց նրա հետ յեկող կազակները թախանեցին խնալել. ծերունուն միայն շղթայեցին և զեշերը նստեցրին ստանիցայի խրճիթի մեջ հակողութիւն բերց իր զորախմբին։ Կազակներին հարցրին նրան. վերքան կհրամայի հետները մթերք վերցնելու վեցենք, պատասխանեց նա, մի փոքրիկ կտօն նաց. դուք իմձ միայն մինչեվ Որենությունը կուղեցիք։ — Սույն այդ ժամանակ Որենիրուրդի նահանգապետի ուղարկած բաշկիրները շրջապատեցին քաղաքը. Պուգաչովը զուրս յեկավ նրանց զեմ և առանց կովի բոլորին առավ իր զորքի մեջ. Սակմարի ափին նա կախեց վեց մարդ։

Սակմարա փոքրիկ քաղաքից յերեսուն վերստի վրա գըտնվում եր Գրեշխոտենսկայա բերդը. Նրա կայսզորի ամենալով մասը Բիլովը վերցրել եր Տատիշչեվայի վրա շարժվելու. ժամանակ. Սպաները և կայազորը զիմավորեցին հաղթողին. Մընակոչն ըստ իր սովորության, զինվորներին իր զորքի մեջ ընդունեց և առաջին անգամ խայտառակ վողորմածություն ցույց ավեց սպաներին։

Պուգաչովը զորանում եր. յերկու շաբաթ անցավ այն որից,

յերբ նա հալտնվեց Յափիկյան փոքրիկ քաղաքի մոտ մի ըռւռ
խռովարաբներով և արդեն ուներ մինչև յերեք հազար փոքրիկ
հետեւակ ու այրուձի և քսանից ավելի թնդանոթներ. Նա լոյն
բերդ եր գրավել կամ հանձնվել ելին նրան ժամ առ ժամ ա-
նասելի կերպով շատանում եր նրա զորքը. Նա վճռեց ոզովել
բախտից, և հոկտեմբերի 3-ին, գիշերով Սակմարսկ փոքրիկ
քաղաքի մոտ անցավ կամուրջը, վորն անվնաս եր մնացել՝
Հակառակ Ռեյնսդորֆի կարգադրության, և ձգվեց դեպի Ռեն-
բուրգ:

Յերբարդ գլուխ

Կոռովարության մեջ առաջ այսուհետքը—Որենքուրզի գրությունը
Ավազակ Ալապուղան—Պազարվէ Որենքուրզի մաս—Բերզո ավանը—Պա-
զարվէ Համայսները—Դններալ-մայոր Կառը—Նրա անհաջողությունները—
Թնդապահ Զերենիբովի մահը—Կառը լքում և իր զորքը—Բէրիկավը:

Դեռքերն Որենքուրզում վաստ ընթացք եյին ստանում:
Ժամ առ ժամ սպասում եյին յարկյան զորքի ընդհանուր խոռո-
վությանը՝ Բաշկիբները՝ բորբոքված իրենց ավագներից (վո-
րոնց Պուգաչովը պարզեւել եր բուխարացիներից խրված ուղան-
բըն ու ապրանքները) սկսացին հարձակումներ զործել սուսա-
կան գլուղերի վրա և սպասր խմբերով միանալ խոռվարաների
զորքերին։ Զինապահ կալմիկները փախչում ելին սուսական
պաստերից։ Մորդվաները, չուզաշները, չիրեմիսները գազարեցին
յենթարկվել ուսւ իշխանությանը։ Տերունական գլուղացիները
բացահայտ կերպով ցուրց եյին տալիս իրենց համախությունը
ինքնակոչին և շուտով վոչ միան Որենքուրզի, այլ և նրան
սահմանակից նաևանգները վտանգավոր տասանման մեջ ըն-
կան։

Նահանգապետաները՝ Հազանի — Ֆոն-Շրայնտը, Սիրիրի —
Զիշերինը և Աստրախանի — Կրեչետնիկովը՝ Ռելնադորպից ան-
միջնապես հետո պետական սազմական կոլեգիային տեղեկացրին
յարկյան անցքերի մասին։ Թագուհին անհանգությամբ ուշք
դարձրեց սուսակած աղետի վրա։ Այն ժամանակվա հանգա-
մանքները սասարկ նպաստում ելին անկարգություններին,
Զորքերն ամեն կողմից քաշվել եյին դեպի Տաճկաստան ¹⁾ և

1) Խոսքը ներթական ուսւուահետական պատերազմի մասին և, զար սկզբու-
վել եր գետես 1768 թ. և տվարակեց 1776-ին Թյուլուկ-Նայնարդիկ հաշությամբ,

ալեկոծվող Հեհաստան¹⁾։ Այսու միջոցառումները, վոր ձեռք ելին առնված ամբողջ Ռուսաստանում մինչ այդ ժամանակ ճարակող ժանտախտի զազարեցման համար, խաժամուժ ժողովրդի մեջ ընդհանուր դժգոհություն ելին առաջացրել։ Ռեկրուաների հավաքումը սաստկացրեց դժվարությունները։ Մի քանի վաշտերի և հսկադրոնների հրամալված եր Մոսկվայից, Պետերբուրգից, Նովգորոդից և Բախմուտից շտապի կերպով շարժվել դեպի Ղազան։ Դրանց հրամանատարությունը հանձնվեց գեներալ-մայոր Կառին, վորը Հեհաստանում աշխի յեր ընկել իշխանության խիստ առաջադրանքները անշղզ կատարելու համար։ Նա գտնվում եր Պետերբուրգում, ու կրուտներ ընդունելու գործով։ Նրան հրամայված եր իր բրիգադը հանձնել գեներալ-մայոր Նախոկինին և շտապել դեպի վտանգ սպառնացող աեղերը։ Նրան միացրին գեներալ-մայոր Թրեյմանին, վոր մի անգամ արդեն խազաղեցրել եր լաիկյան զորքը և բավ գիտեր նոր անկարգությունների թատերաբերմը։ Շրջակա նահանգների պետերին հրամալված եր իրենց կողմից անհրաժեշտ կարգադրություններն անել Հոկանեմբերի 15-ին մանիթեստով ժողովրդին հայտարարված եր ինքնակոչի յերեան գալու մասին, հորդորելով նրանով հրապուրվածներին որ առաջ ձեռք քաշել հանցավոր մոլորությունից։

Դառնանք զնոպի Որենսբուրգ

Սույն քաղաքում գտնվում եր մինչև յերեք հաղար զինվոր և մինչև լոթանասուն հրանոթ, Ալպախիսի միջոցներով կարելի յեր և պետք եր վոչնչացնել խովարարներին։ Դժբախտարար, ռազմական պետերի մեջ չկար մեկը, վոր իմանար իր գործը, չենց սկզբից վախենալով, նրանք ժամանակ տվին Պուլաչովին զորանալու և իրենց զրկեցին հարձակողական շարժումներից։ Որենքուրզն աղետալի պաշարում ունեցավ, վորի հետաքրքրական նկարագրությունը ավել և ինքը Ռեկրուագործը։

Մի քանի որ Պուլաչովի յերեան գալը անհայտ մնաց Որեն-

գործ Ռուսաստանը ստոցով մի շաբթ քաղաքներ Սև ծովի հյուսիսային մասին (Աղով, Կերճ և ոյլն), ինչպես և զգալի ռազմատուգանք։ Ս. թ

1) 1768-70 թ. թ. Հեհաստանում աեղի սևնեցան Այսիսայի (Ճանք ողջ գականության) մի մասի կոնֆեղերատների ոպատամբական անեղող շարժումները, ուղղված մի կողմից իր իսկ լենական թագավորի, մուռ կողմից Ռուսաստանի վանձագրաթաների դեմ հետեւցը յեղավ Հեհաստանի մեծ ժամանումը Ռուսաստանի, Պրուսիայի և Ավստրիայի մէջ։ Ս. թ.

բուրգի բնակիչներին, սակայն քերդերը գրավելու լուրը շուտով
տարածվեց քաղաքում, իսկ թիւովի շուտափուլթ առաջնազա-
ցումը հաստատեց այս ճիշտ լուրերը: Որենքուրզում հուզմունք
էերեաց: Կազակները սպառնալիքներ տալով արտնջում եյին,
սարսափահար բնակիչները խոսում եյին քաղաքը հահճնելու
մասին: Բռնվեց խլուման դրդիչը՝ պաշտօնաթող մի սերժանտ,
զագունի ուղարկված Պուզաչովի կողմից, Հարցաքննության ժա-
մանակ նա հայտնեց, վոր զիտավորություն ուներ սրախոզիսող
անել նահանգապետին: Որենքուրզի մերձակա զյուղերում պկսե-
ցին խոռվարարներ յերեալ: Ռեյնսդորֆը հրապարակեց Պուզա-
չովի մասին տրված հայտարարությունը, ուր պարզում եր
նրա իսկական կոչումը և նախկին հանցանքները: Դա զրված
եր մթամած ու շփոթ վաճով: Նրանում առված եր, վոր շարազ-
ծի մասին յափեյան կողմերից լուրեր են նաևնում, վոր նա այլ
դասից ե, բան վոր կա... բայց վոր նա իսկապես Դոնի կազակ
Յեմելյան Պուզաչովն ե, իր նախկին հանցանքների համար
մտրակով պատժված և լերեսին նշաններ են դրված: Սույն ցուց-
մունքն անարդարացի յեր: Ռեյնսդորֆը հավատացել ե ուրա
լուրերին և խոռվարարները հետո ցնծության մեջ եյին, նրան
բամբառանքի մեջ նախատելով:

Թվում եր, Ռեյնսդորֆի ձեռք առած բոլոր միջոցները զառ-
նում եին ի վնաս նրա: Որենքուրզի բանառում այդ ժամանակ
շղթայակաց պահպատ եր մի չարագործ, վոր հայտնի յեր Ալո-
պուշա անունով: Բան տարի նա ավագակություն եր արել այն
անդերում, յերեք անդամ աշոսորվել եր Սիրիք և յերեք անդա-
մին ել միջոց եր գտել փախչելու: Ռեյնսդորֆի խելքին փչեց
ոդապործել բանիմաց տաժանակրին՝ նրա միջոցով Պուզաչո-
վի հրոսակախումբը հորդորիչ մանիքնատներ ուղարկելով: Ալո-
պուշան յերդվեց ճշտությամբ կատարել նրա հանձնարարու-
թյունները: Նա պատվեց բանտից, ներկալացավ իրեն Պուզա-
չովին և անձամբ նրա ձեռք ավեց նահանգապետից ստացած
բոլոր թղթերը: «Դիտեմ, ախտեմ, թե այսոեղ ինչ է զրված—
սսաց անգրագետ Պուզաչովը և նրան նվիրեց կես մանեթ զրամ
և զրանից քիչ ժամանակ առաջ կախված մի կիրգիզի շորերը,
Լավ ճանաչելով այն լերկերը, ուր նա ալզպես լերկար սարսափ
եր տարածել իր սպառակություններով, Ալոպուշան դարձավ
նրան անհրաժեշտ մի մարդ: Պուզաչովը նրան գնդապետի կոշումը
ավեց և հանձնարարեց թալանել և հուզել զործարանները: Ալո-

պուշան արդարացրեց նրա վստահությունը: Նա զնաց Սակմարա զետով, խռովիլով շրջակա գլուղերը: Հայոնվեց Բուգունասակի և Սաերլիտամացկի նավակայաններում և ուրաման զործարաններում ու այստեղից Պուգաչովին ուղարկեց Բնադանոթներ: ռումբեր և վառող, իր հրոսակախումըը շատացնելով գրանցված գյուղացիներով և բաշկիրներով՝ իր ավազակությունների ընկերներով:

Հոկտեմբերի 5-ին Պուգաչովն իր ուժերով բանակ դրեց կազակական մարզակետիների վրա, Որենրուրդից հինգ վերստ հեռու: Նա իսկույն ևեթ առաջ շարժվեց ու թնդանոթալին զարկերի տակ մի մարտկոց դրեց յեկեղեցու զավթում, հնաց արվարձանի մոտ, իսկ մյուսը՝ քաղաքից գուրս զանվող նահանգապետական տանը: Նա նահանջեց՝ սաստիկ հրաձգությամբ հետ յզգած: Նույն որն ևեթ նահանգապետի հրամանով արվարձաննայրվեց, Կրակից փրկվեց միայն մի խոճիթ և Գյորգիեվսկայակոչված յեկեղեցին: Բնակիչներին տեղափոխեցին քաղաք և բոլոր վնասի համար նրանց հատուցում խոստացվեց: Ակսեցին մաքրել քաղաքը շրջապատող խրամատը և հողապատճեցը պատել գերանակալներով:

Դիշերն ամբողջ քաղաքի շրջակայքը բոցավառվեցին ձմեռվա համար մթերած խոտաղեղերը: Նահանգապետը չկարողացավ ժամանակին դրանք քաղաք կրել Հրդեհիչների զեմ (արդեն մլուս որն առավոտյան) գուրս յեկավ մալոր նառամովը, վորը հնաց նոր եր յեկել Յահկլան քաղաքից: Նա իր հետ ուներ հաղար հինգ հարլուր մարդ ձիավոր ու հետեակ: Թնդանոթներով դիմավորված՝ նա փոխ-հրաձգություն ունեցավ և նահանջեց առանց վորին հաջողության: Նրա զինվորներն ահարեկված ելին, իսկ կազակներին նա չեր վստահում:

Ծենադրովը նորից խորհուրդ գումարեց իր ուղմական և քաղաքացիական աստիճանավորներից և նրանցից գրավոր կարծիք պահանջեց: արդուք նմրից դուրս դաւ ընդդեմ չարագործի, բ՛թ քաղաքի ամբությունների պաշտպանության ներքո նոր դորքերի սպասելը Այս խորհրդին իսկական սատատսկի սովհետնիկ Սասրուց-Միլյուկովը մենակ հայտնեց մի կարծիք, վոր պատիվ և բերում զինվորականին: դուրս գալ խոօվարարների դիմ: Մուսները վախենում եյին նոր անհաջողությամբ քաղաքի ոնակիչներին վասանգավոր հուսալքման մեջ զցել և միայն մաածում

և յին պաշտպանվել; Վերջին կարծիքի հետ համաձայնվեց և
Ռեյնսդրութը:

Հոկտեմբերի 8-ին խռովարարները գուրս յեկան քաղաքից
յերեք վերսու հեռու գտնվող Մենովոյ Ճար-ը Բալանելու
Խռովարարների գեմ ուղարկած զորախումբը ցրեց նրանց, տեղն
ու տեղը սպանելով ինքու հարյուր մարդ և զերի բռնելով մին-
չև հարյուր վաթսուն հոգի, Ռեյնսդրութը, կամենալով ոգովել
այս գեղցից, վար փոքր ինչ քաջալերել եր իր զորքը, ուղում
եր հաջորդ որը գուրս գալ Պուգաչովի գեմ, սակայն բոլոր զո-
րազետերը միարերան հայտնեցին նրան, վոր զորքի վրա վոյ մի
կերպ չի կարելի վստահել. Հումալքման և վարանման մեջ ընկած
զինվորներն անսիրս ելին կովում, իսկ կազակները հենց կովի
զաշտում կարող եյին միանալ խռովարարների հետ և նրանց
զավաճանության հանանանքը կարող եր կործանարար լինել Որեն-
րութիւն համար. Ռեյնսդրութը չզիտեր ինչ աներ. Այսուամե-
նայնիվ նա կարողացավ համոզել ու ամաչեցնել իր ստորագը-
րլարներին և հոկտեմբերի 12-ին նառմովը քաղաքից նորից
գուրս բերեց իր անհուսալի զորքը.

Կոխին սկսվեց: Պուգաչովի հրետանին թվով գերազանց եր
քաղաքից գուրս բերված թնդանոթներից, Որենրութիւն կազակ-
ները, անսովոր լինելով, վախենում ելին ոռոմբերից և սեղմվում
քաղաքին՝ պատճեշի վրա դրված թնդանոթների պաշտպանու-
թան տակ քաշվելով. Նառմովի զորախումբն ամեն կողմից
շրջապատված եր բարձմաթիվ անկանոն խմբերով: Նա իր զորքը
կառուել¹⁾ դասավորեց և սկսեց նահանջել, հրաձգություն պահ-
պանելով թշնամու. հետ, Կոխիվը տեսեց չորս ժամ: Նառմովը կոր-
ցրեց հարյուր տառնյոթ մարդ սպանված, վիրավոր, կովի զաշ-
տից փախած:

Որ չեր անցնում առանց փոխ-հրաձգությունների. Խռովա-
րարները ձիավոր խմբերով շրջում եյին քաղաքի սպասարի մո-
տերքը և հարձակվում խարապանների վրա: Պուգաչովը մի քանի
անգամ իր բոլոր ուժերով մոտեցավ Որենրութիւն: Սակայն նա
զիտավորություն չուներ հարձակմամբ վերցնելու այս, «Մար-
դիկ չեմ կորցնի»—ասում եր նա Սակմարսկի կազակներին,—
«այլ խղամբ սովից կկօսութեմ», Քանիցո նա միջոցներ գտավ իր
վրդովեցուցիչ թղթերը բնակիչներին հասցնելու: Քաղաքում

1) Կարո(ՓՐ.)—քառակուսնի ձեռք Հակոսուծ զորք: Մ. Բ.

բռնեցին մի քանի չարագործների, ուղարկված ինքնակոչչի կողմէց. Նրանց յոտ զատն վառող և պատրույք:

Շուշով Որենըուրդում զգացվեց խոտի պակասութիւնը, Զորքից և բնակիչներից խլեցին լրար և աշխատանքի անընդունակ ձիերը և ուղարկվեցին մասամբ Իլեցկայա Զաշչիտայի և Վերխո-Յահցկի բերդը, մասամբ Ուֆայի զավառը՝ Սակայն, քաղաքից մի քանի վերստի վրա խռովությամբ բռնված զյուղացիներն ու թաթարները ձիերը բռնեցին, իսկ յերամակը թշող կազակներին ուղարկեցին Պուգաչովի մոտ:

Աշնանալին ցուրտը սովորականից շոււմ վրա հասավ, Հոկտեմբերի 14-ից արդեն սկսվեցին սառնամանիքները. 16-ին ձյուն յեկագի: 18-ին Պուգաչովը կրակ տալով իր բանակատեղը, բոլոր ծանրություններով հետ գնաց Յահկից գեղի Սակմարա և տեղափորվեց Բերդա ավանի մոտ, Սակմարայի ամառային ճամբի վրա, Որենըուրդից յոթ վերստ հեռու Այգտեղից նրա հեծելաշետերը չելին գաղարում քաղաքը անհանդատացնել, հարձակվել խարապանների վրա և կարագորը պահել մշտական յերկուողի մեջ:

Նորմերի 2-ին Պուգաչովը բոլոր ուժերով նորից մոտեցավ Որենըուրդին և քաղաքի շուրջն ամեն կողմից մարտկոցներ զնելով, սաստիկ կրակ տեղաց, Քաղաքի պարսպից նրան պատասխանեցին նույն կերպ: Ալդ ժամանակ նրա հետևակազմորից հազար մարդ գետի կողմից թագնվելով արվարձանի ներքնահարկերում համարյա պարսպի և գերանականների մոտ, կրակում ելին հրացաններից և սայդակներից¹): Խեցը Պուգաչովն երառացնորդում նրանց Դաշտային զորախմբի հրացանաձիգները նրանց գուրս քշեցին արվարձանից: Թիչ մնաց վոր Պուգաչովը զերի ընկները Յերեկոյան հրաձգությունը հանգարտվեց, սակայն խռովարարներն ամբողջ գիշերը հրաձգությամբ ելին պատասխանում մայր յեկեղեցու ժամացույցի զանգերին—ամեն ժամի կրակոց անելով:

Մյուս որը հրաձգությունը նորոգվեց չնայած ցրտին ու բուշ-բորանին: Խռովարարները խարույկ վառեցին յեկեղեցում, ալրեցին հրդեհված արվարձանից մնացած խրճիթը և հերթով առքանում ելին: Պուգաչովը Բեգանոթը դրեց յեկեղեցու շեմքի վրա, իսկ մյուսը հրամալեց բարձրացնել զանգերին—ամեն ժամի կրակոց անելով:

1) Սուգակ կամ սասպակ (Բաբոր. 1.)—կաղաք, Նու Նես-ազեր: Մ. թ.

Թաղաքից մի վերստի վրա գտնվում եր բարձր մի նշագակ, վոր հրետանալին վարժությունների ժամանակ ծառայում եր իրեն նպատակոնշան։ Առաջարարներն այսուեղ հաստատեցին իրենց գլխավոր մարտկոցը։ Հրամագությունն լերկուտանեք շարունակվեց ամբողջ գիշերը։ Գիշերով Պուգաչովը նահանջեց աննշան կորուստներ կրելով և մնաւ չհասցնելով պաշարվածներին։ Առավոտան կազակների պահանության տակ քաղաքից կալանավորներ ուղարկվեցին նշագակը և մըուս ամրությունները կործանելու և խրճիթը քանդելու համար։ Ծեկեղեցում, ուր խռովարարներն իրենց վիրավորներն եյին բնըում, սալհատակի վրա տեղ-տեղ յերեսում եր ընացած արյուն։ Սրբապատակերներից պոկված եյին շրջանակները, սեղանի ծածկոցները ծվեն-ծվեն ելին արել (Ծեկեղեցին ապականված եր մինչև իսկ մարդկանց ու ձիերի արտաթորություններով):

Ցուրտը սաստկանում եր, Նոյեմբերի 6-ին Պուգաչովը յակեյան կազակների հետ իր նոր բանակատեղից անցավ զեսի ավան։ Բաշկիրները, կալմիկները և գործարանալին գյուղացիք մնացին նախկին տեղում՝ իրենց կիրիտեկանների մեջ և զետնափոր տներում։ Հեծալազետները, հարձակումներն ու հրամագությունը չելին դադարում։ Որորի վրա Պուգաչովի ուժերն ավելանում եյին։ Նրա զորքը արդեն բաղկացած եր քսան և հինգ հազար հոգուց։ Կորիղը յափեյան կազակներն ելին և բերդերում գերի բռնած գյուղացիները, սակայն նրանց շուրջն անհաշիվ բազմությամբ խռնվում եյին թաթարներ, բաշկիրներ, կալմիկներ, բունտարար գյուղացիները, փախստական տաժանակիրներ և ամեն տեսակ ցրջութիւններ։ Այս բոլոր սրիկանները մի կերպ զինված ելին – վերը նիզակով, վերը ատրճանակով, վերը սպայական սուսերով։ Վոմանց բաժանել եյին ավելիններ, հազցված յերկար ձողերի ծալքերին, մյուսները կրում ելին զավարաններ։ Մեծ մասը վու մի զենք չուներ։ Զորքը բաժանված եր գնդերի, լուրաքանչյուրը կազմված հինգ հարյուր հոգուց։ Միայն յափեյան կազակներն եյին ունիկ ստանում, մնացածները բավականանում եյին թալանով։ Վաճառվում եր պետական ողին։ Ձիեր և խոռ ձեռք եյին բերում բաշկիրներից։ Փախումոր համար հայտարարված եր մահապատիժ։ Տասնապետն իր գլխով պատախանառու եր իր փախստականին համար։ Հաստատված ելին մասնավոր հեծելազետներ և պահակներ։ Պուգաչովը խստությամբ հետևում եր նրանց նշակատարությանը, ինչը ձիով ցընելով

հայում եր նրանց, հաճախ և զիշերով։ Վարժութառները (ժամավանդ Հրետանալին) տեղի եյին ունենում համարյա ամեն որ։ Ժամասացությունը կատարում եյին ամեն որ։ Մաղթան-քի ժամանակ հիշատակում եյին թագավոր կայսր Պյուր Թյուլպրո-պիշին։ Պուգաչովը ինքը աղանդավոր լինելով յերբեք չեր զնում յեկեղեցի։ Յերը նա ձին նստած անցնում եր բազարով կամ Բերդայի փողոցներով, ապա միշտ պղնձե զրամ եր շուր-առում ժողովրդին։ Դատու զատաստան կարում եր իր խրճիթի առ-ջև բազկաթոռի վրա նստած։ Նրա կողքը կանգնած եյին լինում յերկու կազակներ, մեկը զուրդը ձեռին, մյոււսը արծաթի կացինը։ Նրան մատեցողները խոնարհվում եյին մինչև զետին և յերեսնին խաչենքելով համրուրում ձեռքը, Բերդա ավանը սպանություն-ների և անառակությունների վորչ եր, Բանակատեղը լի եր սպա-ների կանանցով ու աղջիկներով, վրոնց տվել եյին ավաղակ-ներին՝ անարդելու, Մահապատիմները տեղի եյին ունենում ա-մեն որ։ Բերդայի մոտ փոսերը լիքն եյին գնդակահարված, խեղդված, քառահատված նահատակներով։ Ավաղակների հրոսա-կախմբերը դիմում եյին ամեն կողմ, հարբեցողություն անելով զյուղերում, թալանելով պետական գանձատունը և աղնվական-ների ունեցած-չունեցածը, սակայն ձեռք չտալով զյուղացիական սեփականությանը։ Համարձակները ձիերը քշում եյին մինչև Որենքուրզի գերանակալները, վոմանք զլիարկները նշղակի ծայ-րին հազցնելով զուռում եյին։ «Պարոն կազակներ, ժամանակ ե, վաշ խնդի զամ յել ծառայեի քաջավագ Պյատ Ֆյուրութիշին։ Մլուները պահանջում ելին, վոր իրենց տրվի Մարտյուսկան Բորոդինը (գո-րական մի ավագ, վորն Որենքուրզ եր Իեկել Յահկյան քաղաքից՝ Նաումովիի զորախմբի հետ միասին) և կազակներին իրենց մոտ հյուր եյին կանչում տաելով։ «Մեր պիրօչ մաս զիմին բալ եւ, Քաղաքից նրանց գեմդուրս եյին գալիս ձիավոր մարդիկ և սկըս-վում եյին հրաձգությունները, յերբեմն բավական տաք, Հաճախ և ինքը Պուգաչովն եր հայտնվում հենց այդուհզ, իր խիզախու-թյամբ պարծենալով։ Մի անգամ նա ձին քշեց՝ հարրած, զըլ-խարկը կորցրած և թամբի վրա յերերվելով, —ու քիչ մնաց զերի ընկներ, կազակները փրկեցին նրան և հետները քաշեցին տարան՝ ձգելով նրա ձիու սանձը,

Պուգաչովն ինքնիշխան չեր, Յահկյան կազակները՝ բունախ պարագլուխները ուղղություն եյին տալիս լեկվորի զործերին,

վորն այլ արժանիք չուներ, քան յեթե մի քանի ռազմական դիտելիքներ և արտասովոր հանդինությունն Առանց նրանց համաձայնության նու վոշինչ չեր ձեռնարկում, մինչդեռ նրանք հաճախ գործում եյին առանց նրա գիտության, իսկ յերբեմն և հակառակ նրա կամքին: Դրանք արտաքուստ պատիվ եյին ըստյց տալիս նրան ժողովրդի ներկայությարմ, նրա հետեւց զնում եյին զլիսարաց և ծունկի զալիս, սակայն լերես առ յերես նրա հետ վարդում ելին ինչպես ընկերոջ և միասին հարբեցողությունն եյին անում, նրա ներկայությամբ զգակները զլիմներին և սոսկ շապիկով նստած ու բուրգակական¹⁾ լերգեր լերգելով: Պուգաչովը դժուն եր նրանց խնամատարությունից: Տեղա մեղ և, ասել եր նու Դենիս Պյանովին, նրա կրտսեր վորդու հարսանիքին քեզ անելիս: Զհանդուրժելով կողմնակի վորնեազգեցություն իրենց ստեղծած ցարի նկատմամբ, նրանց չեյին ուզում, վոր ինքնակոչը այլ սիրելիներ ու հավատարմատարներ ունենաւ: Պուգաչովն իր բունտի սկզբում մոտը վորպես զրագիր եր վերցրել սերժանտ Կարմիցկուն, ներելով նրան հենց կախաղանի տակ Կարմիցկին՝ շուտով զարձազ նրա սիրելին: Տատիշչեվան վերցնելիս յարկյան կազակները խեղդաման արին նրան և վզից մի քար կապած զցեցին զետը: Պուգաչովը հետաքրքրվեց նրա մասին: Նու զմաց, պատասխանեցին նրան, իր մոր մո՛ Յահիկի նօսանեավ զած: Պուգաչովը լուռ թափահարեց ձեռքը: Զահել Խարլովան դժբախտություն ունեցավ ինքնակոչին իր հետ կապելու: Վերջինս նրան պահում եր իր բանակատեղում, Որենքուրզի մոտ: Միայն նու իրավունք ունեներ ամեն ժամանակ նրա կիրիտեկան մտնելու: Խարլովալի ինքրով ինքնակոչը հրաման ուղարկեց Ոզերնայա—թաղելու բերդը վերցնելիս իր կախած մարզկանց մարմինները, նու հարուցեց իանդու շարագործների կասկածը և Պուգաչովը, զիջելով նրանց պահանջին, իր հարճը հանձնեց նրանց: Խարլովան և նրա յոթնամյա լեղբարյու զնդականարդեցին, Վիրավոր վիճակում նրանք սողալով մտնեցան և գրկեցին միմանց: Թփերի մեջ նետված նրանց մարմիններն յերկար ժամանակ մնացին նույն զիճակում:

Գլխավոր խոռվարաբների թվում աշքի յեր ընկնում Զա-

1) Բարլավիներ—այսպես եյին կոչվում Վոլդ գետի վրա և նրա նախակայաններում աշխատող բանգրները, վարուց ընդունուր մի պարանից կամ ֆոկից լեցած, ափով. Հասանը է գեր քաշում եյին ընկնուար նովինը: Մ. Բ.

բութինը (նույն ինքը և Զիկան), վոր բունտի սկզբից Պուգաչովի գործակիցն ու խնամակալն եր: Նա ֆելլարշալ եր կոչվում է առաջինն եր ինքնակոչից հետո: Ովչիննիկովը, Շիգալեվը, Արտովը և Չումակովը կրում եյին այն ազնվատոնմ իշխանների առունեները, վորոնք այն ժամանակ շրջապատել եյին Յեկատերինայի գահը: Զիկան կոչվում եր կոմս Չերնիչենի, Շիգալեվը՝ կոմս Վորոնցով, Ովչիննիկովը՝ կոմս Պանին, Չումակովը՝ կոմս Ռոլով: Թնդանոթաձիկ պաշտոնաթող կապըրալ Բելորորդովովը վայելում եր ինքնակոչի լիակատար վատահությունը: Նա Պաղուբովի հետ միասին վարում եր անզրագետ Պուգաչովի գրավոր գործերը և բունտարարների հրոսակտխմբերում մացրեց խիստ կարգ ու հնազանդություն: Պերֆիլեվը, վոր բունտի սկզբում: Պետերը գործումն եր գտնվում յահիկան զորքի գործերով, կառավարությանը խոստացավ կազակներին հնազանդեցնել և իրեն Պուգաչովին հանձնել արդարադատության ձեռքը: սակայն թերությա գալով գարձավ ամենակատաղի բունտարարներից մեկը և իր բախտը կապեց ինքնակոչի բախտի հետ: Մարակով ծեծ կերած, դաճի ձեռքով խարանված և մինչև կրնիկները պատռված քթածակերով ավազակ Ալոպուշան Պուգաչովի սիրելիներից մեկն եր: Ամաչելով իր այլանդակություններից, նա ցանց եր կրում իր զեմքին կամ ծածկում եր թեքով, վորովես թե պաշտպանվում և սառնամանիքից: Առաջե ինչպիսի մարդիկ եյին ցնցում պետքյունը:

Մինչ այս, մինչ այն կառը հասավ Ոքենրուրդի նահանգի սահմանը: Հազանի նահանգապետը զեռեմ մինչև նրա գալը կարողացավ հավաքել մի քանի հարյուր կայազորային զինազատ և աքսորաբնակ զինվորներ և նրանց տեղափորել մի մասը կիշտուելիք ֆելդշանցի¹⁾ մոտ, մի այլ մասը՝ Չերեմշտան զետիք յերկանքով, կիրուելից մինչև Ստավրոպոլ տանող ճանապարհի վրա: Վոլգայի վրա գտնվում եյին յերեսուն շարքային զինվորներ մի սովորյի հրամանատարության տակ՝ ավազակներին բռնելու համար: Նրանց հրամայման եր հետեւ բունտարարների շարժումներին: Բրանտը զրեց Մոսկվա, գեներալ-անշեֆ իշխան Վոլկոնսկուն, նրանից զորք պահանջելով: Սակայն Մոսկվայի կայազորն ամբողջովին կարգված եր սեկրուտներին²⁾ իրենց նշանակու-

1) Ֆելդշանցի (գերմ. առզմ) — զարային փայտիկ ամրոց, սեղուտ: Ծ. թ.

2) Մեկրուտներ — նշանակված սերուտներ: Ծ. թ.

տեղերը տանելու համար, իսկ Մոռկվայում գտնվող Տոմակի գումարը պահպաներ եր պահում այն փակուդիները վրա, վորոնք հիմնված եյին 1771 թվին ճարակող ժանտախտի ժամանակու իշխան Վոլկոնսկին կարող եր ուղարկել միայն յերեք հարյուր շարքայիններ մի թնդանոթով և նրանց իսկույն եեթ սայլերով ուղարկեց Ղազան։

Կառը հրամայեց Սիմբիրսկի պարետ գնդապետ Զերնիշովին, վորը Սամարայի վրայով զեզի Որենբուրգ եր գնում, վորուան կարելի յե շուտով գրավել Տատիչչեվան։ Նա մտադիր եր, նենց վոր ռեկուտների ընդունելության համար կալուզայում գտնվող գիններալմալոր Ֆրեյմանը գա, նրան ուղարկի Զերնիշովին ոգուության։ Կառը շեր կասկածում, վոր հաջողություն կունենաւ։ «Միայն յերկյուղ ունեմ, — զրում եր նա կոմս Զ. Գ. Զերնիշովին, — վոր սույն ավագակներն իմանալով զորախմբերի մոտենալու մասին, նրանց մոտ չթողնելով իրենց, փախուստի պիմին նույն տեղերով, վորտեղից հայտնվել են։ Նա զժվարությունները նախատեսնում եր միայն Պուգաչովին հետապնդելու մեջ ձմռան և քիչ ձիավորներ ունենալու պատճառով։

Նուեմբերի սկզբին չապասելով վոչ հրետանում, վոչ Սիմբիրսկից իրեն ուղարկված հարլուր յոթանառուն զրենապերներին, վոչ եւ Ուֆայից նրան ուղղված զինված բաշկիրներին և մեշերյակներին¹⁾, նա սկսեց առաջ խաղալ մանապարհին, Որենբուրգից հարլուր վերստի վրա նա իմացավ, վոր Պուգաչովի ուղարկած աքսորական ավագակ Խուպուրան թնդանոթներ ձուլելով Ովզյանո-Պետրովսկի գործարանում և հուզելով գրանցված պյուղացիներին²⁾ ու շրջակա բաշկիրներին, վերապառ-

1) Մ է չչ հ յ ո կ ն ի բ — Ան Ռուսում արող մի փոքրիկ աղջումյուն եր, վոր ըսակություն եր հաստատել Ռյազանի, Տամբովի, Սիմբիրսկի ու Պանզայի Նունականերում, մասում և նույնին Ղազան թագավորության մեջ, Մեշերյակները յենթակա եյին մի կողմէց թ-թարների, մյուս կողմէց բաշկիրները ու անապանդ ուղաների ուժեղ պահեցությանը։ Մինչ հեղափոխական Ռուսաստանու նրանց հաւաքի են թաթարացած ֆիններ, ապա նույն զերագ-նշանակած մասզար-թյուրքական գերով սատում մի մողովուրդ, և ԱՄՀ Միության առնմաններում հրա այս անունով չկա մողովուրդ—նույն վայրերում մնացի ևս ոռհ (մի փոքրիկ խմբովորուս) թ-թարներ, վորոնց համար գումար են մեշերյակների հանգարդները։ Մ. Բ.

2) Լանձազործարանային կամ հանային արդյունարկության գործարաններն կը պահ (զրանցված) զրուղացիները կազմում եյին պետական պյուղացիների մի մասը, առկայն այն տարրերությամբ, վոր իրենց հարկերը զրածով չեյին վետում, այլ պարտավոր եյին պետական կամ մասնավոր լինազարժարաններում աշխատանքով հաստիցել այդ հարկերը կամ նրանց մի մասը։ Մ. Բ.

Նում և Որենբուրգի մոտ: Կառը փութաց կորել նրա ճանապարհը և նոյեմբների 7-ին՝ սեկունդ-մայոր Շիշկինին չորս հարյուր շարժայինների և յերկու թնգանոթների հետ ուղարկեց Յուզեմ գյուղը, իսկ ինքը գեներալ Ֆրեյմանի և պրեմյեր-մայոր Փավարնասեղի հետ, վորը հենց նոր եր հասել Կալուգայից, դուրս յեկավ Սարմանասայից, Հենց Յուզենոյի տակ Շիշկինի գեմ գուրս յեկան վեց հարյուր խոռվարաբներ, Նրա հետ գտնվող թաթարները և զինված գյուղացիք խկույն անձնատուր յեղան: Շիշկինը սակայն մի քանի թնգանոթալին զարկերով ցընց այս խուժանը, Նա գրավեց գյուղը, ուր Կառը և Ֆրեյմանը հասան զրշերք ժամ 4-ին: Չորքն այնպես եր հոգնած, վոր անհնար եր մինչև իսկ հեծելագետեր նշանակել, Գեներալները վճռեցին սպասել լուսանաբռն, վորպեսզի հարձակվին ըռանտարարների վրա և արշալույսին իրենց առջև տեսան միննույն խուժանը, Խոռվարաբներին հորդորիչ մանիթիստ ուղարկեցին: Նրանք ընդունեցին այն, սակայն ձիերը հետ քշեցին հալոյանքով, ասելով վոր իրենց մանիթիստներն ավելի ճիշտ են և սկսեցի կրակել իրենց մոտ յեղած թնգանոթից: Նրանց նորից ցընցին... այդ ժամանակ Կառն իր թիկունքում լսեց թնգանոթային չորս հեռավոր զարկեր: Նա վախեցավ և սկսեց շատապով նահանջել, կրածելով, թե իրեն կտրել են Ղազանից: Այդ միջոցին յերկու հազարից ավելի խոռվարաբներ ամեն կողմից վրա տվին սրարշավ և կրակ բացին ինն թնգանոթներից: Խոքը Պուզաչովն եր առաջնորդում նրանց, Խլոպուշան կրողացավ միանալ նրան: Դաշտերում ցաք ու ցրիզ գալով թնգանոթային զարկի արածության վրա, Նրանք զերծ եյին ամեն տեսակի վտանգից: Կառի այրումին հոգնած եր ու սակավաթիվ: Խոռվարաբները, ունենալով լավ ձիեր, հետեւակագորի հարձակման ժամանակ հեռանում եյին, արտադ կերպով իրենց թնգանոթները մի սարից մյուսը տեղափոխելով և այսպիսով տասնեւյոթ վերստ ուղեկցում եյին նահանջող Կառին: Ամբողջ ութ ժամնա պաշտպանվում եր, կրակ տեղալով իր հինգ թնգանոթներից, ձգեց իր գումակը և կորցրեց (իբրև հավատանք նրա զեկուցագրին) վոչ ավելի քան հարյուր քսան ժարդ սպանված, վիրավոր և վախած: Ուժայից սպասվող բաշկիրները շկային: Քիչ հեռու, իշխան Ուրակովի հրամանատարության տակ գտնվածները վախան, լսելով հրաձորությունը: Զինվորները, վորոնք մեծ մասամբ զառամլալ եյին կամ ուեկ-

բուռներ, բարձրաձայն արտնչում ելին և պատրաստ ելին անձնատուր լինելու կոիվներին շատնակցած ջահել սպաները շելին կարողանում սիրու տալ նրանց: Սիմբիքակից, պորուչիկ կարտշովի հրամանատարությամբ սայլակներով ուղարկած զրենազիրներն այնպիսի անհոգությամբ ելին առաջ շարժվում, վոր մինչև իսկ նրանց հրացանները չելին լցված և յուրաքանչյուրը քնած եր իր սայլակի վրա: Նրանց անձնատուր լիզան առաջին չորս թնդանոթային զարկերից հետո, վոր կառը առավոտյան դեմ լսել եր Յուղենս զլուղից:

Կառը հանկարծ կորցրեց ինքնավստահությունը, իր կրած կորուստների մասին տեղեկացնելով հանդերձ, նա առաջարկեց սազմական կոլլեգիալին, վոր Պուգաչովին ընկնելու համար պետք են վոչ թե թույլ ուժեր, ալ ամբողջ գնդեր, հուսալի ալբումի և ուժեղ հրեաանի: Նա անհապաղ հրաման ուղարկեց գնդապետ Զերնիշովին՝ գուրս չգալ Պերեվոլոցկալա բերդից և աշխատել ամբանալ արդտեղ, հետագա կարգադրությունների սպասելով: Սակայն Զերնիշովի ուղարկած սուրհանդակը այլև չկարողացավ հասնել նրան:

Նուեմբերի 11-ին Զերնիշովը գուրս լեկավ Պերեվոլոցկալա բերդից և 13-ին գիշերով հասավ Զերնորեննակայա: Այստեղ Սակամրսկի ասամանի բերած Խլեցկայա յերկու կազակներից նա տեղեկություն ստացավ կառի պարտության և հարլուր յոթանատուն գրենադերների գերի ընկնելու մասին: Վերջին ցուցմունքի իսկության մեջ Զերնիշովը չեր կարող կասկածել, զրենազերներին նա ինքն եր ուղարկել Սիմբիքակից, ուր նրանց գտնվում ելին սեկրուտներին իրենց տեղերը ուղեկցելու գործով: Նա չգիտեր ինչ աներ: Նահանջեր գեպի Պերեվոլոցկալա, թի շտապեր Որենքուրդ, ուր նախորյակին նա զեկուցագիր եր ուղարկել իր մոտենալու մասին: Սույն ժամանակ նրան ներկայացան հինգ կազակներ և մի զինվոր, վորոնց ինչպես հավատացնում ելին, վախճել ելին Պուգաչովի կալանչոց: Նրանց մեջ եր գտնվում կազակական հարցուրապետ և պատգամավոր Պաղութովը: Նա Զերնիշովին հավատացրեց, վոր ինքը չանադիր և գեպի կառավարությունը, վորպես ապացույց ներկայացնելով իր պատգամավորական շքանշանը և խորհուրդ ամփեց անհապաղ գնալ Որենքուրդ, առաջարկելով իր ծառայությունը՝ նրան անվտանգ տեղերով անցկացնելու: Զերնիշովը հավատաց նրան ու նույն ժամին եեթ, առանց թմբկահարության դուրս յեկավ Զերնորեննակից:

Պատրւրովը նրան տանում եր լեռներով, հավատացնելով, վոր Պուգաչովի առաջավոր պահակները նեռու յեն և վոր լեռների լուսաբացին իրենք տեսնել են նրան, ապա վտանգն արգեն անցած կլինի և նա կկարողանա անարգել մտնել Որենբուրգ Առավուայան Զերնիշովը հասավ Սակմարա և Մայակ կոչված բնասահմանավայրի մոտ. Որենբուրգից հինգ վերստի վրա սկսեց անցնել գետի սառույցավ, Նրա հետ կար հաղար հինգ հարլուր զինվոր և կազակներ, հինգ հարյուր կալմիկներ և տասներկու թընդանոթ Կապիտան Ռժեվսկին առաջինն անցավ հրետանու և թերեւ զորքի հետ. նա խկույն և թի իր հետ վերցնելով լերեր կազակներ, ուղևորվեց զելլի Որենբուրգ և ներկայացավ նահանգապետին, Զերնիշովի գալու լուրը հաղորդելով, Հենց այդ ժամանակ Որենբուրգում լսեցին թնդանոթաձգություն, վորը և քառորդ ժամից լուց... քիչ ժամանակ հետո Ծերնադրություն տեղեկություն սահցավ, վոր Զերնիշովի ամբողջ զորախումբը զերի և բռնված և տարգում և Պուգաչովի բանակատեղը,

Զերնիշովը խարվեց Պաղուրովից, վոր նրան ուղիղ Պուգաչովի սուս բերեց, Խոռվարաբները հանկարծ հարձակվեցին նրա վրա, զբավեցին հրետանին: Կազակները և կալմիկները զավաճանեցին. Ցրաից, սովից և զիշերային շվերթից ուժասպառ լեզած հետևակազորը հկարողացավ դիմադրել Ամեն ինչ զրավված եր, Պուգաչովը կախեց Զերնիշովին, յերեսունվեց սպաների, մի պրապորչիկի կնոջ և կալմիկ գնդապետի, վորը հավատարիմ մնաց իր զբախա զորապետին:

Մինչույն ժամանակ բրիգադիր Կորֆը Որենբուրգ մտավ լերկու հազար չորս հարյուր մարզուց բաղկացած զորքով և քսան թնդանոթներով. Պուգաչովը հարձակվեց և նրա վրա, սակայն քաղաքի կազակները հետ մղեցին նրան,

Թվում եր, թե Որենբուրգի իշխանությունը սարսափից խելքը կորցրել եւ Նոյեմբերի 14-ին Ծերնադրությունը, Նախորդակին վոչ մի ոզնութիւնուն ցույց չտալով գժրախատ Զերնիշովի զորախմբին, վորոշեց մի զորեղ արտելք կատարել Պաղացում յեղած բոլոր զորքը (հաշված և նոր զորախումբը) որեր պարետի առաջնորդությամբ դուրս բերվեց դաշտ Բունտարարները, հավատարիմ իրենց սիստեմին, կովում եյին հեռվից և ցաք ու ցըիվ լեկած, անզագար կրակ տեղալով իրենց բազմաթիվ հրանոթներից. Պաղաքի հյուծված այրումին հաջողության հույս անգամ չեր կարող ունենալ. Վալենչտերնը ստիպված եր կառու

կազմի և նահանջել կորցնելով յերեսուն յերկու մարդ՝ Նույն սրն և նեթ մայոր Վարնասեղը, վարին Կառը դեպի Նովո-Մոսկովյան ճանապարհն եր ուղարկել, հանդիպեց Պուգաչովի մի ուժեղ զորախմբի և շատապով նահանջեց, կորցնելով մինչև յերկու հարյուր սպանված մարդ:

Զերնիշովի գերի ընկնելու լուրին առնելով, Կառը բոլորովին հուսահատվեց և այլն մտածում եր վոչ թե անարդ բունտարքների դեմ հաղթություն տանելու մասին, ալլ՝ իր սեփական ապահովության։ Այս բոլորի մասին նաև հայտնեց ռազմական կոլեգիային, ինքնակամ կերպով հրաժարվեց իշխանությունից՝ հրանգության պատճառաբանությամբ՝ մի քանի ինելոք խորհուրդներ տվեց Պուգաչովի դեմ գործելակերպի վերաբերյալ և իր զորքը թողնելով Ֆրեյմանի հոգացողությանը, մեկնեց Մոսկվա, ուր նրա հայտնվելը ընդհանուր արտօնության առաջացրեց։ Թագուհին մի խիստ հրովարտակով հրամակեց արձակել նրան ծառայությունից։ Այդ ժամանակից նա ապրում եր մի զյուղում, ուր և մեռավ կալսր Ալեքսանդրի թագավորության սկզբում։

Թագուհին անհրաժեշտություն եր տեսնում զորեղ միջոցներ ձեռք առնել առողջարիքի դեմ։ Նա մի հուսալի զորապետ եր փնտրում և ընտրեց գեներալ-անշնչի Բիբիկովին։ Ալեքսանդրի միշտ Բիբիկովը պատկանում եր Սեկատերինյան ժամանակների ամենանշանավոր անձանց թվին, մի ժամանակաշրջան, վոր այնքան հարուստ եր ականավոր մարդկանցով։ Դեռևս իր յերիտասարդ տարիներում, նա արդեն կարողացել եր աչքի ընկնել պատերազմի և քաղաքացիականության ասպարիզում։ Նա պատվով ծառայեց յոթնամյա պատերազմի ժամանակ և իր վրա դարձրեց Ֆրիզըի Մեծի ուշադրությունը, նրան կարելոր հանձնարարություններ եյին տրվում։ 1763 թվին նա ուղարկվեց Ղազան՝ բունտարար գործարանային գլուղացիներին խաղաղեցնելու համար։ Հաստատակամությամբ և բարեմիտ հեղությամբ նա շուտով վերականգնեց կարգը։ 1765 թվին, յերբ կազմվում եր նոր որենսդրության հանձնաժողովը, ընտրություններին նա նախազանում եր Կոստրոմայում։ Նա ինքն ընտրվեց գեպուտատ և հետո նշանակվեց ամբողջ ժողովարանի առաջնորդ։ 1771 թվին նա նշանակվեց գեներալ-պորուչիկ Վեյմարնի փոխարեն վորպես զինապետ զորանրամանատար Լեհաստանում, ուր կարև միջոցում կարողացավ կարգավորել վոչ միայն բացթող արված։

գործերը, այլև Աեռք բերել հաղթվածների սերն ու վատահութեանը:

Մեր նկարագրած ժամանակաշրջանում նա զանգում եր Պետերություն: Նվաճված էնճաստանի գլխավոր իշխանությունը հանձնելով գեներալ-պուշչիկ Ռումանիուսին, նա պատրաստվում եր Տաճկաստան մեկնել՝ կոմս Ռումյանցեզի մոտ ծառայելու թագուհին, վորը մինչ ալդ միշտ բարյացակամ եր Բարիկովին, սառն ընդունեց նրան: Մի զուցեն նա գծովն եր այն անհամեստ խօսքերից, վոր Բիրիկովն ասել եր սրտնեղությունից հարկադրված, քանի վոր գործի մեջ ջանապիր և հոգով թագուհուն նվիրված լինելով՝ նա փնթփնթան և համարձակ եր իր զատումների մեջ, Սակայն Ծեկատերինան կարողանում եր զսպել իր կանխակարծիքները, Պալատական պարանողիսի ժամանակ իր նախկին սիրալիր ժամփուզ նա մոտեցավ նրան և հետը վողորմածարար խոսելով հայտնեց նրա նոր նշանակումը, Բիրիկովը պատասխանեց, վոր նա իրեն նվիրաբերել և հալլենիքի ծառայության և ալդ ասելով մեջ ըերեց ժողովրդական յերգի բառերը, զրանք հարմարացնելով իր վիճակին:

Սարաֆան իմ, թանկագին իմ սարաֆան,

Ամեն աեղ զու լեռ պետք գալիս, սարաֆան.

Իսկ թե պետք չե՞ս՝ նատարանի տակ ես ընկած, սարաֆան:

Նա առանց առարկության հանձն առավ մեծ գծվարությունների հետ կապված պաշտոնը և դեկտեմբերի Զ-ին զուրս յեկավ Պետերբուրգից:

Մոսկվա հասնելով Բիրիկովը հին մայրաքաղաքը տեսավ սարսափի և հուսալքման մեջ, Բնակիչները, վոր նոր եր ինչ տեսել ելին բունտն ու ժանտախաղ, զողում եյին նոր աղետի սպասելով, Բազմաթիվ աղնվականներ Մոսկվա եյին փախել այն նահանգներից, վոր արդեն քար ու քանդ եր արել Պուգաչովը կամ վրբոնց հուզում եր սպասում: Դրանց հետ բերված ճորտերը քաղաքի հրապարակների վրա լուրեր եյին տարածում սպասության և տերերին վոչնչացնելու մասին, Մոսկվալի մեծ թիվ խաժամութը, հարրելով և փողողներով թըն զալով, ակնհայտնի ան ամբերությամբ սպասում եր Պուգաչովին, Բնակիչները խանգամվառությամբ ընդունեցին Բիրիկովին, վոր ապացուցում եր, թե նրանք ինչ վտանգ եյին սպասում իրենց համար: Նա թողեց Մոսկվան, փութալով արդարացնել նրա հույսերը:

Առրարդ գլուխ

Խոսքաբարշների զործողությունները—Մայոր Զայեզը—Իրինակայտ բերդի պարզությունը—Կոմիչիկովի և Վորոնովի մահը—Մբենբուրդի զորւթյունը—Սահերական փառքիկ քաղաքի պաշտուամբը—Նորի Բերդարի մաս—Բերէկովը Ղազանամի—Յեկատերինա Շ-րզը՝ Ղազանի կալվածահրուճի—Յեկատայի կարձերը—Վոլաեր—Հովգարտակ Պուղաչովի առև և Ընասնիցի մասին:

Կասիր և Ֆրեյմանի ջարդվելը, Զերնիշովի ջախջախումն ու Վալեննշտերնի և Կորֆի անհաջող արտելքները զորացրին հանդպնությունն ու ինքնապատահությունը խոռվարաների մեջ, Նրանք ամենն կողմ ընկան, քարուքանդ անելով գյուղերն ու քաղաքները, Հուզելով ժողովուրդը և վոչ մի տեղ չհանդիպեցին դիմադրության: Տորնովը վեց հարյուր մարդկանց հետ բունա արեց և թալանեց ամբողջ նազարացցի մարզը: Զիկան նույն միջոցին տաս հազարանոց զորախմբով մտանում եր Ուժային և պաշարեց այն նոյեմբերի վերջին: Թաղաքը չուներ Որենբուրդի պիս ամրություններ և սակայն պարես Մյասովեցովը և այնտեղ ապաստարան փնտրող ազնվականները վճռեցին պաշտպանվելու: Զիկան, չհամարձակվելով ուժգին հարձակումներ անելու, կանգ առաջ Զեմնոկսվիա գյուղում, Ուժայից տաս վերսաւ: վրա, բունա վեց շրջակա գյուղերում, մեծ մասամբ բաշկիրական և քաղաքը կորեց ամեն տեսակ հաղորդակցությունից: Ուլյանովը, Դավիդովը և Բելոբրոդովը զործում ելին Ուժայի և Կազանի միջև: Ալդ ժամանակ եր, վոր Պուգաչովը Խոսկուշային հինգ հարյուր հոգով և վեց թնդանոթով ուղարկեց Խիբնակալա և Վերինս-Ռեկերնայա բերդերը գրավելու, վորոնք ընկած ելին Որենբուրդից արևելք: Այս կողմից պաշտպանության համար Միքիրի նահանգապետ Զիչերինը նշանակել եր գեներալ-պորուչիկ Դեկալոնդին և գեներալ-մարոր Ստա-

Նիւթավսկուն: Առաջինը պաշտպանում եր Սիրիրի սահմանները, վերջինը գտնվում եր Որսկ բերդի մեջ, անվճռականորեն գործելով, ամենաչնչին վտանգի գեղքում արիությունը կորցնելով և զանազան պատրվակներով հրաժարվել իր պարտքը կատարելուց:

Խլոպուշան վերցրեց Իլինսկայան, հրոսման միջոցին սրախողող անելով պարետին՝ պորուչիկ Խլոպուտինին, սակայն ինայեց սպաներին և չքանդեց մինչև իսկ բերդը: Նա շարժվեց դեպի Վերինե-Ռուդենայա: Այս բերդի պարետը, յենթագնդապետ Դեմարինը վանեց նրա հարձակումը: Տեղեկանալով այդ մասին, Պուգաչովն ինքն շտապեց Խլոպուշային ոգնության և նոյնեմբերի 26-ի առավոտան միանալով նրա հետ, նույն ժամերին նեթ հարձակվեց բերդի վրա: Ամբողջ որը չեր գաղարում հրաձությունը: Խլոպուտարաբները մի քանի անգամ ձիերից իշնելով նիզակներով վրա տվին, սակայն միշտ ելնեան ելին մզգում: Ցերեկոյան Պուգաչովը նահանջեց դեպի բաշկիրական մի գյուղ՝ Վերինե-Ռուդենայա բերդից տանեներկու վերստի վրա: Այդտեղ նա իմացավ, վոր սիրիրան զժից Իլինսկայա բերդն են զալիս յերեք վաշտ, ուղարկված գեներալ-մայոր Ստանիսլավսկու կողմից: Նա գնաց նրանց ճանապարհը կտրելու:

Սակայն մայոր Զահել սույն զորախմբի պետու, կարողացավ գրավել Իլինսկայան (նոյնեմբերի 27-ին): Խլոպուշալի թողած բերդը նա չայրեց: Բնակիչներին այնտեղից զուրս չըերեց: Նբանց մեջ գտնվում եյին մի քանի կռնչեղերատներ: Պատերը և մի քանի խրճիթներ վնասված ելին: Բոլոր զորքը զերի յեր բանված—բացի մի սերժանտից և վիրավոր սպայից: Ամբարը բացված եր, Մի քանի չետվերտ այսուր և պաքսիմատ թափված ելին բակում: Դարպասի մոտ մի թնդանոթ եր ընկած: Զահել շտապ կերպով մի քանի կարգադրություն արեց, իր զորախմբի մեջ լեզած թնդանոթները տեղափորեց յերեք բաստիոններում (չորրորդի համար թնդանոթ շկար), նույնպես և պահակներ ու հեծելադիտներ նշանակեց և սկսեց սպասել թշնամուն:

Մլուս որը մթնշաղին Պուգաչովը հայտնվեց բերդի առջև: Խլոպարաբները մոտենում ելին և բերդի մոտ ձիերը զես ու դեն քշելով կանչում պահակներին: «Ճի կրակեց, զուրս յեկեց: ալստեղ և թագավորը», թնդանոթից կրակեցին նրանց վրա: Ռումբը մի Ճի սպանեց: Խլոպարաբները չքացան և մի ժամ անց հալանվեցին լեռան այն կողմից, իր իսկ Պուգաչովի առաջնոր-

դությամբ ձիերը ցանուցիր քշելով։ Նրանց հետ մղեցին թընգանոթներով, Զինվորները և զերի լեները (անավանդ այս վերջինները) թախանձագին խնդրում ելին արտյելքի անցնել, սակայն Զանը չհամաձայնեց, յերկյուղելով նրանց կողմից լինելիք հաւաքավոր դավանանութիւնից։ «Մնացեք այստեղ պաշտպանվեցեք»—ասաց նա—«իսկ ինս արտյելքի դուրս դալու իրավունք չունեմ գեներալից։»

29-ին Պուգաչովը նորից մոտեցավ. սահնակների վրա յերկու թնդանոթ ունենալով և բոլոր ժամանակ դրանց առջև մի քանի սայլ խոռովանելով։ Նա հարձակվեց այն բաստիոնի¹⁾ վրա, ուր չկար թնդանոթ։ Զանը շատպեց յերկու հատ գնել այստեղ, սակայն առաջ քան կարողացան դրանց տեղափորել, խոռվարաբները ուումբերով ջարդեցին փայտյա բաստիոնը, ձիերից իջած հարձակվեցին և ամբողջությամբ քանդեցին այն ու իրենց սովորական աղաղակներով խոռվեցին բերդը։ Զինվորները շարքարույթ յեղան և փախան։ Զանը, համարյա ըուլոր սպաները և յերկու հարյուր շարքալիններ սպանվեցին։ Մյուսներին քշեցին մերձական թաթարական գյուղը, մերգած զինվորներին բերդին կանգնեցրին լիք թնդանոթի առջև Պուգաչովը՝ կազմական կարմիր շորերով՝ ձին նատած մոտեցավ Ալոպուշայի ուղղեցությամբ։ Նրա յերևալուն պես զինվորներին չոքեցրին, ինքնակոչն ասաց նրանց. «Ներում և ձեզ ասված յեկ յես՝ ձեր քաղաքաց Պյուտ լլ կայսու. Վասի կանգնեցին։ Հետո հրամայեց շըրջել թնդանոթը և կրակել դեպի տափառան։ Նրան ներկայացրին կապիտան Կամենչկովին և պրոպրէշնիկ Վորոնովին։ Պատմությունը պետք ե պահպանի սույն համեստ անունները— «Ենիս՝ զօմ զօւր յեկա իմ դեմ՝ ձեր քաղաքացի դիմ», — հարցը հաղթողը— «Դու մեր թագավոր չեմ—պատասխանեցին գերիները. «Մեր Ռուսաստանում նստած են թագուհի Յեկատերինա Ալեքսանդրան և թագավոր գահաժառանգ Պավել Պետրովիչը. իսկ դու գոզ ես և ինքնակաչ։ Նրանց տեղն ու տեղը կախեցին։»— Հետո մոտ բերդին կապիտան Բաշարինին. Պուգաչովը նրան այլ ևս չասաց վոչ մի խոսք և այն ե՝ հրամայեց վոր կախեն. Սակայն գերի ընկած զինվորները սկսեցին խնդրել նրա համար. Ծիրք նա բարի յել յեղել ձեզ նես, ասաց ինքնակոչը, ապա յես

1) Թերզի, ամբողջ բուգչ Շ. Բ.

Անեռում եմ նշան: Յեզ հրամայեց, վոր Նրա, Նուգնպես և զինվոր-ների մազերը խուզեն կազակների ձևով, իսկ վիրավորներին տանեն բերդ Չորախմբի մեջ յեղած կազակներին խռովարարներն ընդունեցին ինչպես ընկերների: Այն հարցին, թե ինչմանմիջապես չեն միացել պաշարողներին, նրանք պատասխանեցին, վոր զինվորներից եյին վախենում:

Իլինսկայա բերդից Պուգաչովը նորից շրջվեց գեղի վերին-նի-Ռուսայա, նա անպայման ուղղում եր գրավել այս, մանավանդ վոր այսակ եր գուղովում բրիգագիր Կորֆի կինը, նա սպառնում եր կախել նրան, չարացած նրա մարդու վրա, վորն ուղում եր կեղծ բանակցություններով խարել իրեն:

Նոյեմբերի 30-ին նա նորից շրջապատեց բերդը և ամբողջ որը կրակում եր Բնագանոթներից, փորձելով հարձակվել մերթայս, մերթ ալիք կողմից, Ցուրայիններին սրտապնդելու համար Դնմարինն ամբողջ որը կանգնած եր պատնեշի վրա, ինչը լըց-նելով Բնագանոթը, Պուգաչովը նահանջեց և ուղում եր գնաց Ստանիսլավսկու դեմ, սակայն ձեռք ձգելով որենքուրդյան փռուառագումը, միտքը փոխեց և վերադարձավ Բերդա ավան:

Նրա բացակալության ժամանակ Ռեյնադորպը ուղում եր արայելք անել և 30-ին դիշերով, զորքը փորձեց դուրս գալ քաղաքից, սակայն կերի պակասությունից ուժասպառ ձիերն ընկնում և սատկում եյին հրեսանու ժանրության տակ, իսկ միքանի կազակներ փախան: Վալենշտերնը հարկազրված եր վերադառնար:

Որենքուրդում մկնեց զգացվել ուտեստի պաշարների պակասություն, Ռեյնադորպը զբանք պահանջեց Դնկալոնդից և Ստանիսլավսկուց, Պատրվակներ բերելով լերկուուն ել հրաժարվեցին: Նա ամեն ժամ նոր զորքի յեր սպասում և արդ մասին վոչ մի տեղեկություն չեր ստանում, կտրված լինելով ամեն կողմից, բացի Սիրիբից և Կիրգիզ-Կառլացկան տափաստաններից: Ռազմագերի վրսալու նպատակով յերեմն նա ուղարկում եր մինչև հազար մարդ, և սակայն շատ անդամ առանց հաջողության: Նրա խելքին փչեց Տիմաշովի խորհրդով թակարդներ գնել պատնեշի մոտերքը և, ինչպես գայլերին են բռնում, վորսալ խռովարարներին, վորոնք գիշերը ձիով շրջում ելին քաղաքից վոչ հեռու իրենք պաշարվածները ծիծաղում եյին նրա սաղմական խորամանկության վրա, թեպես և նրանց յերեսին ծիծաղչեր գալիս, իսկ Պուգաչովն իր նամակներից մեկում խայթիւ:

խոսքերով նախառում եր նահանգապետին՝ նրա անհաջող հնարքի համար և ծաղրաբար խորհուրդ տալիս անձնատուր լինել ինքնակոյշին:

Յահկյան քաղաքը՝ բունտի սույն առաջին բռնյալը, սարսափած Սիմոնովի զորքից, յերկար ժամանակ մնացել եր հնագանդության մեջ, Վերջապես հաճախակի կապը բունտարարների հետ և Որենքուրզը վերցնելու սույն լուրերը խրախուսեցին Պուղաչովի համախռներին, հազակները, վորոնց Սիմոնովը քաղաքից կարգում եր պահակները դնելու և Բերդա ավանից գաղտնաբար ուղարկված խռովարարներին վորսալու համար, սկսեցին բացրուշ կերպով անհնագանդություն ցույց տալ, բայց թողնել բանված բունտարարներին, կապուտել իշխանությանն հավատարիմ ավագներին և փախչելով անցնել ինքնակոչի բանակը: Խուր տարածվեց խռովարարների ջոկատի մոտենալու մասին: Դեկտեմբերի 29-ի՝ լույս 30-ի գիշերը ավագ Սոստովչյեկովը դուրս լեկազ նրա դեմ: Մի քանի ժամից նրա հետ լեզած կազմակերպից յերեքը որարշավ վերազարձան բերդ և Հայտնեցին, վոր քաղաքից յոթ վերստի վրա Սոստովչյեկովին շրջապատել և դերի և բանել բունտարարների մի հոծ բազմություն: Քաղաքում մեծ իրարանցում ընկավ: Սիմոնովը վախեցավ: Բարեբախտաբար բերգում գտնվում եր կտորիտան կոիլովը, վճռական ու վողջախոհ մի մարդ: Անկարգության առաջին բռպեյին նա իր ձեռն առավ կալաղորի հշխանությունը՝ և հարկավոր կարգադրություններ արագ: Դեկտեմբերի 31-ին խռովարարների մի ջոկատ Տոլկաչովի առաջնորդությամբ մտավ քաղաք: Բնակիչները խանդավառությամբ ընդունեցին նրան և աեղն ու աեղը զինվելով ինչ վոր ձեռքներն ընկավ, ձիացան նրան, բոլոր նըրափողցներից հարձակվեցին բերդի վրա, տեղ բանեցին բարձր խրճիթներում և սկսեցին կըսկելու պատուաններից: Կրակոցները, ասում ե ականատեսներից մեկը, աեղում եյին այնպես, կարծես տաս թմրկանարներ թմրկանարելիս լինելին: Թիրզում ընկնում ելին վոչ միայն ի տես կանգնածները, այլ և նրանք, վորոնք մի բռպելով գլուխները վեր եյին բարձրացնում ցանկապատերի յետեկցի:—Խռովարարները, վորոնք անվտանգ եյին բերդից տաս ասժենի վրա և մանավանդ գուլերօշիկները (վորսորդները) իրենց զնդակներով խփում եյին մինչև իսկ այն ճեղքերին, վորոնց միջից կըսկում եյին պաշարվածները: Սիմոնովն ու Կոիլովը ուղում եյին այրել մերձակա աները: Սակայն ռումբերն ընկ-

Նուևմ եյին ձյան մեջ և հանգչում, կամ յեթե բռնկվում ել ելին՝ իսկուոն հանգցվում եյին ջրով, մոչ մի խրճիթ շայրվեց, Վերշապես ւերեք շարքալին զինվորներ պատրաստակամություն հայնեցին ամենամոտ տունը վառելու, վոր և հաջողվեց նրանց, Հրդեհն արագությամբ տարածվեց, Խռովարաները դուրս վազեցին, Թերդից սկսեցին թնդանոթներից կրակել նրանց վրա, Նրանց հեռացան, հետեւը տանելով սպանվածներին ու վիրավորներին, Սրտապնդված կալազորը յերեկոյան դեմ արտյելք արեց և կարողացավ այրել ելի մի քանի տուն,

Մերդում կային մինչև հազար բերդական զինվոր և հնագանդվածներ, բավականաշափ վառող, սակայն՝ ուտեսուաի քիչ պաշարներ, Խռովարաները պաշարեցին բերդը, գերաններով լորին հրդեհից ամայացած հրապարակը և գեղպի ալին տանող փողոցներն ու նրբափողոցները. շենքերը հետեւից բարձրացրին մինչև տասնեւեց մարտկոցներ, հրաձգության լենթակա խրճիթներում կրկնակի պատեր շարեցին և արանքը հող լցնելով, սկսեցին ականներ փորել, Պաշտրվածներն աշխատում ելին միայն հեռացնել թշնամուն, հրապարակը մաքրելով և ամրացված խրճիթների վրա հարձակումներ գործելով, Սույն վատանգավոր արտյելքները կատարվում եյին ամեն որ, յերբեմն որը յերկու անգամ և միշտ հաջողությամբ զինվորները գազագած եյին, խոկ հնագանդվածները չեյին կարող գթություն ակնկալել խռովարաներից.

Որենքուրդի վիճակը զնալով սարսափելի յեր գառնում, Բնակիչների ձեռից առան ալյուրը և ձավարն ու սկսեցին աննդիմենորյա բաշխում կատարել նրանց մեջ. Զիերին վազուց արդեն խռիվով եյին կերտկրում, Նրանց մեծ մասը սատկեց և գործածվեց վորպես կերպակուր, Սովոր սաստկանում եր, Մի պարէ ալյուրը (այն ել ամենապաղանի կերպով) ծախվում եր քառանեհինդ ոռուրլով, Ռիշկովի (ակագեմիկի, վորը այդ ժամանակ Որենքուրդում եր գտնվում) առաջարկությամբ սկսեցին տապակել յեղների և ձիերի կաշիները և դրանք մանր կտրուելով, խռունել հացի մեջ. Հիվանդություններ առաջ յեկան, Տրտունջը զնալով բարձրաձայն եր գառնում, Խռովության յերկլուղ կար.

Սույն ծայրահեղության մեջ Ռեյնսդորֆը վճռեց մի անգամ ել վորձել զենքի հաջողությունը և հունվարի 13-ին Որենքուրդում գտնված բոլոր զորքը թաղաքից դուրս յեկազ յերեք զորայուներով, Վալենցանի, Կորֆի և Նաումովի տաշնորդու-

թյամբ։ Սակայն ձմեռային առավոտվա մթությունը, ձյան խորությունը և ձիերի ուժապառությունը խոչընդուռ հանդիսացան զորքերի միահամուռ զործակցությանը նառամովն առաջինը հասագ նշանակված տեղը հռովարարները տեսան նրան և ժամանակ ունեցան իրենց կարգադրություններն անելու։ Վալենց տերնը, զոր պետք և զրավեր Բերդալից Ղարզալի տանող նահապարհի մոտի բարձրունքները, կանխավեց, Կորֆին դիմավորեցին թնդանոթային ուժեղ կրակով։ Խռովարարների հեծելախմբերը սկսեցին անցնել զուրդ զորայաւաների թիկունքը։ Պահանջում թողած կազակները նրանց լքեցին փախան և սրարչակ հասնելով Վալենցտերնի զորայանը, ընդհանուր խառնաջփոթյուն առաջացրին։ Վերջինս ընկազ էրեք կրակի մեջ։ Նրա զինվորները փախան, Վալենցտերնը նահանջեց։ Կորֆը հետեւ վեց նրան։ Նառամուը, զորն սկզբում բավական հաջող եր զործում, սարսափելով, թե կորզած կմատ, ընկազ նրանց յետելից։ Մինչև Որենբուրգ ամբողջ զորքը փախչում եր անկարգ վիճակում։ Կորցնելով մոտ չորսհարյուր մարդ սպանված և վիրավոր ու ավագակների ձեռքում թողնելով առանձինդ թնդանոթ։ Այս անհաջողությունից հետո Ռենդուզորան այլև չեր համարձակվում զործել հարձակողարար, այլ պարփառների և թնդանոթների պաշտպանության տակ սկսեց սպասել իր Փրկությանը։

Թիրիկովը Ղազան հասագ դեկումենտերի 25-ին, Թաղաքում նա շգտավ վոչ նահանգապետին, վոչ ել պլոտվոր չինովնիկներին։ Աղնազականների և վաճառականների մեծ մասը փախել եր ավելի ապահով նահանգներ։ Բրանտը կողմողեմ յանսկում եր Թիրիկովի գալը կենդանացրեց հուսալքված քաղաքը։ Հետացած բնակիչները սկսեցին վերադառնալ 1774 թվի հունվարի 1-ին մաղթանքից և քարոզից հետ, զոր ասաց Ղազանի Բինիամին լեպիսկոպոսը, Թիրիկովն իր մոտ հավաքեց աղնազականության ներկայացուցիչներին ու մի խելոք և ուժեղ ճառ արտասանեց, զորի մեջ պատկերացրեց ներկա աղետը և կառավարության հոգացողությունը գա վերացնելու համար, զիմեց զեզի այն զասը, զորին խռովությունը կառավարության հետ միասին կործանման եր զատապարտել, ինունդուն աջակցություն պահանջեց հալբենիքին և հավատարմություն՝ զանին։ Սույն ճառը խորը ապավորություն թողեց։ Ժողովը տեղն ու տեղը զորոշեց իր հաշմին կազմել և զինել մի հեծելազորք, ամեն մի յերկու հարլուր շնչից մի սեկուլար տալով։ Գեներալ-մայոր Լարիոնովը՝

Բիբիկովի ազգականը ընտրվեց ալդ լեզվունի պետք Ախմբիբսկյան, Սվյատաժակի և Պենզալի ազնվականությունը հետեւեց այս որինակին, կազմվեցին նորից յերկու հեծլալ զորախմբեր և հանձնվեցին մայոր Գլադկովի և Զեմենովի ու կազինան Մատյունինի հրամանատարությանը, Ղազանի մագիստրալը¹⁾ նույնապես իր հաշվին զինեց մի եսկաղըռն հուսարներ,

Թագուհին՝ իր միապետի որհությունը, վաղորմածությունը և հովանավորությունը հայտնեց Ղազանի ազնվականությանը և Բիբիկովին ուղղած մի հատուկ նամակում իրեն Ղազանի կալվածատիրուհի անվանելով, պատրաստակամություն հայտնեց մասնակցել ընդհանուր ջանքերով ձեռնարկվող միջոցներին, Ազնվականների առաջնորդ Մակարովը թագուհուն պատասխանեց մի ճառով, վոր շարադրել եր այս ժամանակ գլխավոր հրամանատարի մոտ գտնվող գվարդիայի յենթապարուչիկ Դերժամինը:

Բիբիկովը, Ղանալով սիրու տալ իրեն շրջապատող բնակիչներին և սուրբագրյալներին, հանգիստ և ուրախ եր լերեւում, ստկալն անհանգուությունը, սրտնեղությունը և անհամբերությունը տանջում եյին նրան, Կոմս Զերնիշելին, Փոն-Վիզինին և իր ազգականներին դրած նամակներում նա վառ գույներով և նկարագրում իր վիճակի գժվարությունը, Դեկտեմբերի 30-ին նա գրում է իր կնոջը. «Տեղեկանալով բոլոր հանգամանքների մասին, այսուեղ գործերը յեն զառ ամենախայտառակ վիճակում, այնպիս վոր, լեթե կամենայի ել նկարագրել՝ չեմ կարող. Հանկարծ ինձ տեսա շատ ավելի վատթար պարագաներում և հոգսի մեջ, քան վոր սկզբում ունելի լինաւունում. Գրում եմ որ ու գիշեր, գրիչը ձեռքից բաց չթողնիլով, անում եմ այն ամենը, ինչ հնարավոր ե և ասածուց ոգնություն եմ հայցում. Գործը միայն նա կարող է ուղղել իր վողորմածությամբ. Իրոք, բավական ուշ շարժվեցինք: Իմ զորքերը սկսեցին տեղ հասնել յերեկ. մի գումարտակ զբենազերները և լերկու եսկաղըռն հուսարները, վորոնց մեռ հրամայել եյի բերել փոստալին սայլակներով, լեկան: Սակայն վարակը հանգցնելու համար ալս բոլորը շատ քիչ ե, իսկ չարիքն այնպիսին ե, վոր նման և

1) Մագիստրատ—սորտիկան Ռուսաստանում այսպիս եյրել կոչվում քառային ընտրովի գաւառատանտագրչական և հարկային հիմնարկությունները: Ս. թ.

(Հիշում ես) Պետերբուրգին՝ հրդեհին՝ ինչպես հանկարծ բոլոր անդերից սկսեց վառվել և ինչպես դժվար եր համեմել ամենուըքը, Հույսս առ աստված, բոլորի հետ պետք և անեմ այն, ինչ միայն կկարողանամ անել, ենթա ծերունի նաև անգայքն Բրանտը արխան և տանջզած, վոր հաղիվ ման և զալիս, Թափված արյան և բազմաթիվ անմեղ մարդկանց կործանման համար տառն պատասխան կտա նա, ով այնպես արագ վիշացրեց ալստեղի գործերը և մերկացրեց զորքերից, Այսուհանդերձ յիս առողջ եմ, միայն վոչ ուսել եմ ուզում, վոչ իմել, իսկ քաղցրավենիքներ մտցովս անգամ չեն անցնում, Մեծ և խարիքը, անասելի սոսկալի, իմ վողորմած հորից ծնողական աղոթքներ եմ խնդրում, իսկ արդարակյաց¹⁾ Յեղորացսիային հաճախ եմ հիշում, Ո՞վ, վաս եւ:

Խոկապես, զբությունը սոսկալի լիր, Այդ յերկրում ցրված բաշկիբների, կալմիկների և ալլ ժողովրդների ընդհանուր հուղումը ամեն կողմից կորել եր հազորդակցությունը, Զորքը սակավաթիվ եր և անհուսալի, Գետերը թողնում ու փախչում եյին իրենց անդերից, յեթե հանկարծ հեռվից նկատվում եր սալդակը ձեռին մի բաշկիր, կամ մահակով պինված գործարանային մի զյուղացի, Զմեոը սաստկացրեց զժվարությունները, Տափաստանները ծածկված եյին խոր ձյունով, Անհնար եր առաջ շարժվել վոչ միայն առանց հացի, այլ և առանց փայտի Դյուզերն ամայի ելին, զյիսավոր քաղաքները պաշարված, Ժուռները զբավված բռնտարարների հրոսակներով, զործարանները թալանված ելին և այրված, խաժամուժ ժողովուրդը ամեն որ հուղման մեջ եր և չարագործություններ եր անում, Պետության բոլոր ծայրերից ուղարկված զորքերը դանշաղ եյին շարժվում: Վոշնչով չարգելափակված չարիքը տարածվում եր՝ արագ ու լայն: Խլեցկ քաղաքից մինչև Գուրք բռնտ եյին անում Յամկան կաղակները: Ղազանի, Նիժնեգորզակի և Աստրախանի նահանգները լի եյին ավազակների հրոսակախմբերով: Խոսովության բոցը կարող եր ընկնել մինչև իսկ Սիրիր: Գերմում սկսվել ելին անհանգատությունները: Սեկատերինը բուրզը վանդի մեջ եր: Կիրգիզ կայսերներն, ովավելով զորքերի բացա-

1) Միանձնուհի Յեղորացսիա Ֆիրիզին—Այնքանզը Խլեց (Բէրիկավի) առամերը, զորք գտառարակել եր իրնեւ Ընանիցում նրան համարում եյին գորդիս արգարակյաց կին: Մանեթ, հեղինակի:

կայությունից, սկսեցին անցնել բաց սահմանով, թալանել խուռարները քշել անասունները, գերի բռնել բնակիչներին։ Տանկառանի կողմից հրարված՝ շարժվեցին Անդրկուրանյան ժողովուրդները, մինչև իսկ լեզվոպական կառավարություններից միշտանիսը մտածում եյին ուսումնական դժվար կացությունից, վորի և այդ ժամանակ գանձում եր Խուռաստանը։

Այս սոսկալի խառնաշփոթության սկզբնապատճառ դարձած մարդը ընդհանուր ուշադրություն եր զրավում, Յեվրոպա-լում Պուգաչովին ընդունում եյին վորովու տաճկական քաղաքականության դործիք։ Վոլտերը, իշխառ կարծիքների այս ժամանակիս ներկայացուցիչը, զբում եր Յեկատերինաբին։ C'est apparemment le chevalier de Tott, qui a fait jouer cette farce, mais nous ne sommes plus au temps de Demetrius et telle pièce de théâtre qui réussissait il y a deux cents ans est si fléchie aujourd' hui.¹⁾

Թագուհին, զայրացած յեվրոպական քամբառների վրա, Վոլտերին պատասխանեց վորոշ անհամբերությամբ։ Monsieur, les gazettes seules font beaucoup de bruit du brigand Pougatschef, lequel n'est en relation directe, ni indirecte avec Mr. Tott. je fais autant de cas des canons fondus par l'un, que des entreprises de l'autre. Mr. Pougatschef et Mr. Tott ont cependant cela de commun, que le premier file tous les jours sa corde de chanvre et que le second s'expose à chaque instant au cordon de soie.²⁾

Չայած գեղի ավագակն ունեցած իր արհամարհներին, թագուհին ձեռքից չեր թողնում վոշ մի միջոց՝ շլացած խամածո։ Ժժողովրդին խելքի բերելու, Ամենուր հորդորիչ մանիքեաններ ուղարկվեցին։ տաս հազար բուրդի յեր խոսացված ինքնակա-

1) Հայ հերսույթին, կավալեր զի Տօսուն և առքել այդ Փարուշ, սկսած մենց այն յնք ապրու Դիմիտրիի ժամանակները և պիես, վոր Կաջողության ուներ որպես յերկու հարուց առքի առաջ հիմա առկացնելով և ընդունված հաստության կազմից։

2) Պարսն, մրտն լրտպները են չառ աղմակ բարձրացնում Պալաչով ավագակի մասին, վորը զի-Շոտարի ներ չառի վոշ անմիջական, վոշ ել կազմակի առջաւթյուն։ Են նույնացան նրանովության եռ առջիս մեկը թնդանություններին, վորքան մյուսի ձեռնարկություններին Սոկայն որ զի Պալաչովը և որ զի Տօսուշ այն ընդհանուրն ունեն, վոր առաջին ամեն որ կանկից զուրում և իր պարանը, իսկ յերերորդը յաւրաքանչուոր բողն ճանենում և մասց թելիս։ Մ. Բ.

շին բռնելու համար։ Առանձնապես լերկյուզ ունելին Յափէի՝ Դոնի հետ սպասվելիք հարաբերություններից։ Առաման Յեղահմովին հանեցին և նրա տեղ ընտրվեց Սեմյան Սուլինը։ Հրամանն ուղարկվեց Զերկասկ—այրել Պուլաչովի առւնն ու տեղը, իսկ նրա ընտանիքը առանց վարելու վլրափառանի ուղարկել Ղազան՝ ինքնակույին բռնելու դեպքում նրա գեմքը մերկացնելու համար։ Դոնի իշխանությունը ճշտիվ կատարեց բարձրագույն հրամանի խոսքերը։ Պուլաչովի առւնը, վոր գանգում եր Զիմովելիսկարս ստանիցայում, զրանից մի առաջ առաջ ծախել եր ծայրահեղ չքափորության զուռն հասած նրա կինը և արդեն քանոզված ու տարված եր ուրիշի բակը։ Տանը կրեցին իր նախկին տեղը և հոգևորականության ու ամբողջ ստանիցայի ներկայությամբ այրեցին։ Դահիճները մոխիրը քամուն ազին, բակը փորեցին և ցանկապատեցին, հավիտյանս ամայի թողնելով այն, վորպես անիծլալ մի տեղ։ Տեղական իշխանությունը Զիմովելյանի բոլոր կազակների անունից թույլավություն խնդրեց նրանց ստանիցան ուրիշ՝ բնիւուզ յնի պահան օննավեա և դուռ հաստատելու։ Թագուհին շնամաձայնվեց ջանադրության այսքան վնասարեր ապացուցին և սոսկ Զիմովելյանի առանձին յեղած մոալլ հիշողությունները սքողելով նորի՝ արդեն իրեն և հայրենիքին սիրելի անձնավորության¹⁾ փառքով։ Պուլաչովի կինը, վորպին և յերկու աղջիկները (բոլոր յերեքն եւ փոքրանասակ) ուղարկվեցին Ղազան, ուր ճամբարվեց նաև նրա հարազատ յեղաւորը, վորն իրեն կազակ ծառայում եր յերկրորդ բանակում։ Մինչ այս, մինչ այն հավաքվեց հետեւյալ մանրա-

1) Պայունեկին Գ. Ա. (1739—1791)։ Սեկունդինա Ա-ի ունիտազգեցին շնորհառաներից մեկը, ծագութեազ մենք կալվածաներ ազնվական Մասնուցել և Պայուն Ա-ի գումակեցությանը՝ հազու Սեկունդինա Ա-ի, վորել մի շարժութափան և ուղարկած մեծ պաշտօններ, մասնակցել և Սեկունդինա Ա-ի մագան պատերազմներին, Փելլամբալլ առարձան ստոցել և այն։ Պ. Ի. Ժամանակ յեղն և Ռուսաստանի վարչիչը Վորովս Նորառիշտական ազնվականության գիտառաւորյի ամենաականավոր ներկայացնելը, Պ. առանձնացեա անուն գտառակեց 1772—74 թ. թ. պատղացիական նեղափառ ուղարկությունների մրցուցին և զբուր գաղանարար նույնաւոց հայություն Յ-ը ուստանչ պատերազմին (1768—1774) Պայունեկինը իւեց Նըրմը և միացրեց Ռուսաստանին։ Մ. թ.

մասն տևղեկությունները այն չարազործի մասին, վոր ցնցում
եր պեսությունը:

Եթելյան Պուգաչովը, ծառայող կազակ Զիմովեյսկայա
ստանիցայից, շատ տարիներ առաջ մահացած Խվան Միխայլովի
վորդին եր, Նա քառասում տարեկան եր, միջանասակ, թխադեմ
ու լղար. մուգ խարտյաշ մազեր ուներ, ոև մորուք՝ վոչ մեծ և
ծայրը սուր, Վերին ատամը դուրս եր ընկել դեռևս մանուկ
հասակում, բռնցքամարտի ժամանակ, Զախ քունքի վրա մի
սպիտակ բիծ ուներ, իսկ զույգ ծեծերի վրա՝ նշաններ, զորոնք
մնացել եյին ոև տկարությունն կոչված հիվանդությունից. Գրեց-
կարդալ չգիտեր և մկրտվել եր ազանդավորական ծիսով: Տաս
տարի առաջ նա մամուսնացել եր Սոֆիա Նեղութինայի հետ,
վորից ուներ հինգ յերեխաներ: 1770 թվին նա ծառայության
մեջ եր յեղել յերկրորդ բանակում, մասնակցել եր Բենդերի
գրավմանը և մի տարի հետո արձակվել և ծառայությունից ու
վերագրանել Դոն՝ հիվանդության պատճառով: Ազագինվելու
համար նա գնացել և Զերկասկ: Նրա հալքենիք վերադառնալուց
հետո Զիմովեյսկայի առամանը ստանիցալի ժողովին հարցըրել
եր նրան, թե վմրտեղից և ճարել շազանակազույն ձին, վորը
նստած տում և յեկել. Պուգաչովը պատասխանել եր, թե դա
գնել և Տագանրոդում, սակայն կազակները լավ իմանալով նրա
անառակ կլանքը, չեն հավատացել և նրան ուղարկել են գրա-
վոր վկալագիր բերելու: Պուգաչովը գնում և Այնինչ աեղեկա-
նում են, վոր նա Տագանրոդի մոտ բնակվող վորոշ կազակների
համոզելիս և յեղել փախչել գեղի հուրանի այն կողմերը: Վո-
րոշված եր Պուգաչովին հանձնել կառավարության ձեռը: Վե-
րադառնալով դեկտեմբեր ամսին, նա թագնվում և իր խուսա-
րում, ուր և բռնվում և, սակայն կարողանում և փախչել. յերեք
ամիս թափառում և հարտնի չե ուր. վերջապես, մեծ պասին,
մի անգամ յերեկոյան ծածուկ գալիս և իր տունը և բաղխում
պատունանը, կինը ներս և առնում նրան և այդ մասին իմաց
տալիս կազակներին: Պուգաչովը նորից և բռնվում և պահակի
հակողութամբ ուղարկվում հետախույզին՝ ավագանի Մակարո-
վին՝ Նիժնի—Զիրսկ ստանիցա. իսկ այնտեղից Զերկասկ: Ցա-
նապարհից նա կրկին փախչում և այդ ժամանակից այլև
չի հալտնվել Դոնում:

1772 թվի վերջին պալատական գործերի կանցելարիա
բերգած Պուգաչովի ազած ցուցմունքներից առդեն իսկ հարանի

յիր, վոր իր փախուստից հետո նա թագնվելիս և յեղել է հնական առաջանքի այն կողմը, Վետկա կոչված աղանդավորական ավանում. հետո անցագիր և վերցրել Դորբյանուկի առաջապահ պատրից, առելով, վոր լեհաստանցի և և մի կերպ անցել և դեպի Յափի, վողորմությամբ ազրելով—Սույն բոլոր տեղեկությունները հրապարակվեցին. այն ինչ կառավարությունն արգելեց ժողովրդին խոսել Պուգաչովի մասին, վորի անունը հուզում եր խաժամուտ ամբոխին, Վաստիկանական սույն ժամանակավոր միջոցը որենքի ուժ ուներ մինչև հանգուցքալ թագավոր կալսր Ալեքսանդրի գահ բարձրանալը, լերը թուլատրվեց գրել ու ապել Պուգաչովի մասին. Մինչև որս ել այն ժամանակա խանաշիոթութիւնն զառամբալ վկաները գտկամութիւնը են պատասխանում հետաքրքրվողների հարցերին¹⁾,

1) Արքայան կազակները մեծ ժամանք պահպատճեցին (ժամանակ ձերեքը) մինչև հրամ ել կոսպահ և Պուգաչովի հիշատակին Մեղք և տեղ, թե մենք զանգառանմ ենք նրանից,—առամ եք ինձ-այ 80-ամյա կազականի. Նո մեզ շարից յի պատճառակը—Հապա մի պատճեր ինձ, առամ եյի յիս Դիմիտրի Պյանդին—թե ինչպես Պուգաչովը յեղել և գո հարսանելայը:

— Նո քեզ համար և Պուգաչովը՝ զայտացած զառասիանց ինձ ձերը, ինչ ինձ համար նո մեծ թագավոր Պյառը նեղարովիչն եք—Սերբ յան հիշառմ եյի նրա անունական զամանաթյան մասին, ձերերը արքայացնում եյին նրան տանը՝ Հիմերը նշանը չեք, մեր հարցեցողներն եյին ուղարկում նրա առքերը՝ Սանօթ. նեղինակի:

Հինգերազ գլուխ

Թիրիկովի կարգադրությաւնները:—Առջին հաջողությաւնները:—Սարսոյի և Զայշնեկայի գրավում:—Դերժավին:—Մինելսոն:—Յարկյան քաղաքի պաշտոմն շարունակաթյունը:—Պուղաչովի հարսանիցը:—Իշեցիայ Զայշիայի կոշեանումը:—Լիսովի մահը:—Առկասամարտ Յատիշեկայի մաս:—Պուղաչովի փոխառությունը:—Ալոպուշայի մահապահիցը:—Ոչենքուրդի ազատումը:—Պուղաչովի ջարզում և յերկրորդ անգամ:—Կարգ Զեմենկովկայի մաս:—Ռեֆայի և Յարկյան քաղաքի ազատումը:—Թիրիկովի մահ:

Վերջապես ամեն կողմից Պուղաչովի դեմուղարկված զորքերը սկսեցին մատենալ իրենց նշանակված տեղին: Թիրիկովը նրանց ուղղեց զեպի Որենբուրգ: Գեներալ-մայոր իշխան Գոլիցինը իր կորպուսով պետք և փակեր Մոսկվալի ճանապարհը, գործելով կազանից մինչև Որենբուրգ: Գեներալ-մայոր Մանսուրովին հանձնված եր աջ թնը՝ Սամարայի գիծը պաշտպանելու համար, զեպի ուր իր զորախմբով հետեւց մալոր Մուլիլը և իննթաղնդապես Գրինլովը Գեներալ մայոր Լարիսոնովը ուղարկված եր գեպի Ռուֆա և Ցեկատերինբուրգ: Դեկալոնդը պաշտպանում եր Սիրիը և պետք և մալոր Գագրինին դաշտային մի զորախմբով ուղարկեր Կունդուրը պաշտպանելու: Մալիկովկա յեր ուղարկված գվարդիալի պարունիկ Դերժավինը՝ վաղան Գենզալի և Սարատովի կողմից պաշտպանելու: Համար: Հաջողությունն արդարացրեց այս կարգադրությունները: Բիրիկովը սկզբում կասկածում եր իր զորքի վզգու արիության վրա: Գնդերից մեկում (Վաղիմիրսկի գնդում) հայտնվեցին Պուղաչովի կողմնակիցներ: Գնդի անցնելիք քաղաքների պետքերին հրամայված եր շորերը փոխած շինովնիկներ ուղարկել կարահները: Ալսպիսով խռովարաները յերեան բերվեցին և բռնվեցին: Հետագայում Բիրիկովը գոհ եր գնդերից: «Գոր-

ծերս՝ զոհություն տառեռ՝ (զրում եր նա ժետրվարին) ժամ առ ժամ լավ են զնում. զորքերը մոռենում են չարապործների բնին, Վոր ինձնից զան են (Պետարբուրգում), զա լիս տեսնում եմ բոլոր նամակներից, միայն թե սագին հարցնեյին—վատներոց շին մրսում արդյոք»:

Մայոր Մուֆիլը մի զաշտալին զորախմբով դեկտեմբերի 29-ին մոռեցավ Սամարային, վոր նախորյակին զրավել եր բունտարարների մի հրասակ և հանդիպելով նրանց, ջարդեց ու քեց մինչև քաղաք: Ալսուեղ նրանք քաղաքի թնդանոթների պաշտպանության տակ փորձեցին դիմադրել: Սակայն զրագուն-ները¹⁾ թրերով հարձակվեցին և քաղաք մտան, փախչողներին կոտորելով և ձիերի սմբակների տակ արորելով: Հենց այդ ժամանակ Սամարայից յերկու վերստի վրա լերեացին Ստավրո-պոլսան կալմիկները, վորոնք գալիս ելին բունտարարներին ոգնության: Նրանք փախան, տեսնելով իրենց զեմ ուղարկած հեծելազորը, Քաղաքը մաքրվեց: Վեց թնդանոթ և լերկու հա-րյուր զերի ընկան հազթողի ձեռու: Մուֆիլից հետո Սամարա մտան յենթազնդապես Դրինելով և զեներալ-մայոր Մանուսու-րովը: Վերջինս անհապաղ մի զորախումբ ուղարկեց Ստավրո-պոլի ուղղությամբ՝ կալմիկներին խաղաղեցնելու համար: Առ-կայն նրանք ցըլիվ լսկան փախան և զորախումբը նրանց չտե-սած վերաբերձավ Սամարա:

Դնդապես Բիբիկովը, վորը չորս գրենազերյան վաշտերով և հուսարների մի եսկազորնով Ղազանից ուղարկված եր Բուգուլ-մայում առանց վորե զործողության կանգնած գեներալ-մայոր Ֆրեմանին ոգնության, շարժվեց դեպի Զաինակ, վորի յաթա-նասունամյա պարեսը՝ կապիտան Մերտզեցովը, զատվով եր ընդունել ավագակների հրոսակին, տալով նրանց քաղաքի իշ-խանությունը: Բունտարարներն ամրացան, ինչպես կարող ե-րին: գեռնս քաղաքից հինգ վերստի վրա, Բիբիկովը լսեց նրանց թնդանոթաձգությունը: Նրա գերանակալները ջարդվեցին, մարտկոցները զրավվեցին, արվարձանները առան: բոլորը փա-խան: Քանիներին գունտարար գյուղեր հնազանդության յեկան: Որական մինչև չորս հազար զղացող զյուղացիներ ելին ներ-կարանում Բիբիկովին: Նրանց տումեր եյին տալիս և բաց Բող-նում իրենց աները:

1) Դրադուներ—այբուձիք մի տեսակը, յերբ հեծյաներն իշխում եյին ձիերից՝ առան ընդունելու հաւաք: Ծ. թ.

Դերժավինն իր ձեռքի տակ ունենալով յերեք ֆուզելեր-
յան վաշտեր¹⁾։ Հնագանդության բերեց նրգիզի ափերին գտնվող
աղանդավորական գլուղերը և նարկի ու Վոլգայի միջն թափա-
ռական վաչկառաւն ցեղերի հորդաները։ Մի անգամ տեղեկանա-
լով, վոր մի գյուղում բազմաթիվ ժողովուրդ և հավաքած
Պուգաչովի մոտ ծառայության գնալու դիտավորությամբ,
յերկու կաղակներ հետև տռած նաև յեկավ ժողովատեղ և ժողո-
վրդից բացարություն պահանջեց։ Գրգոհիներից յերկուաը գուրս
յեկան ամբոխից, հալանելով նրան իրենց դիտավորությունը և
սկսեցին մոռենալ նախատինքներով ու սպառնալիքներով։ Ժո-
ղովուրդն արդեն պատրաստ եր մոլեգնելու։ Սակայն Դերժավինը
խստությամբ գոռաց նրանց վրա և իր կաղակներին հրամայեց
կախել զույգ գրգոհիներին։ Նրա հրամանն իսկուն ևել կա-
տարվեց և հավաքվածները ցաք ու ցրիզ փախան։

Դեմերալմայոր Լարիոնովը, աղնվականական լեզիոնի
պետը, վոր ուղարկված եր Ուֆան աղատելու, չարգարացրեց
ընդհանուր հույսերը «Իմ մեղաց համար (գոռոմ եր Բիրիկովը)»
վզիս կապվեց յեղբայրն իմ Ա. Լ., վորն սկզբում ինքը պատ-
րաստակամություն հայտնեց հրամանատարություն անել տո-
ռանձին գետաշմենու...²⁾, իսկ հիմա տեղից շարժել չեմ կարո-
ղանում։ Լարիոնովը մնում եր Բակալիում տռանց վորեն դոր-
ծողության։ Նրա անընդունակությունը զիտավոր հրամանատա-
րին հարկադրեց նրա տեղ ուղարկել յերբեմն իր ներկայու-
թյամբ վիրավորված և կոնֆեղերատների դեմ մղվող պատե-
րազմում արդեն իսկ աշքի լընկած սպա, այդ ժամանակ յենթա-
գնդապես Միխելսոնին։

Իշխան Գոլիցիինն ընդունեց Ֆրեյմանի զորքերի հրամա-
նատարությունը։ Հունվարի 22-ին նա լանցավ կամա դեմը։
Փետրվարի 6-ին նրան միացավ զնդադեմ Բիրիկովը։ 10-ին՝
Մանսուրովը։ Զորքը շարժվեց դեպ Որենթուրդ։

Գուգաչովը զիտեր զորքի մոռենալը և արդ մասին քիչ եր
հոգում։ Նա իր հուկաը զրել եր շարքալինների դավաճանության

1) Տուշ է և ուշ է շաբաթը — հետեւկողոր, վոր զինված եր կոյժաքուրի ուրբ
ունեցող հրացաններով։ Տ. զրամաները առաջին անգամ յերեսըին XVII դ.
2-րդ կերպու։

2) Դեռաջ մենա (Պը.)— ջակտո, վոր շնորհի իր գուռքաշարժությանը
կոտարում եր այս կամ այն կարեօք ու շատոց նախարարությունը Մ. Բ.

և զորապետների անհոգության վրա: — Ի՞շխաները կընկնեն մեր ձեռուք, — պատասխանում եր նա իր համախոներին, յերբ նրանց հաստատագեն կոչ ելին անում նրան դուրս գալ մոռեցող զորախմբերի դեմ, իսկ պարտության դեպքում նա մտադիր էր փախչել, իր սրբիկաներին թողնելով բախտի քմահանույթին: Այդ նպատակի համար նա մեծ խնամքով պահում էր լիբերում ձի, վոր նա ընտրել էր ձիորշավի ժամանակի: Բաշկիրները կասկածի տակ եյին առնում նրա դիտավորությունը և տրանջում: «Դու մեզ զրդեցիր բունա անել, — ասում եյին նրանց, — և ուզում ես մեզ թողնել, իսկ հետո մեզ կիաղաղեցնեն, ինչպես խաղաղեցրել են մեր հայրերին»: (1740 թվի մահապատճեները դեռ ևս թարմ երին նրանց հիշողության մեջ¹⁾): Իսկ յափկան կազակներն անհանդության դեպքում մտադիր ելին Պուգաչովին հանձնել կառավարության ձեռը և դրանով իրենց համար ներումն վաստակելի նրանց պահպանում եյին նրան ինչպես պատանդի: Բիրիկովը հասկանում էր նրանց և Պուգաչովին, լեռը Փոն-Վիզինին գրում եր հետեւյալ նշանակալից տաղերը: «Պուգաչովը վոչ ու ինչ ե, քան յեթե մի խրամիլակ, վոր խաղալիք և գարձել գողերի՝ լափկան կազակների ձեռին: Կարևորը Պուգաչովը չե, կարևորն ընդհանուր վրգովմունքն եւ:

Պուգաչովն Որենքուրդի մոտից զնաց գեղի Յափկան փոքրիկ քաղաքը: Նրա դալը կենդանացրեց խոռվարաների գործունեյությունը: Հունվարի 20-ին նա ինքը զեկավարեց հիշատակության արժանի հարձակումը: Դիշերը պալթեցրեց Ստարիցյալի (Յափկի նախկին հունի) մոտ հաստատված մարտկոցի տակի պատնեշի մի մասը: Խառվարարները ծիրի և փոշու տակ գեղիքը բերդ նետվեցին, գրավեցին խրամատը և սանդուխներ զնելով, փորձեցին բարձրանալ պատնեշի վրա: սակայն չարաշար յետ մզկեցին: Բոլոր բնակիչները, մինչև իսկ կանայք ու յերեխաներն ոգնում եյին նրանց: Պուգաչովը նիզակը ձեռին կանգնած էր խրամատի մեջ, սկզբում աշխատելով սիրալիբությամբ գըր-

1) Բաշկիրների ողոտամքական զարժամը տևեց 1735 թ. մինչև 1742 թ. Բաշկիրները IX դարից բնակություն երին հաստատել մերձ-ուրալյան յերկրածուռը և զիմազգելով ուսուկան զաղութացմանց մի շորք ողոտամքաւթյուններ բարձրացրին, վորոնց միշտ եւ նեղին ամենազաման քեղանակներով: Մասնավորպես 1740-1741 թ. թ. աղոտամքաւթյունը նեղին միջացին հրամարեկ յեղակ 500 զրուց, մոտ 30 հազար բաշկիրներ մահապատճի յենքութեցին և կամ բնաւթյունը սորումներ գործուն Սորոսի սորուներ: Նպատակով ուսու կառավարությունը կորել ունից լորժման գործին մասնակիցների (301 հզու) քթերն ու ականջները: Ծ. թ.

դանել հարձակվողների յեռանդը, վերջապես ինքն իր ձեռով ծառակոտելով փախչողներին, հարձակումը տևեց ինն ժամ անընդհատ անդադար վորոտացող թնդանոթաձգության ու հրացանաձգության տակ: Վերջապես յենթագնդապես Տոլստովալովը հիսուն կամավորների հետ արտազրոն արեց, խըամատը մաքրեց և քշեց բունտարաբներին, սպանելով մինչև չորս հարյուր մարդ և կորցնելով տասնմասինդից վոչ ավել: Պուգաչովն առամներն եր կը ճանացնում: Նա լերզվեց կախել վոչ միայն Սիմոնովին և Կոկլովին, այլ և վերջինիս ամբողջ ընտանիքը, վորայդ ժամանակ գտնվում եր Որենքուրզոււ: Այսպիսով մահվան եր դատապարտված և չորսամյա մի մանուկ՝ հետագալում փառապանծ կռիլովը:

Պուգաչովը Յաիկյան քաղաքում տեսավ մի ջանել կազակուհի՝ Ուստինյա Կուզնեցովային և սիրահարվեց նրան: Նա ինըրեց աղջկա ձեռը, հալքն ու մալքն աղջեցին և պատասխանեցին նրան: Վլողորմի՛ր մեզ, տեր թագավոր, մեր աղջիկն իշխանունի չե, թագուհի չե, նա մնչպես կարող ե քեզ կին լինել: Համ ել՝ դու ինչպես պիտի ամուսնանաս, լերը մեր վողորմած մալք թագունին զեռ կենդանի յեւ: Պուգաչովը սակայն փետըրվարի սկզբին ամուսնացավ Ուստինկայի հետ, նրան թագունի անվանեց, նրա համար շտատա-դամաներ և Փրելիիններ նշանակեց լաիկյան կազակունիներից և ուզում եր, վոր մաղթանքի ժամանակ Պուտր Ֆեոդորովիչից հետո հիշեն թագունի Ուստինյա Պետրովնային: Տերտերները չհամաձայնեցին, ասելով թե այդ բանի համար թույլտվություն չեն ստացել սինողից: Նրանց հրաժարվելը վշտացրեց Պուգաչովին, բայց նա չպնդեց իր պահանջը: Նրա կինը մնաց Յաիկյան փոքրիկ քաղաքում և ինքը ամեն շաբաթ գնում եր նրա մոտ: Պուգաչովի ներկայությունը միշտ նշանակալից եր գառնում բերդի վրա կատարվող նորանոր հարձակումներով: Պաշարվածներն իրենց կողմից չեցին կորցնում արխությունը: Հրացանաձգությունը չեր դադրում, արտկելքներն անպահան եյին:

Փետրվարի 19-ին գիշերը քաղաքից բերդ վազեց մի փոքրիկ տղա և հայտնեց, վոր նախընթաց որվանից զանգակատան տակը ական և տարված, ուր զբված և քան փութ վառող, և վոր Պուգաչովը կարգադրել և նույն որն եեթ հարձակվել բերդի վրա: Այդ տեղեկությունն անհավանական թվաց: Սիմոնովը յենթադրում եր, վոր տղան գիտմածը և ուզարկված՝ սոսկ ան-

ու տարսափ տարածներու համար։ Պաշարվածները հակառական փոքրեցին և չլսեցին հողային աշխատանքի վոչ մի ձայն։ քսան փութվառողջ դժվար եր պայթեցնել վեց հարկանի բարձր զանգակառունը։ Սակայն, քանի վոր նրա տակը, ներքնահարկում, պահվում եր վառողի ամբողջ պաշարը (վորի մասին կարող եյին խմանալ և խռովաբարները), ուստի և շտապեցին դա հեռացնել արդարեղից, քանդեցին աղբուսե հասակը և ուկսեցին հակառական տանելը կայազորը պատրաստվեց։ պալթունի և հարձակման եյին սպասում։ Զանցավ յերկու ժամ, լերը հանկարծ ականը դործի դրվեց։ զանգակառունը հանգարա յերշերվեց, ներքեի սենյակը քարուքանդ լեզավ և վերին վեց հարկերն իջան, ճիշելով զանգակառան մոտ կանգնած մի քանի մարդկանց։ Թարերն առանց ցրվելու թափկեցին կուտակ-կուտակ։ Խոկ ամենավերին հարկում թնդանոթի հետ յեղած վեց մարդիկ ալնտեղից կենդանի վայր ընկան, իսկ նրանցից մեկը, վոր արդ ժամանակ քնած եր, ցած իշավ վոչ միայն առանց վորեւ վնասի, այլ մինչև իսկ առանց արթնանալու։

Զանգակառունը նոր եր թափել, յերը բերդից արդեն սկսեցին վորոտալ թնդանոթները։ հրացանները ձեռին պատրաստ կանգնած կալազորը խկույն ենթ բռնեց զանգակառան փշատակները և ալնտեղ մի մարտկոց դրեց։ Խովվարաբները, վորոնք չեյին սպասում այսպիսի դիմավորում, կանգ առան վարանման մեջ, մի քանի բռպեյից նրանք բարձրացրին իրենց սովորական աղաղակները, սակայն վոչ վոք առաջ չեր գնում։ Իզուր դեկավարները կանչում եյին. դեպի քանզվածը, մն, առաջ, քաջ առամաններ։ Հարձակում չեղավ. աղաղակները շարունակվեցին մինչև արշալուս և բռնտարարները ցրվեցին, արտնջալով Պուգաչովից, վորն իրենց խոստացել եր, թէ զանգակառան պայթյունի հետ բերդի վրա քարե կարկուտ կտեղա և կնզմի ամբողջ կայազորը։

Մյուս որը Պուգաչովն Որենքուրդի մասից լուր ստացավ իշխան Գոլիցինի մոտենալու մասին և շտապով մեկնեց մերզա. հետը վերցրեց հինգ հարլուր միտվոր և մինչև հազար հինգ հարլուր սայլեր։ Սույն լուրը հասավ և պաշարվածներին նըանք անձնատուր լեղան ուրախության, կարծելով թե լերկու շարաթից իրենց ոզնություն կհասնի։ Սակայն նրանց փրկության ըռպեն գեռ հեռու յեր։

Պուգաչովի հաճախակի բացակարար յունների ժամանակ

Շիզալեվը, Պադուքովը և Ալոպուշան ղեկավարում եյին Ուժեն-
բուրգի պաշարումը։ Ոգտվելով Նրա բացակայությունից Ալո-
պուշայի խելքին Փեղ զրավել Իլեցկայա-Զաշչիտան (ուր քա-
բաղի Հանքեր կային), և փետրվարի վերջին իր հետ վերցնելով
Հորս հարլուր մարդ, Հարձակվեց Նրա վրա։ Զաշչիտան դրավեց
այնուղի աքսորական գործավորների ոգնությամբ, վորոնց
մեջ եր գտնվում և Ալոպուշայի ընտանիքը։ Արքունական գույքը
Թալանվեց, սպաներին կոտորեցին, բացի մեկից, վորին խնայե-
ցին զործավորների խնդրան քով։ Կալանավորներին միացրին
խռովարարների հրոսակախմբին։ Բերդա վերադառնալով Պու-
գաշովը գծգունեց խիզախ առանակրի հնքնազլուխ գործի հա-
մար և նախատեց Նրան Զաշչիտայի ավելման առիթով։ Վոր-
ոնիս թե վճառ և յեղել պետական գանձարկղին։ Պուգաչովը
տաս հազար ընտիր զորքերով դուրս յեկավ իշխան Գոլիցինի
դեմ, Որին բուրգի պատերի տակ Թողնելով Շիզային լերկու հա-
զար մարդկանցով։ Նախորդակին նա հրամալեց ծածուկ կերպով
խեղզաման անել իր հավատարիմ համախուներից մեկին՝ Դմիտ-
րի Լիսովին։ Դրանից մի քանի որ առաջ Նրանց միասին Բերդա-
նին վնասմ Նարզալեյից և, Հարբած լինելով ճանապարհին կըռ-
վեցին։ Լիսովը հետևից ձին քշեց հասավ Պուգաչովին և հար-
զածեց Նրան նիզակով։ Պուգաչովը ձիուց ընկավ, սակայն դրա-
հը, վոր նա միշտ կըռում եր շորերի տակից, փրկեց Նրա կլանքը,
Ընկերները Նրանց հաշտեցրին և Պուգաչովը դիմես Լիսովի մտ-
հից մի քանի ժամ առաջ խմում եր Նրա հետ։

Պուգաչովն առավ Տոցկայա և Սարովինակայա բերդերը, և
իր սովորական հանդքնությամբ դիշերով, սաստիկ բժի ժամա-
նակ Հարձակվեց Գոլիցինի, առաջավոր զորախմբերի վրա, սա-
կայն յետ մզգեց մալոք Պուգաչինի և մալոք Յելագինի կողմից։
Այս կամի մեջ սպանվեց քաջ Յելագինը։ Հենց սույն ժամանակ
Մանսուրովը միացավ իշխան Գոլիցինի հետ։ Պուգաչովը նահան-
ջեց զեզի Նովոսերգինեվուկ, Հերոդանալով այրել իր թողած
բերդերը, Գոլիցինը իր պաշարները չորս հարլուր մարդկանց և
ութ թնդանոթների պաշտպանության տակ Սարովինակայա
բերդում թողնելով, յերկու որից հետո շարունակեց իր ճանա-
պարհը։ Պուգաչովը շարժվեց զեզի Իլեցկ քաղաք, և հանկարծ
շրջվելով զեզի Տատիշչեվա, այնտեղ կանգ տռավ ու սկսեց ամ-
րանալ։ Գոլիցինն ուզում եր Իլեցկ քաղաքն ուղարկել լենթա-

գնդապետ Բեղրյազային յերեք եսկազըրոն Հեծելազորով, հետոն
ել Հետեակազըր և Թնդանոթներ, իսկ ինքը զնաց ուղիղ Պե-
րեմուրցկայա (ուր և Բեղրյազան վերադառնավ), այստեղից, գու-
մակը թողնելով յենթագնդապետ Դրինը վի հրամանատարության
տակ գտնվող մի բառալիոնի պաշտպանատթյան ներքո, մարտի
22-ին մատեցավ Տատիշչեվային:

Մերդը, վոր անցլալ տարի տաել և այրել եր Պուգաչովը,
նու արդին կարգի յեր բերել Այրված փալտե ամբությունները
նու փոխարինել եր ձնե ամբություններով Պուգաչովի կարգա-
դրությունները զարմացրին իշխան Գոլիցինին, վոր նրանից
չեր սպասում սազմական արգեստի արդպիսի գիտելիքները
Գոլիցինն սկզբում յերեք հարյուր մարդ ուղարկեց թշնամուն
հետագութելու համար: Առովարարները թագնվելով, նրանց թո-
ղին մոտենալու մինչև բերդի տակը և հանկարծ ուժգին ար-
տագրունի լիւան, սակայն նրանց կասեցրին առաջին զորախորմ-
քին ոգնության ուղարկած յերկու եսկազըրները: Գնդապետ
Բիբիկովն իսկույն ենթ ուղարկեց յեղերներին, վորոնց զանուկ-
ներ կապած խոր ձյան վրալով վազելով զրավեցին բոլոր նպաս-
տավոր բարձունքները: Գոլիցինն իր զորքը բաժանեց լիրկո-
զորասլունների, սկսեց մոտենալ և կրակ բացեց, վորին բերդից
պատասխանեցին նույնքան ուժեղ: Թնդանոթաձգությունը շա-
րունակվեց յերեք ժամ: Գոլիցինը տեսավ, վոր միայն թնդա-
նոթներով հաղթելը անհնար և և հրամայեց զեներալ Ֆրեյմա-
նին ձախ զրասյունն առած զնալ հարձակման: Պուգաչովը նրա
զեմ հանեց յոթ թնդանոթ: Ֆրեյմանը խլեց դրանց և նետվեց
ստուծ պատճեցի վրա: Առովարարները պաշտպանվում եյին
կատաղի կերպով, սակայն սահմանակած եյին տեղի տալ կանոնա-
վոր զենքի ուժին—և փախան ամեն կոզմ: Հեծելազորը, վոր
մինչև ալդ անկործության մեջ եր, հետապնդեց նրանց բոլոր
ճանապարհներով: Արդուննեղությունը սոսկալի յեր: Միայն
բերդում ընկան մինչև հազար յերեք հարյուր խռովարներ:
Տատիշչեվոյի շարքը՝ քառան վերստ տարածության վրա թափված
ելին նրանց դիակները: Գոլիցինը կորցրեց մինչև չորս հա-
րյուր մարդ սպանված ու վիրավոր, ալդ թվում և ավելի քան
քսան սպաներ: Հաղթությունը վճռական եր: Յերեսունեպես
թնդանոթ ու ավելի քան յերեք հազար գերիներ ընկան հաղթո-
ղի ձեռը: Պուգաչովը վաթսուն կազակների հետ ճեղքեց թշնա-
մու զորքը և չորս հոգով սրաբշավ հասավ Բերդա ավանը լուր

տալով իր պարտության մասին։ Թունտարարներն ակսեցին դուրս գալ Բերդայից վորը ձիով վոր սահնակով։ Սայլերի վրա բարձեցին թալանած զույթը, կանալը և լեռեխաները վառքով ելին գնում։ Պուղաչովը հրաժայեց կոտրել իր խրճիթի մոտ ընկած ողու տակառները՝ յերկյուղ կրելով հարբեցությունից ու խառնաշփոթությունից։ Ողին արտավիժեց փողոց։ Նույն միջոցին Եիզայելով տեսնելով, վոր ամեն ինչ կորած է, մտածեց ներումն վաստակել իր համար, և Պուղաչովին ու Ալոպուշային բանելով, իր կողմից մարդ ուղարկեց Որենքուրզի նահանգապետին, առաջարկելով նրան՝ հանձնել Պուղաչովին և խնդրելով՝ իրեն ազգանշան տալ թնդանոթային յերկու կրակոցով։ Հարյուրապետ լոգինովը, վորն ուղեկցել եր Պուղաչովին փախանական ժամանակ, սույն տեղեկությամբ ներկայացավ Ռենդուղորպին։ Խեղճը Ռեյնսդորպը չամարձակվեց հավատալ իր բախտին և ամբողջ յերկու ժամ չկարողացավ վճռել՝ տալ պահանջված ազգանշանը։ Մինչ արդ Պուղաչովը և Ալոպուշան ազատվեցին Բերդոյում գտնվող աքսորականների ձեռովով։ Պուղաչովը փախակ տասը թնդանոթով, թալանած ավարով և մնացած յերկու հազար սրիկանների հետ Ալոպուշան սրարշավ Դարդալե լեկավ, զիստավորություն ունենալով փրկելու իր կնոջն ու վորդուն։ Թաթարները կապեցին նրան և այդ մասին մարդ ուղարկեցին նահանգապետին հայտնելու։ Յերեւլի տաժանակիրը Որենքուրզը բերվեց, ուր և վերջապես կտրեցին նրա գլուխը 1774 թվի հուլիսին։

Որենքուրզի բնակիչները լսելով իրենց ազատման մասին, խառնիբուռն խմբերով դուրս նետվեցին քաղաքից, ընկան Ռեյնսդորպի՝ Բերդա ավանն ուղարկած վեցհարյուր հետևակ մարդկանց հետեւից և գրավեցին կենսամթերքները։ Բերդայում գտնվեց տասնութ թնդանոթ, տամնութ տակառ պղնձադրամ և մեծ քանակությամբ հացահատիկ։ Որենքուրզում փութացին աստծուն գոհություն հայտնել անսպասելի փրկության համար։ Որհնում եյին Գոլիցինին։ Ռեյնսդորպը զբեց նրան՝ շնորհավորելով հաղթությունը և անվանելով Որենքուրզի փրկիչը։ Այնու տեղերից սկսեցին պարեն կրել քաղաք։ Լիություն ընկավ։ Վեցամսյա աղետալի պաշարումը մոռացվեց մի ուրախ վալլեկյանում։ Մարտի 26-ին Գոլիցինին լեկավ Որենքուրզ։ բնակիչները նրան ընդունեցին աննկարագրելի խանգավառությամբ։ Բիբիկովն անհամբերությամբ սպասում եր այս բեկմանը։

Ռազմական գործողություններն արագացնելու համար նա դուքս էնկավ Դազանից և Բուզուլմայում առավ Պուզաչովի կատարյալ պարտության լուրը, նա անասելի ուրախացավ, «Ասես մի ջաղացաքար ընկավ սրտիս վրայից (գրում եր նա մարտի 26-ին իր կնոջը), Այսոր իմ գործերը կմանեն Որենբուրգը, անհապաղ և յես կշատրվեմ այստեղ համարու, վորպեսզի եւ ավելի ճարպկությամբ շարժեմ իմ գործերը, իսկ քանի սպիտակ մագիստ ավելացան մորուքի մեջ, ոտ առաված գիտե, իսկ զլիսիս հաղատությունն ավելի մեծացավ, սակայն յես ստոնամանիցին դուքս եմ գալիս տանց կեղծամիշ»:

Այսինչ Պուզաչովը մի կողմ թողնելով, իր յետեից ուղարկված հեծելագետերին, 24-ի առավուտան հասավ Սեյխավակայա ավանը, այրեց այն և գնաց Ստեկմարսկ քաղաքի վրա, ճամբին նոր սրիկախմբեր հավաքելով, Հավանորին նա յենթադրում եր, վոր Գոլիցինը Տատիշչևվայից իր բոլոր ուժերով շարժված կլինի գեղի Յարիկան փոքրիկ քաղաքը, ինչու և հանկարծ գնաց գրավելու Բերդա ավանը, հույս ունենալով անսպասելի կերպով առնել Որենբուրգը: Այդուրինակ հանդինության մասին Գոլիցինը տեղիկանաւով գննդապետ Խորվատից, վորը Պուզաչովին հետապնդում եր սկսած Տատիշչևվայից, իր զորքն ուժեղացրեց Որենբուրգում գտնվող հետևակախմբերով և կազակներով. վերջիններիս համար հատկացնելով իր սպաների ձիերը, անմիջապես գնաց ինքնակոչի գեմ և նրան հանդիպեց Նարզալեյում: Պուզաչովը, տեսնելով իր սխուլը, սկսեց նահանջել, վարպետությամբ ոգումներով տեղադրությունից: Մի նեղ հանապարհի վրա գնդապետ Բիբիկովի և Արշենեսկու զեմ նա հանեց յաթ թնդանոթ և նրանց պաշտպանության տակ արտադ կերպով շարժվեց գեղի Սակմարա գետը. Բայց այդ միջոցին Բիբիկովին ոգնության յեկան թնդանոթներ. սարը զբավելով նա դրեց իր մարտկոցը. Խորվատը վերջին կիրճի մեջ հարձակվելով խռովարարների վրա, թիգանոթները խլեց և փափուստի մատնելով, ութը վերսահետպանդեց նրանց խառնիճաղանճ խմբերը և հետևերը միասին մտավ Սակմարսկ քաղաքը, Պուզաչովը կորցրեց իր վերջին թնդանոթները, չորս հարյուր սպանված և յերեք հազար հինգ հարյուր գերի ընկած մարդ: Վերջիններին թվում ելին գտնվում և նրա գլխավոր համախուները՝ Շիգայիվը, Գիշիտալինը, Պաղուրովը և մյուսները, Պուզաչովը չորս գործարանալին գյուղացիների ետ փախավ գեղի Պրեշիտենսկարա և այսաղից»:

ուրապլան գործարանները։ Հոգնած այրումին կարողացավ հասնել նրան։ Այս վճռական հաղթությունից հետո Գոլիցինը վերադարձավ Արենբուրգ, ուղարկելով Ֆրեյմանին—Բաշկիրիան խաղաղեցնելու համար, Արշենեսկուն—Նովո-Մուկովսկայա ճանապարհը մաքրելու, իսկ Մանսուրովին—գեղի Իլեցի քաղաք, վորոնեսովի այն մասը մաքրելուց հետո նա գնա Սիմոնովին պատելու։

Իր կողմից վոչ պակաս հաջողությամբ եր գործում և Մինելունը, Մարտի 18-ին ընդունելով իր զորախմբի հրամանատարությունը, նա խկույն և եթ շարժվեց գեղի Ռուսա, Նրա դեմ, ճանապարհը փակելու համար Զիկան ուղարկեց յերկու հազար մարդ չորս թնդանոթներով, վորոնց և նրան սպասում եյին ժուկովով գյուղում։ Միխելսոնը նրանց իր թիկունքում թողնելով, ուղիղ գնաց Զեսնոկովկայի վրա, ուր կանգնած եր Զիկան տաս հազար խոռվարարներով և ճանապարհին ցրելով մի քանի մանր զորախմբեր, 25-ի լուսաբացին յեկավ Տրեբիկովո գյուղը (Զեսնոկովկայից հինգ վերստի վրա), Այսաեղ նրա դեմ գուրս յեկավ բունաւարարների մի ամրությերկու թնդանոթներով։ Մայոր Խարինը ջարդեց նրանց և ցրեց, յեկերները խլեցին թնդանոթները և Միխելսոնն առաջ շարժվեց։ Նրա գումակն ընթանում եր հարցուր մարդու և մի թնդանոթի պաշտպանության տակ, Հարձակման դեպքում ևս նրանք ելին պաշտպանում Միխելսոնի թիկունքը, 26-ին, լուսադեմին Զուրովկա գյուղի մոտ նա հանդիպեց խոռվարարներին։ Նրանց մի մասը՝ դահուկավորներ և ձիավորներ՝ զուրս վագեց գյուղից և ճանապարհի յերկու կողմը փոփելով, աշխատում եր շրջապատել նրան։ Յերեք հազար մարդ, տաս թնդանոթներով ուղիղ նրա վրա եյին գալիս։ Նույն միջոցին կրակ տեղացին գլուղում դրած մարտկոցից, Կոխվը տեսեց չորս ժամ։ Բունաւարարները կռվում եյին քաջարար։ Վերջապես Միխելսոնը տեսնելով նրանց ոգնության յեկող այրումին, իր բոլոր ուժերն ուղղեց զիկավոր խառնիճազմն բազմության դեմ և իր հեծելազորին, վորը կռվի սկզբում իրրե հետևակ եր գործում, հրամալեց նստել ձիերը և խփել թրերով։ Առաջավոր խմբերը փախան, թողնելով իրենց թնդանոթները, Խարինը նրանց թրատելով հետները միասին մտավ Զեսնոկովկա։ Այնինչ դեղի Զուրովը նրանց ոգնության բեկող այրումին հետ մզվեց և փախավ նույնպես դեղի Զեսնոկովկա, ուր նրա դեմ գուրս յեկավ Խարինը և բոլորին գերի վերցրեց։

Դաւակավորները, վորոնք արդեն անցել ենին Միինելսոնի թի-
կունքը և նրան կարել գումակից, նույն այդ ժամանակ ջարդ-
վեցին գրենազերների յերկու վաշտերի կողմբց: Նրանք ըը-
վելով փախան անտառները, Գերի ընկան յերեք հազար բռն-
տարարներ, Գործարանային և եկունութիկալին²⁾ պյուղացիներին
բաց թողին իրենց պյուղերը, Վերցվեցին քաննինց թողանոթ
և մեծ քանակությամբ պաշտեղնեն Միինելսոնը կախեց յերկու
զիւսավոր բռնտարարների: բաշկիրական ավագին և Զենոնիկով-
կա պյուղից ընտրվածին, Ուֆան ազատվեց, Միինելսոնը վոչ մի-
տեղ կանգ չառնելով, զնաց Տարիինակի վրա, ուր, Զենոնիկովկայի
ճակատամարտից հետո սրարշավ հասել ենին Ուլյանովը և Զի-
կան: Այստեղ կազմակերը նըսանց բռնեցին և ավին հազըողի
ձեռը, վորը նրանց շղթաւակառ ուղարկեց Ուֆա: Իրանից հետո
Միինելսոնը հեծելազաններ կարգեց բռլոր ուղղությամբ և կա-
ըստացավ վերականգնել անդորրությանը բռնտարար պյուղերի
մեծ մասում:

Բնեցկ քաղաքը և Ազգերնայա ու Ռասութիպնայա բներգիրը՝
Պուլամշովի տռա՞ին հաջողությունների ալս վկաները, արգեն
Խոզել երին խռովարարները, Նրանց պետերը՝ Զուլոցնիկովը և
Նզրատինը փախել ելին գետի Յանկիան փոքրիկ քաղաքը։ Ցա-
տեցնելված տակ ինքնակոչի կրած պարտության լուրը նույն
որն ենթ հասավ նրանց։ Առովատի հուսարների կողմից հետա-
պնդվող փախչողները սրարշավ անցան բերդի միջով, ազգա-
կելով։ Գլխաների ճամբը տեսեց, աղերք, ամեն ինչ կորած եւ:
Նրանք շատապվ կապեցին իրենց վերքերը և փութացին գետի
Յափկան քաղաք։ Շուտով վրա հասավ գարնանալին ձնհալքը-
գետները բացվեցին և Տատիշչելվալի տակ՝ սպանվածների մարմին-
ները լողացին բերդերի մոտով։ Սպանվածների կանուք և
մայրերը կանգնած երին գետափին, ջանալով նրանց մեջ ցա-
նացնել իրենց ամուսիններին ու մորդիններին.

Ողերշուրում մի պառավ կազմակունի ամեն որ թափառում եր Յայիկի տփերին և ձեռնափայտով զերպի ափն եր քաշում լուղցող դիմակները և ինքն իրեն խոսում... Շվերդյակ, դժ. յիս, գն. յիս իմ Ստեղուչչա: Սառը ջուրը չը վոր քո ուն զանգուրներն եւ լվանում: և տեսնելով ոտար դեմք, մեղմիկ քշում եր ոյիսեր:

Самостоятельное же 6-е и 7-е в 1940 году вновь было учреждено в виде самостоятельной организации под названием Ученый совет по изучению языка и литературы народов СССР.

1) $9 \times p^4 = p = 3 = 3$ *gives us a third solution* $p=3$ *which gives us* 43 *as the answer.*

Ն կ ո ն ա մ ի ս կ ո յ ս պ ո ւ զ ա ց ի ն ե ր ը — ա յ ս պ ե ս ե յ ի ի ն կ ո չ ք ո ւ մ է հ ի ն թ ո ւ ս տ ո ւ ս տ ո ւ ն ի վ ա ն ց ո ւ զ ա ց ի ն ե ր ը , գ ո ր ս ն ց վ ա ն ց ե ր ի ս տ ի ս կ ա ն ու թ յ ա ն շ ա յ լ ի ց (ս ե կ ո ւ լ յ ա շ ը լ յ ա ց ի տ) ն ե տ օ շ ն կ ա ն ն ո ւ կ ո ւ ր ո ւ կ ա ն ո ւ թ յ ա ն ի կ ո ւ ր ա ց ե ց ե ր ի և կ ո ւ ն ա մ ի կ ո յ ս ի (ա ն ո ւ հ ա ս թ յ ա ն) կ ո ւ ն ե ց ա յ ի ս տ ի ս կ ա ն ու թ յ ա ն ո ւ կ ա ն ի , վ ա ր ց և ա ռ ա ջ ա ց ի և ա յ ս մ ե ռ ո ւ ն ը 1786 թ . ա յ դ կ ո լ լ ե ց ի ն ա ն վ ե ր ո ւ զ ա ց ի ց և ս ե կ ո ւ հ ա ս թ յ ա ն ո ւ կ ա ն ի պ ա ր մ ա ն պ ա տ ո ւ ն ։ Ս . թ .

զանոթ, 15-ին, վարարած Բիկովկալով վտանգավոր գետանցի ժամանակ նրա վրա հարձակվեցին Ովչյանիկովը. Պերֆիլես և Դեղոյարովը՝ Խոռվարարները ջարդվեցին, ըրվեցին, Բեղրյազան և Բորոջինը հետապնդեցին նրանց, սակայն ձնհաւթի հետևանքով ճանապարհների անանցանելիությունը փրկեց առաջնորդներին. Մանուկրովն անհապաղ գնաց Յարկյան փոքրիկ քաղաքի վրա.

Բերդը պաշարված եր դեռևս տարվա սկզբից. Պուգաչովի բացակայությունը չեր հանգնում խռովարարների յետանդը Դարրնոցներում լինգեր և բաներ ելին շինվում, մարտկոցներ եյին բարձրանում. Խոռվարարները լեռանդուն շարունակում եյին իրենց հողալին աշխատանքները, մերթ պատելով Զեչորի ափը և դրանով վոչնչացնելով քաղաքի մի մասի հաղորդակցությունը մյուսի հետ, մերթ խրամատներ փորելով, վորպեղի արդելին արտադրուհները, Նրանք մտադիր ելին ականներ անցկացնել Ստարիցակի զարիթափով, ամբողջ բերդի շուրջը, մայր տաճարի տակը, մարտկոցի տակ և Կամենդանտսկի կոչված շենքերի տակ. Պաշարվածները գտնվում ելին մշտական վտանգի մեջ և իրենց կողմից հարկադրված եյին ամեն կողմից հակաականներ տանել, զժվարությամբ փորելով մի ամբողջ արշին սառած զետինը. բերդն արգելափակում եյին նոր պատով և պալթեցված զանգակատան աղյուսներով լի պարկերով:

Մարտի 9-ին, լուսաբացին լերկու հարյուր հիսուն շարքակին զինվորներ դուրս յելան բերդից. արտազրոնի նպատակն եր պաշարվածներին սաստիկ անհանգստացնող նոր մարտկոցի վոչնչացումը. Զինվորները հասան մինչև կապանները, սակայն հանդիպեցին ուժեղ կրակի. Նրանք խառնվեցին միմյանց. Խոռվարարները Նրանց բանուեցին կապանների և խրճիթների միջև ընկած նեղ անցքերում. Նրանք ուղղում եյին ալբել արդ խըրճիթները. ծակոտում ելին վիրավորներին ու ընկնողներին և կացիներով կարում Նրանց գլուխները. Զինվորները փախան: Նրանցից սպանված եր մոտ յերեսուն մարդ և վիրավորված՝ մինչև ութուն. Կալապորը լերենք արզպիսի կորուստով չեր վերադարձել արտյելքից. Հաջողվեց այրել մի մարտկոց, այն ել զվահավորը և մի քանի խրճիթներ. Գերի բռնված յերեք բռնաւարարների ցուցմունքները սաստկացը ին պաշարվածների վհատությունը. Նրանք հայտնեցին բերդի տակ տարված ականների և Պուգաչովի շուրափույթ գալու մասին. Սարսափահար Սիմոնովը.

հրամայեց ամեն ուղղութիւնը նոր աշխատանքներ կատարել.
Նրա տան շուրջը գետինն անընդհատ փորձում եյին գալիքոն-
ներով. սկսեցին նոր խրամատ փորել. դժվարին աշխատանքից ու-
ժառապատ մարդիկ համարյա չեյին քնում. գիշերները կարազորի
կեսը միշտ կանգնած եր հրացանները ձեռին պատրաստ. մյուս
կեսին թույլատրված եր միայն նստած նիբէել, լազարեթը լըց-
վեց հիվանդներով. ուժեստապաշար մնացել եր վոչ ավել, քան
տաս որվա համար. Սկսեցին զինվորներին որական տալ քա-
ռորդ ֆունտ այլուր, այսինքն՝ սովորական չափի մի տասերորդ.
Տասը, Արդեն չկար վոչ ձափար, վոչ ել աղ. Ընկերովի մի. կաթ-
սա ջուր յեռացնելով և այն այլուրով սպիտակացնելով, լուրա-
քանչյուրն իր գավաթին եր խմում, վորը և կազմում եր նրանց
որական մնունողը, Կանայք ալի չկարողացան դիմանալ սովին.
Նրանք սկսեցին ինդքել, վոր իրենց թույլ տան բերդից գուրս
գալու, վոր և թույլատրվեց նրանց. մի քանի թույլ և հիվանդ
զինվորներ գուրս թէկան նրանց լեռնեց, սակայն բունարար-
ները ընդունեցին նրանց, իսկ կանանց մի զիշեր պահանդերի
հակողութեան տակ պահելով, նորից բերդ քշեցին, պահանջելով
ազատել իրենց համախոներին, խոստանալով զբա փոխարեն
ընդունել և կերակրել գուրս ուղարկվածներին. Սիմոնովը չհա-
մաձայնեց դրան, յերկյուղելով ավելացնել թշնամիների թիվը,
Ժամ առ Ժամ սովորելի յեր դառնում: Այս չկար կշռով
արվոր ձիու միաց. Սկսեցին ուսեն շներին ու կատուներին. Պա-
շարման սկզբում, զբանից յերեք ամիս առաջ, սառցի վրա սպան-
ված ձիեր ելին թողնված. հիշեցին ալդ ձիերին և մարդիկ ազա-
հությամբ սկսեցին կրծել շների թողած վոսկորները, վերջապես
սպառվեց և սույն պաշարը. Սկսեցին սնվելու նոր միջոցներ
գտնել: Դատան մի տեսակ կազ, վորը գերազանցութեն փափուկ եր
և տունց ավազախանուրդի: Փորձեցին յեփել այն և նրանից
կազմելով մի ինչ-վոր չփոթ, սկսեցին գործածել վորպես կերակուր:
Զինվորները բոլորովին ուժառպառ յեղան Վաճանք չեյին կա-
րողանում քայլել. Հիվանդ մալրերի յերեխանները հյուծվում ե-
յին և մեռնում: Կանայք մի քանի անգամ փորձեցին շարժել
խոռոչարաբների գութը և նրանց վոտներն ընկնելով աղերսում
եյին իրենց թույլ տալ քաղաքում մնալու. Նրանց յետ ե-
յին քշում նախկին պահանջը գնելով, Ընդունեցին միայն կա-
զակուհիներին. Սպասված ոգնությունը չեր գալիս. Պաշարված-
ները իրենց հույսուհատակում եյին որեց-որ, շարաթից-շարաթ:

Բունատարաբները ձայն եյին տալիս կալազորին, թե կառավա-
րութեան զորքերը ջարդված են, թե Որենքուրզը, Ուժան ու
Ղաղանը արդեն գլուխ են իջնցրել ինքնակոչին, թե նա շուտով
կդա Յահելան քաղաք, և վոր այն ժամանակ ալլես նրանց չեն
խնայի: Իսկ Հնազանդություն հալտնելու գեղգում նրա անունից
խռոտանում եյին վոչ միայն ներումն, այլև պարզները: Նույնը
նրանց աշխատում եյին ներշնչել այն թշվառ կանանց, վորոնց
աղերսում եյին թույլ տալ բերդից քաղաք անցնելու Պետերի
համար անհնար եր հուսաղը պաշարվածներին, թե շուտով
ոգնություն էշանանի, քանի վոր այդ ժամին վոչ-վոք այլևս լսել
անզամ չեր կարող առանց զայրույթի: այնպես ու գամանացած
եյին սրտերը յերկարատես ապարդյուն սպասումից: Աշխատում
եյին կայազորը պահել հավատարմության և հնազանդության
մեջ՝ կրկնելով, վոր խալտառակ գագաճանութամբ վոչ-վոք չի
փրկվի կորստից, վոր բունատարաբները՝ գաղաղած տեսկան դի-
մազրությունից, չեն խնայի և յերգմազանցներին: Աշխատում
եյին դժբախտ մարդկանց հոգում հույս զարթեցնել առ ամե-
նակարող և ամենատես ստոված, ու սրտապնդված սառապյալ-
ները կրկնում եյին, վոր ավելի լավ և հանձնվել նրա կամքին,
քան թե ծառալել ավաղակին և աղետալի պաշարման բոլոր ժա-
մանակ բացի յերկու կամ յերեք հոգուց, բերդից փախստական-
ներ չեղան:

Վրա հասավ չարչարանաց շաբաթը: Արդեն տասնհինգ որ
եր, ինչ պաշարվածները միայն կավով եյին անվում: Վոչ-վոք
չեր ուզում սովորման լինել Վճռեցին բոլորով՝ մինչև վերջին
մարդը (բացի միանգամայն ուժասպաններից) դիմել վերջին
արտազրուի: Հույս չունեցին հաղթելու (բունատարաբներն այն-
պես եյին ամրացնել վոր այլևս վոչ մի կողմից հնարավոր չեր
բերդից հարձակում զործել), միայն ուզում ելին մեռնել ռազ-
միկների աղնիվ մահով:

Յերեքշարթի, արտապրունակած որը, մայր յեկեղեցու
կտուրին կանգնած ժամանականները նկատեցին, վոր բունատարա-
բները խառնաշխոթյան մեջ վաղվզում են քաղաքում, իրար
մնաս բարով անելով միանում են և խմբերով դուրս գալիս տա-
փառտանը, Կաղակուհիները ճանապարհ են գնում նրանց: Պա-
շարվածները զիսի ընկան, վոր արտասովոր քան և կատարվում
և վերաբին առողջվեցին հույսներով: «Այդ բոլորը մեզ այնպես
սիրտ ավեց» — ասում ե պաշարման վող սարսափին ապրած մի

ականատես մարդ—«վոր մենք կարծես մի կտոր հաց կերպանք»—
թիշ-թիշ իրարանցումը հանդարտովեց. Թվում եր թե ամեն ինչ
սովորական կարգով և ընթանում: Առաջվանից ավելի մեծ հու-
սալցում աիրեց պաշարվածներին: Նրանք լուր նայում եյին
դեպի առփասառնը, վորանդից թիշ առաջ իրենց ազատարար-
ներին ելին սպասում... Հանկարծ, յերեկոյան ժամը հինգին մոտ,
հեռվում փոշի յերեվաց և նրանք տեսան անկարգ արշավող
խոռնիխում խմբերը, վորոնք մեկը մելումի լեռներց հայտնվում
եյին պուրակի այն կողմից: Բունտարարները ձիերը քշեցին
տարօներ բակեր՝ յուրաքանչյուրն այն բակը, վորի մոտ իր
տուժն եր գտնվում: Պաշարվածները հասկացան, վոր խոռվա-
րաբները ջարդված են և փախչում են. սակայն դեռևս չեյին
համարձակվում ուրախանալ. յերկրութ եյին կրում կատաղի հար-
ձակումից: Պաղաքի բնակիչները լեռ ու առաջ եյին վազում փո-
ղոցներով, ինչպես հրզեհի ժամանակ: Յերեկոյան դեմ տաճարի-
զանգերը տվին, մարդիկ բոլորվեցին մի տեղ, հետո խմբովին
յեկան բերդի վրա: Պաշարվածները պատրաստվում եյին յեռ
մզել նրանց, սակայն տեսան, վոր նրանք կապուած բերում են
իրենց առաջնորդներին՝ կարգին և Տոլկաչով առամաններին:
Բունտարարները մոտենում եյին, բարձրածայն ներումն հայցե-
լով: Սիմոնովն ընդունեց նրանց, ինքն ել շնավատալով իր փըր-
կությանը: Կալազորը վրա ընկազ բնակիչների բերած հացի մեծ
կտորներին: «Մինչև զատիկ, գրում ե այս անցքերի ականատեսը,
մնում եր չորս որ, սակայն մեղ համար սույն որն արդին պար-
առ տոն եր: Նրանց, ովքեր թուլությունից և հիվանդությու-
նից չեյին վեր կենում անկողնից, վայրէլյանարար ապաքինվե-
ցին թերզում ամեն ինչ շարժման մեջ եր. ասածուն գոհություն-
եյին հայտնում, շնորհավորում միմյանց. ամբողջ գիշեր վոշ-վոք
չքննեց: Պաղաքի բնակիչները պաշարվածներին տեղեկություն-
եյին տալիս Որենբուրգի ազատման և Մանսուրովի շուտափուլթ
գալու մասին: Ապրիլի 17-ին ժամանեց Մանսուրովը: Յերդի
դռները, վոր սկսած դեկտեմբերի 30-ից փակ եյին և յետեր քա-
րեր լցրած, բացվեցին: Մանսուրովը քաղաքի իշխանությունն
իր ձեռքն առավ: Բունակի հեղինակները՝ կարգինը, Տոլկաչովը
և Գորչկովը ու ինքնակոչի ազորինի կինը՝ Առաքինա Կուզնե-
ցովան պահակների հսկողության տակ ուղարկվեցին Որենբուրգ:

Այսպիսին եր հմտատ, խելոք զորապետի կարգադրություն-
ների հաջողությունը: Սակայն Բիրեկովը չկարողացավ ավար-

տել իր սկսած գործը. աշխատանքներից, անհանգստությունից
և սրտնեղությունից խոշտանգված, քիչ հոգ տանելով իր՝ ար-
դին իսկ խախտված առողջության մասին, նա Բուզումալում
հիմանգացավ ջերմախտով և զգալով մոտալուս վախճանը, նո-
րից մի քանի կարգադրություններ արեց: Նա կնքեց իր բոլոր
գաղանի թղթերը, հրամայելով զրանք հասցնել թագուհուն և
իշխանությունը հանձնեց գններալ-պորուչիկ Շներբատովին,
իրենից հետո ավագը նա գեր: Լուրերից տեղեկանալով Ուժայի ա-
զատման մասին, նա տակավին կարողացավ տեղեկություն տալ
թագուհուն և վախճանվեց աղբիկի Զին, առավոտյան ժամ 11-ին,
իր կյանքի քառասուն որսերորդ տարում: Նրա մարմինը մի
քանի որ մնաց Կամալի տփին, վորոնանցնելու հնարավորություն
չկար այդ ժամանակ: Ղազան քաղաքը կամեցավ նրան թաղել
իր տաճարում և հուշարձան կառուցել իր ազտարարին, սակայն
նրա ընտանիքի պահանջով Բիրիկովի մարմինը տարվեց իր
գյուղը: Անդրեյվլան ժապավենը, սենատորի կոչումը և գվար-
դիայի զննապետի կոչումը ստացվեցին, յերբ նա մեռել եր ար-
գեն: Մեռնելիս նա տսել ե. «Չեմ մեղքանում յերեխաներիս ու
կնոջս. թագուհին հոգ կտանի նրանց մասին. հայրենիքս եմ
մեղքանում»: Պատվող լուրերը նրա մահը վերագրել են թույնի
ներգործությանը, վոր իբր թե տվել ե կոնֆեդերատներից մեկը:
Դերժավինը գովերդել ե նրա վախճանը: Յեկատերինան վողա-
ցել ե նրան և նրա ընտանիքին շնորհել առատ ընծաներ: Պե-
տերբուրգն ու Մոսկվան սարսափով բռնվեցին: Շուտով և հա-
մայն Ռուսաստանն զգաց անդառնալի կողումալը:

Ա. Խ Ս Ե Ր Ա Ր Գ գ լ ու յ ն

Պուղալովի նոր հաջործությունները:—Թաշկիք Սուլավութը:—Միրիչիք բեշ-
գերի առաւմը:—Ծակասամարտ Տրոիցկայա բերդի մաս:—Պուղալովի Նահանջը:—
Նրա առաջին հանդիպումը Միքայելոնի հետ:—Պուղալովին հետապնդելը:—
Զորյակի անդորրանիքությունը:—Ռուսի առաւմը:—Պուղալովի Ղազանի մաս:

Պուղաչովը, վորի դրությունը հուսահատական եր թվում,
հայտնվեց Ովզլանու-Պետրովսկայան գործարաններում: Մայոր
Շենքիչի կողմից հետապնդվող Ովզիննիկովը և Պերֆիլը յերեք
հարյուր յարկայան կազակների հետ սրարշավ կարեցին անցան
Սակամարսկայա դիճը և կարողացան միանալ նրա հետ: Սուսպ-
րապույտն և որինը բոլորն կարմիկներն ուղղում եյին հետեւ
նրանց և թվով վեց հարյուր կիրիտկաներով գիմնեցին գեղի Սո-
րոշինսկայա բերդը: Այսուեղ մթերապաշարի և խարի վրա վոր-
պես պահապան գտնվում եր պաշտոնաթող յենթագնդապետ
Մելքոնիչը, խելոք ու վճռուկան մի մարդ նա ընդունեց կալա-
զորի հրամանատարությունը և հարձակելով նրանց վրա, հար-
կադրեց վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը:

Պուղաչովն արագ կերպով անցնում եր մի տեղից մյուսը:
Խաժամումն առաջվա պես հավաքվում եր նրա շուրջը: Հաղիկ
ինչ խաղաղեցված բաշկիրները նորից հուղվեցին: Վերխո-Յախց-
կայա բերդի պարետ զնդապետ Ստուպիշինը մտավ Բաշկիրիա,
հրանարակ դարձրեց մի քանի ամալի գյուղեր և զերի բռնելով
բռնատարարներից մեկին, կարեց նրա ականջները, թիթը, աջ
ձեռի մատները և բաց թողեց, սպառնալով նույն կերպ վարվել
և մյուս բոլոր բռնատարարների հետ: Բաշկիրները չեյին հան-
գարավում, նրանց հին խոռվարար Յուլալը, վորը թագնվել եր
1741 թվի մահապատիժների ժամանակ, հայտնվեց նրանց մեջ
իր Սալավաթ վորդու հետ միասին: Ամբողջ Բաշկիրիան ապրու-

առամբավեց և ազետը բորբոքվեց ավելի մեծ ուժով. Ֆրեյմանը
պետք էր հետապնդեր Պուգաչովին. Միխելսոնը ճիզ եր թափում
կարել նրա ճանապարհը, սակայն ձնհալքը փրկեց նրան: Ճանա-
պարհներն անանցանելի ելին, մարդիկ խըսում եյին անհատակ
ցեխի մեջ. գետերը վարարել եյին, ծածկելով մի քանի վերստ
ասրածություն. վտակները գետեր ելին դարձել. Ֆրեյմանը կանգ
առավ Ստերլիխամացկում. Միխելսոնը. վորը դեռևս սառույցի
վրայով անցել եր Վոլգան, իսկ Ուֆան՝ ութ նավակներով, շա-
րունակում եր ճանապարհը, չնայած ամեն տեսակ խոչընդուա-
ների և մայիսի 5-ին Միմակի գործարանի մոտ վրա հասավ բաշ-
կիրների մի ամբոխի, վորոնց առաջնորդում եր կատաղի Սա-
լավաթը. Միխելսոնը ցրեց նրանց, գործարանն աղատեց և մի-
որ հետո շարունակեց ճանապարհը. Սալավաթը կանգ առավ
գործարանից առանութ վերստի վրա, սպասելով Բելորորդովինն,
Նրանց միացան և յերկու հազար բունարարներով և ութ թշն-
դանոթներով գուրս լեկան Միխելսոնի գեմ. Միխելսոնը նորից
ջարդեց նրանց, թնդանոթները խլեց, տեղն ու աեղը կոտորեց
մինչև լերեք հարյուր մարդ, մլուսներին ցրեց և շտապեց գեղի
Ռւկակի գործարանը, հուսալով հասնել իրեն՝ Պուգաչովին. սա-
կայն շուտով տեղեկացավ, վոր ինքնակոչը գանձում և արգեն-
թելորեցէի գործարաններում.

Յուրղեն գետի այն կողմում Միխելսոնը նորից կարողա-
ցավ ջարդել խոռվարարների մի խառնիճաղանճ գորախումբ և
նրանց հետապնդեց մինչև Սատկինսկի գործարանը. Այդունք
նա իմացավ, վոր Պուգաչովը հավաքելով մինչ վեց հազար բաշ-
կիրներ և գյուղացիներ զնացել և Սազնիտնայա բերդի վրա՝
Միխելսոնը վճռեց ավելի առաջ զնալ Ուրալյան լեռներում,
հույս ունենալով Յակիկի գաղաթի մոտ միանալ Ֆրեյմանին:

Պուգաչովը նախապես այրելով իր թալանած Բելորորդյան
գործարանները, արագ կերպով անցավ Ուրալյան լեռները և
մայիսի 5-ին մոտեցավ Մազնիտնայա բերդին, հետը չունենալով
և վոչ մի թնդանոթ, կապիտան Տիխոնովսկին քաջարար պաշտ-
պանվում եր. Պուգաչովն ինքը կարաելով վիրավորվեց ձեռքից
և նահանջեց, զդալի կորուստ կրելով. Թզում եր թե բերդը
փրկված և սակայն այնտեղ դավաճանություն բացվեց. գիշերը
պալթեցը ընկառով լի արկղները. Առովարարները հարձակվե-
ցին, պատնեշները քանդեցին և ներս խուժեցին. Տիխոնովսկուն

և նորա կնորջը կախվեցին. բերդը թալանվեց ու այրվեց, Նույն
որին ևսթ Պուգաչովի մատ լեկավ Բելոբորդովը չորս հազար
բռնապարար սրիկաններով:

Դենքը պարուցիկ Դեկալոնզը Չելյաբինսկից, վոր Նոր եր աղատվել բռնշտարաների ձեռից, շարժվեց դեպի Վերխո-Յաից- կի բերդը, հուսալով Պուգաչովին հասնել գեռևս թէլորեցկի գոր- ծարաններում, սակայն գիծ¹⁾ դուրս գալով, Վերխո-Յաիցկի պարեստից՝ զնդապես Մատուցիչինից տեղեկություն ստացավ, վոր Պուգաչովը բերդերի գծով վերև և շարժվում, մի բերդից մյուսն անցնելով, ինչպես հայտնվելու տառչին աշարկու որեւ- րին։ Դեկալոնզը շատակեց գեպի Վերխո-Յաիցկի բերդը։ Այդուղ նա իմացավ Մագնիսանայա բերդի առման մասին։ Նա շարժվեց դեպի Ելզիլսկայա։ Բայց տառնհինգ գերատ անցնելուց հետո ար- դին գերի ընկած մի բաշկիրից իմացավ, վոր Պուգաչովը, տե- ղեկանալով զորքի մոտեցման մասին, զնում և այլա վոչ թէ Կիզիլսկայա, այլ Ռւբալյան լեռներով ուղիղ դեպի Ղարաղայկ։ Դեկալոնզը յետ գնաց Ղարաղայկին մատենալով նա տեսավ սուկ ծխացող ավերակները։ Նախորյակին Պուգաչովը թողել եր այն։ Դեկալոնզը հույս ուներ նրան հասնել Պետրովագործկայա բերդում, սակայն այդուղ չգտավ նրան։ Բերդը քանդված եր ու այրված, լեկեղեցին թալանված, բնակիչներին գերի ելին տարել։

Դեկալոնգը, զիծը թողնելով, ներքին ճանապարհով շարժվեց ուղիղ դեպի Ռոյակի բերդը, Նրա մոտ մնաց եկեղեցի վարսակի միայն մի որվա պաշարը. Նա կարծում էր, վոր Պուգաչովին կը հանի գոնե Ստեղնակա բերդում. Բայց տեղիկանալով, վոր Ստեղնական նույնապես գրավված է, ուղղվեց դեպի Տրոիցիայա. Մենասսկ տանող ճանապարհին նա տեսավ բազմաթիվ մարդիկ՝ շրջակա ավերված բերդերից. Սպաների կանայք և յերեխաները բռնուան, ցնցուարիներ հագած լալիս երին, չիմանալով ուր ապաստան վնասրին: Դեկալոնգը նրանց իր հավանավորության տակ տառապ և հանձնեց սպաների խնամքին Մայիսի 21-ին, առավելույան նա մոտեցավ Տրոիցիայա բերդին, արագ յերթով անցնելով վաթուան վերսա և տեսավ Պուգաչովին, վորոր բանակեր

եր նախորյակին իր վերցրած բերդի պատերի տակ, Դեկալոնգն
իսկուն հարձակվեց նրա վրա: Պուղաչովը տաս հազարից ավելի
զորք ուներ և մինչև յերեսուն թնդանոթ, Կոխվը տեսց ամբողջ
շորս ժամ: Բոլոր ժամանակ Պուղաչովը պառկած եր իր վրանում:
սաստիկ տանջվելով Մագնիսայայ բերդի մաս ստացած վերքից,
Ռազմական պործողությունները դեկավարում եր Բելորորդովը՝
Վերջապես խոռվարարների շարքերը քայքալվեցին: Պուղաչովը
ձի նստեց և վիրավոր ձեռքը կապած ընկավ այս ու այս կողմ,
աշխատելով վերականգնել կարգը, սակայն բոլորը ցըվեցին ու
փախան: Պուղաչովը մի թնդանոթ առած շարժվեց Զելյարինսկի
ճանապարհով: Հետապնդելն անհնարին եր, Այրումին չափից
դուրս ուժապատ եր յեղել: Բանակում յերեան բերվեցին մինչև
յերեք հազար մարդ ամեն կոչման, սեռի և հասակի, վորոնց զե-
րի տեր բանել ինքնակոչը և վորոնը դատապարտված եյին վո-
շընչացման: Բերդը փրկված եր հրդեհից ու թալանից: Մակայն
պարետը՝ բրիգադիր Ֆեյնվարը՝ սպանվել եր նախորյակին՝ հար-
ձակման ժամանակ, իսկ նրա սպաները կախված եյին:

Պուղաչովը և Բելորորդովն իմանալով, վոր զորքի հոգա-
ծությունն ու ձիերի ուժապատությունը չվ թույլատրում Դե-
կալոնգին իր հազթությանից ոգտվելու, իրենց ցըված խոռնի-
ճաղանճ ուժերը կարգի բերին և սկսեցին կանոնավոր կերպով
նահանջել, ճանապարհին բերդեր առնելով և արագ կերպով ու-
ժեղանալով: Գաղրին և Փոլորով մայորները, վորոնց Դեկալոն-
գը զորամասով ուղարկեց կովի մյուս որը, հետապնդեցին նրանց,
սակայն՝ շկարողացան հասնել:

Միինեւոնը նույն միջոցին զնում եր Ուրալյան լեռներով,
սակավածանոթ ճանապարհներ բանած: Բաշկիրական գյուղերն
ամայի եյին: Ճանարավորություն չկար անհրաժեշտ պաշարեղին
ձեռք բերելու Նրա զորախումբը ամեն ժամ վտանգի մեջ եր:
Բունարարարների բազմաթիվ հրոսակախմբեր պտտվում ելին
նրա մոտերքում: Մայիսի 13-ին բաշկիրներն իրենց խոռվարար
ավագի առաջնորդությամբ հարձակվեցին նրա վրա և կատաղի-
որեն կավեցին: Ազգած գեղի ճահիճը, նրանք անձնատուր չեյին
լինում: Բոլորը, բացի մեկից, վորին զուռվ հաջողվեց ինաւել,
սրակոտոր յեղան իրենց պետի հետ միասին: Միինեւոնը կորց-
քեց մի սպա և վաթսուն շարքային զինվորներ՝ սպանված ու
վիրավոր:

Դերի ընկած բաշկերը՝ գուրզուրված Միխելսոնի կողմից՝
հայտնեց նրան Մագնիստայայ բերդի առձան և Դեկալոնդի շարժ-
պելու մասին։ Միխելսոնն այս տեղեկությունը համապատաս-
խան գտնելով իր յենթադրությունների հետ, թողեց լեռներն ու
զնաց գեղի Տրոիցկայա, հուսալով ազատել սույն բերդը կամ
հանդիպել Պուլաչովին։ Նրա նահանջի գեղգում։ Շուտով նա
լսեց Դեկալոնդի հաղթության մասին և զնաց Վառլամովո, գի-
տավորության ունենալով Պուլաչովի ճանապարհը կարելու։
Իմկապես, մայիսի 22-ի առավոտյան Վառլամովոյին մոտենալիս
նա հանդիպեց Պուլաչովի առաջավոր զորախմբերին։ Տեսնելով
գեղեցիկ շարքերով կանգնած զորքը, Միխելսոնն սկզբում չեր
կարող պատկերացնել, վոր դա հախորլակին ջարոված սրիկալա-
խմբի մնացորդն և և այն ընդունեց վորպես (ծաղրաբար առում
և նա իր տեղեկադրի մեջ) գեներալ-պորուչիկ և կավալեր Դե-
կալոնդի կորպուսը։ սակայն շուտով հավաստիացավ իրականու-
թյունը։ Նա կանոք տռավ, պահելով իր նպաստավոր դիրքը ան-
առում, վորը պահպանում իր նրա թիկունքը։ Պուլաչովը շարժ-
վեց նրա դեմ և հանկարծ շրջվեց գեղի Զերբակուլսկի բերդը։
Միխելսոնը զնաց անտարի միջնով և կտրեց նրա ճանապարհը։
Պուլաչովն առաջին անգամ իր հանդեպ տռավ նրան, և զ պետք
է այնքան հարվածներ հասցներ իրեն և վերջ դնելը իր արլու-
նուտ գործունեցությանը։ Պուլաչովն իսկույն և եթ հարձակվեց
նրա ձախ թիկ վրա, քայլայեց այն և խլեց յերկու թնդանոթ։
Սակայն Միխելսոնը խռովարաբներին հարվածեց իր բռլոր այ-
րումիով, մի ակնթարթում ցրեց նրանց, յիս խլեց իր յերկու
թնդանոթները, դրանց հետ և այն վերջինը, վոր մնացել եր
Պուլաչովի ձեռին Տրոիցկայա բերդի մոտ կրած պարտությունից
հետո, տեղն ու տեղը կոտորեց մինչև վեց հարյուր մարդ, գերի
վերցրեց մինչև հինգ հարյուր և մնացածներին հալածեց մի քա-
նի վերսու։ Գիշերը դադարեցրեց հետապնդումը։ Միխելսոնը
դիշերեց մարտի գաշտում։ Մյուս որը իր հրամանի մեջ նա
խիստ հանդիմանություն արավ այն վաշտին, վոր ձեռքից թո-
ղել եր իր թնդանոթները և խլեց արդ զինվորների կոճակներն
ու թեածալվածքները՝ մինչև վոր նրանք արժանան դրանց։
Վաշտը չհապաղեց իր անպատճությունը վերացնելու։

23-ին Միխելսոնը զնաց Զերբակուլսկի բերդի վրա։ Այս-
աեղ զմնվող կազակները բռնա ելին անում։ Միխելսոնը նրանց

յերդովել առվեց, միացնելով իր զորախմբին և հետազայռում միշտ գոհ եր նորանցից:

Ժողոբովը և Գազրինը գործում ելին դանողաղ և անվճռառ կան, ժողոբովը Հավաքել և ցրված խառնիճաղանձ զորքի մնացորդը և նոր ուժեր և կուտակում, հրաժարվեց գնալ նրա դեմ, զիտերի վարարման և վաս ճանապարհների պատրվակով, Միխելսոնը գանգատվեց Դեկտորնպին, իսկ Դեկտորնպը, ինքը խոստանալով առաջ խաղալ, ինքնակոչի վերջին ուժերը վոշչացնելու համար, մնաց Զելյարում և մինչև իսկ իր մոտ կանչեց Ժողոբովին ու Գազրինին:

Այսպիսով Պուլաչովին հետապնդելը մնաց միայն Միխելսոնին:

Նա գնաց դեռքի Զելյարում ակի գործարանը, բաելով, վոր այստեղ գտնվում են մի քանի լարիկան բունտարարներ, սակայն նրանք փախտն, իմանալով նրա մոտենալու մասին, Թանի դնաց՝ նրանց հետքը ցաք ու ցրիզ գարձակ և վերջապես բալորովին կորավու:

Մալիսի 27-ին Միխելսոնը հասավ Սատկինսկի գործարանը, Սալավաթը նոր հրսուակախմբով չարագործություններ եր կատարում շրջականերում: Նա արգեն թալանել և այրել եր Միմսկի գործարանը: Լսելով Միխելսոնի մասին, նա անցավ Այգեաը և կանգ առավ լեռներում, ուր Պուլաչովը փրկվելով Գազրինի և Ժողոբովի հետապնդումից և արգեն հավաքելով մինչև լիբկու հազար ամեն տեսակ սրիկաներ, կարողացավ միանալ նրանց հետ:

Միխելսոնը Սատկինսկի գործարանում, վորը փրկվել եր իր արագ վրա համելուց, առաջին դադարն առավ Ռէֆայից գուրս գալուց հետո, Յերկու որ անց նա գնաց Պուլաչովին և Սալավաթի զեմ և հասավ Այի ափը, Կամուրջները վերցված ելին, Առովարարները դիմացի տիում տեսնելով նրա զորախմբի սակավաթիվ լինելը, կարծում ելին թե ապահով վիճակում են:

Բայց 30-ին, առավուտան, Միխելսոնը հրամայեց հիսուն կազակների ձի նստած լողալով անցնել գետը, յուրաքանչյուրը հետաք մի յեգեր (հրացանաձիգ) առնելով, Առովարարները փորձեցին հարձակվել, սակայն ցրվեցին հակառակ ափից արձակված (Մազանոթային զարկերով), Յեգերներն ու կազակները մի կերպ դիմացան, իսկ Միխելսոնը նույյն միջոցին գետն անցավ՝ մնացած

գորախմբով. վառողը կրեց ալրուձին, թնդանոթները ջուրն ընկուցին և զետի հատակով քարշ տպին թոկերով. Միխելսոնն արագ հարձակվեց թշնամու վրա, ջարդեց, սրբեց և հալածեց քառն վերստից ավելի, սպանելով մինչև չորս հարյուր մարդ և շատերին գերի առնելով. Պուգաչովը, Բելորորդովը և վիրավորված Սալավաթը հազիվ կարողացան ազատվել.

Երջակաւըն ամայի յեր. Միխելսոնը չեր կարող իմանալ թշնամու դիտավորության մասին, Նա հույսը դրեց բախտի վրա և հունիսի 2-ին իր նշանակած կոպիտան կարտաշեսկու զորամասը դիշերը շրջապատվեց Սալավաթի հրոսակով. Առավավագի Միխելսոնը ոգնության հասավ. Խռովարաբները ցրվեցին ու փոխան. Միխելսոնը ծայրանեղ զգուշությամբ եր հետապնդում նրանց. Հետեակազորը պաշտպանում եր նրա գումակը. Նա ինքը զնում եր փոքր ինչ առաջ ընկած, իր այրուձիի մի մասի հետ. Այս կարգադրությունները փրկեցին նրան. Խռովարաբների մի մեծ բազմություն անոպասելի կերպով շրջապատեց նրա գումակը և հարձակվեց հետեակազորի վրա. Խճը Պուգաչովն եր առաջնորդում նրանց, վեց որվա ընթացքում կարողանալով հետաքրել մոտ հինգ հազար բռնատարարներ. Միխելսոնը որարշավ ոգնության զնաց. Նա Խարինին ուղարկեց իր ամբողջ ալորձին միացնելու, իսկ ինչը հետեակազորի հետ մնաց գումակի մոտ. Խռովարաբները ջարդվեցին և նորից փախան. Այդ միջնորդին Միխելսոնը գերիներից տեղեկացավ, վոր Պուգաչովը դիտավորություն և ունեցել զնուլ Ուժայի վրա. Նա շտապեց կարել նրա ճանապարհը և հունիսի 5-ին վերստին հանդիպեց նրան. Կորին անխուսափելի յեր. Միխելսոնն արագ կերպով հարձակվեց նրա վրա և կրկին ջարդեց ու քշեց.

Իր այս բոլոր հաջողաւթյուններով հանգերձ, Միխելսոնն անհրաժեշտ համարեց առ ժամանակ զաղարեցնել իր հետապնդումը. Նա արդեն չուներ վոչ պաշտպեղեն, վոչ ուումբեր. Յաւրագանչյուր մարդ ուներ միայն յերկու փամփուշտ. Միխելսոնը զնաց Ուժայի վրա, վորպեսզի այնտեղ ձեռք բերի այն ամենը, ինչ պետք է իրեն.

Մինչդեռ Միխելսոնն ամեն կողմ ընկած միշտ հաղթում եր խռովարաբներին, մնացած զորահրամանատարները անշարժ մնացել ելին իրենց տեղերում. Դեկալոնզը կանգ եր առել Զելյարում և նախանձելով Միխելսոնին, դիտմամբ չեր ուղում աշակցել նրան. Ֆրեյմանը, անձնապես քաջ մարդ, սակայն վեհե-

բում ու անվճռական առաջնորդ, կանգնած եր նիզիլսկայա բերդում, դժբոհ լինելով Տիմաշովից, վորը իր լավագույն այրումին առած գնացել եր զեպի Զելախրսկի բերդը. Ստանիսլավսկին իշմանալով, վոր Պուգաչովը Ներխո-Յափեկի բերդի մոտ նշանակալից թվով խուման և հավաքել, հրաժարվեց զինվորական ծառալությունից և թագնվեց իր սիրած Որսկ բերդում. Յակուրովին և Որերնիբեսով գնդապետներն ու մայոր Դումեն գանգում երին Ռաֆալի մոտ, Նրանց շուրջը հանդիսա կերպով հավաքվում երին բռնտարար բաշկիրները, Բիբոկը համարյա թե նրանց աշքի առաջ այրվեց, մինչդեռ նրանք մի տեղից մյուսն ելին անցնում, խուսափելով ամենաչնչին վտանգից և չմտածելով միահամուռ ոժանդակության մասին. Իշխան Շչերբատովի կարգադրությամբ, Գոլիցինի զորքն առանց վորոն ոժանդակություն ցույց տալու մնում եր Որենրուրդի և Յափեկյան քաղաքի մոտ՝ արդին իսկ անվտանգ տեղերում, իսկ յերկրամասը, ուր նորից բռնկվեց հրդեհը, մնում եր համարյա անպաշտպան:

Պուգաչովը, վորին մայոր Պուպովը յետ եր մղել կունզուրից, փորձեց շարժվել զեպի Յեկատերինուրուրդ, սակայն իմանալով այնտեղ գանգուղ զորքերի մասին, զիմեց զեպի կրանու Ուֆիմսկի:

Կամա զետը բաց եր և Ղազանը վտանգի մեջ, Բրանտը շտապով Ուստ արգարձանն ուղարկեց մայոր Ակրիսիցինին, տալով նրան կայազորի մի խումք և զինված գյուղացիներ, իսկ ինքը գրեց իշխան Շչերբատովին, անհապաղ ոգուություն պահանջելով Շչերբատովը հուլը զբեց Որենրուրդովի և Դումենի վրա, վորոնք վտանգի զեպքում պետք ե ոգնեցին մայոր Ակրիսիցինին և վոչ մի նոր կարգադրություն չարեց:

Հունիսի 18-ին Պուգաչովը հայտնվեց Ուստի առջև Ակրիսիցինը զուրս յեկավ նրա դեմ, սակայն կոմիսի հենց սկզբին կործնելով յերեք թնդանոթ, շատպով վերադարձավ բերդը. Պուգաչովը լուրայիններին հրամալեց ձիերից իշնել և գրոհի գիմել Խովարարները քաղաք մտան, ալրեցին այն, սակայն բերդից յետ մզգեցին թնդանոթներով:

Մէստս որը Պուգաչովը իր ավագների հետ ձիով շրջում եր կամալի ափին, զետը անցնելու հարմար տեղեր վարոնելով: Նրա հրամանով ճանապարհը կարգի բերդին և ամբացը ին ճանալին տեղերը, 20-ին նա նորից գրոհեց բերդի վրա և նորից յետ մըդվեց, Այն ժամանակ Բելորորդովը նրան խորհուրդ տվեց բերդը

շրջապատել խոսի, հարդի, և կեչու կեղենի դեղերով և այլպիսով
այրել փալտե պատերը։ Տանհինք սալլ ձիերով տարան բերդի
մատ տարածության վրա, իսկ հետո տռաջ մղեցին մարդիկ, վա-
րժութ պաշտպանված ելին այդ բարձած սայլերի յետեւ Արդեն
տառանվագ Սկրիպիցինը պահանջեց մի որ ու զիշերզա ժամկետ
և մրու որն անձնութուր յեղավ, Պուգաչովին ծնկաչոք ընդու-
նելով, որբապատկերներով և աղու հացով, ինքնակոչը զուրգու-
րեց նրան և սուրը ձեռից չառագ։ Դժբախտը, մտածելով ժամա-
նակին արդարանուը, կապիտան Սմիրնովի և յենթադնուպետ
Մինեյեցի հետ միասին մի նամակ եր գըել Ղազանի նանազա-
պետի անունով և այն պահում եր իր մոտ, հարմար առիթի
սպասելով զայտանի ուղարկելու, Մինեյելը հայտնեց Պուգաչովին
այդ մասին։ Նամակը բռնվեց, Սկրիպիցինը և Սմիրնովը կախ-
վեցին, իսկ մատնիշին Պուգաչովը զնօպապետի կոչում տվեց։

Հունիսի 23-ին Պուգաչովն անցավ կաման և գնաց Խժեվա-
կի ու Վուկինսկի ողեղործարանների վրա։ Վենցելը՝ դրանց պե-
տը, շարաչար սպանվեց, գործարանները թալանվեցին և բոլոր
գործավորներին հավաքեցին—միացրին շարագործ խումանին։
Մինեյելը, վոր իր գավաճանությամբ վաստակել եր Պուգաչո-
վի վատահությունը, նրան խորհուրդ տվեց ուղիղ գնալ Ղազա-
նի վրա։ Նահանգապետի կարգադրությունները նրան հայտնի
եին, Նա պատրաստակամություն հայտնեց Պուգաչովին տա-
ներու և լեռաշխավորում եր հաջողության համար։ Պուգաչովը
լերկար չառատանվեց և գնաց Ղազանի վրա։

Եշերբակովը, ստանալով Ռայի առման լուրը, վախեցավ։
Նա հրաման ուղարկեց Որերնիբեռովին գրավել Շումակոյ գե-
տանցը, իսկ մայոր Մելլինին ուղարկեց գեղի Շուրմանսկի գե-
տանցման տեղը։ Գոլիցինին հրամայեց շուտով տռաջ խաղալ
դեղի Ռւֆա, վորպեսի նա այնտեղից գործի ըստ իր հայեցո-
ղության, իսկ ինքը հետ առնելով մի եսկազըռն հուսարներ և
մի գաջ գրենադերներ, ուղղվեց դեպի Բուգուլմա։

Ղազանում զանվում եր միմիայն մեկ ու կես հազար զորք,
սակայն վեց հազար բնակիչներն արագ կերպով զինվեցին։ Գե-
ներալ-մայոր Պատրիմինը՝ Պուգաչովի գործի համար հաստա-
ված զաղանի հանձնաժողովի պետը, ինունդուն կերպով աջակ-
ցուամ եր նրանց։ Գեներալ-մայոր Լարիոնովը չապասեց Պուգա-
չովին։ Նա իր մարդկանց հետ անցավ Վոլգան և մեկնեց Նիժ-
նի-Նովգորոդ։

Քննդապետ Տոլստոյը՝ Ղազանի ձիավոր լեզիոնի պետը,
դուրս յեկավ Պուգաչովի դեմ և հուլիսի 10-ին հանդիպեց նրան
քաղաքից տասներկու վերստի վրա, Տեղի ունեցավ կռիվ. Թա՞
Տոլստոյը սպանվեց, իսկ նրա զորախումբը ցրվեց. Մյուս որը
Պուգաչովը յերեաց Կազանկա գետակի ձախ ափին և բանակ
զարկեց Տրոիցիալա ալլաղացի մոտ. Յերեկոլան Ղազանի բուր
ընակիշների աշթի առաջնա ձիով դուրս յեկավ քաղաքը դիտելու
և վերադարձավ բանակատեղ, հրոսումը մինչև հաջորդ առավոտ
հետաձգելով:

Յարեւերդ գլուխ

Պուգաչովը Նազանում։ — Թաղաքի աղետովի վիճակը — Միկելոսնի յերեալը — Ծերեց ճակատամարտ — Նազանի ազատություն — Պուգաչովի անօսկությունն իր շնորհիցի հետ — Զբուրառության ներքություն — Միկելոսնի կորզագրությունը։

Հուլիսի 12-ի արջալույսին, խռովարարները Պուգաչովի առաջնորդությամբ ձգվեցին Յարեցինո զլուղից Արսէկոյե կոչված պաշտով, իրենց առջերից քշելով խոտով ու հարդով լի սայլերը, վորոնց արանքում մեջ ընդ մեջ թնդանոթներն եյին առանում։ Նրանք արագ կերպով գրավեցին քաղաքամերձ աղյուսաշնն առաջնորդը, պուրակը և քաղաքից զուրս զանգով Կուդրյավցեզի տունը, արնաեղ դրին իրենց մարտկոցները, իստ շպրտեցին ճանապարհը պաշտպանող թույլ զորախումը։ Սա նահանջեց կառու կազմած և իր լեռնեց ուղեկալ գերաններ զնելով։

Ուղիղ Արսէկոյե գաշտի դիմաց զանգում եր քաղաքալին գլխավոր մարտկոցը։ Պուգաչովը չգնաց նրա վրա, այլ իր աջ թերից զեպի արվարձանն ուղարկեց զործարանային գյուղացիների մի խառնիճաղանն խումբ՝ զավաճան Մինեյեվի առաջնորդությամբ։ Այս սրիկանները՝ մեծ մասամբ անզին, կազակների մշտաբների տակ ճարապկորեն վազում եյին մի հեղեղատից մյուսը, մի բլրագողեց մյուսը, սողալով անցնում եյին թնդանոթային զարիերի յենթեկա բարձրությունները և այսպիսով մանում արփարձանի հենց ծայրին գանգող ձորակները։ Սուկն վտանգավոր տեղը պաշտպանում եյին գիմնազիաները, մի հատիկ թընդանոթով։ Սակայն, շնարած նրանց կրակոցներին, բունաւրարները ճշառությամբ կատարեցին Պուգաչովի հրամանը։ Նրանք մաղլցեցին բարձունքի վրա, սոսկ բռնացքներով ցրեցին զիմնազիաներին, թնդանոթը խլեցին, գրավեցին նահանգապետա-

կան ամսուային տունը, զոր միացած եր արվարձանների հետ.
 թնդանոթը գրին Դպարպասի մեջ, սկսեցին կրակել փողոցների
 լերկայնքով և սովոր խմբերով ներս խուժեցին արվարձանները:
 Մլուս կողմից, Պուգաչովի ձախ թել հարձակվեց Սուկոննայա
 ավանի վրա, Մահուղագործները (զանազան կոշման մարդիկ և
 մեծ մասամբ բանցքամարտողները), վողեվորված յեպիսկոպոս Բե-
 նիամինի կողմից, դիմուցին՝ ինչով կարող եյին, թնդանոթը
 դրին Դորլովի ողետան մոտ և պատրաստվեցին պաշտպանու-
 թյան: Բաշկիրները Շարնայա սարից նետեր տեղացին նրանց
 վրա և իրենք վագեցին մտան փողոցները: Մահուղագործները
 փորձեցին նրանց դիմավորել նիդակներով ու թերթով. սակայն
 նրանց թնդանոթը առաջին իսկ զարկի հետ պալթեց և սպանեց
 արձակողին: Այդ ժամանակ Պուգաչովը Շարնայա սարի վրա
 դրեց իր թնդանոթները և կարտեչ տեղաց թե լուրայինների,
 թե թշնամու վրա: Ավանը այրվեց, Մահուղագործները փախան:
 Խովզարաբները տապալեցին պահակներին, ուղեկալ գերանները
 և ներս խուժեցին քաղաքի փողոցներով: Բոցը տեսնելուն պես
 ըսակիշները և քաղաքալին զորքը թնդանոթը թողնելով, իրենց
 նետեցին բերդը՝ վորպես վերջին ապատարան: Պատրումկինը
 բերդը մտավ նրանց հետ միասին: Քաղաքը դարձավ խոռվարա-
 ներին ավար: Նրանք սկսեցին թալանել տներն ու վաճառական-
 ների խանութները: Մանում եյին յեկեղեցիներն ու վանքերը:
 պոկոտում եյին պատկերակալները, մորթուում բոլոր նրանց,
 ովքեր պատահում եյին գերձանական տարապով¹⁾: Պուգաչովն իր
 մարտկոցները դնելով Դոստինիյ-Դվորի պանդոկում յեկեղեցի-
 ների յետեւ, Հաղթական կամարների մոտ, կրակում եր բերդի
 վրա, առանձնապես Սպասուկիյ կոչված վանքի վրա, վորը բերդի
 աջ անկյուններ բռնում և վորի հնամենի պատերը հազիվ եյին
 դիմանում: Մլուս կողմից, Մինելեվը մի թնդանոթ ներս քա-
 շելով Ղազանի վանքի դարպանը, իսկ մյոււը դնելով լեկեղեցու
 զավթում, կրակում եր բերդի ամենավտանգավոր տեղի վրա:
 Ախտելից նետված մի ռումբ ջարդեց նրա թնդանոթներից մե-
 կը: Ավազակները կանանց շորեր, տերտերական ժամաշապիկներ
 հազած աղաղակով վազում եյին փողոցներով, թալանելով ու
 այրելով աները: Թերդը պաշարողները նախանձում եյին նրանց,

1) Ծեվրոպական ձեր շորեր հագնում եյին պետական ծառայության մէջ գանգոս չինովիկները (ասոմբանավորները) և պաշտամար աղնվակները: Մ բ

յերկյուղելով, վոր իրենք առանց ավարի կմնան... Հանկարծ Պուգաչովը հրամայեց նրանց նահանջել և նախապես ելի մի քանի աներ այլեւով, վերադարձավ իր բանակատեղը. Սկսվեց մի փոթորիկ, կրակե ծովը բռնեց ամբողջ քաղաքը, կայծերն ու շիկացած ածուխի կոտրները դեպի բերդ թռան և վասեցին մի քանի փայտե տանիքները. Առոյն բռպեյին մի պատի մաս դրվողով փուլ յեկազ և տակովն արավ մի քանի մարդ. Բերդուան իրար սեղմազած՝ պաշարվածները հուսահատ աղաղակներ բարձրացրին, կարծելով, վոր չարագործը դռները խորակելով ներս և խուժում և վոր արգեն հասել ի իրենց վերջին ժամը:

Թաղաքից գերիներին թշեցին և ավարը կրեցին. Բաշկերտները, չնայած Պուգաչովի խիստ արգելքներին, մարտակներով խփում եյին ժողովրդին և նիզակներով ծակուում հետ ընկնող կանանց ու յերեխաներին. Շատերը խեղդվեցին, ծանծաղուուզ կազանկա գետն անցնելիս. Բանակատեղ քշված ժողովրդին ծունկ չոքեցրին թնդանոթների առջև. Կանալը լաց ու կոծ բարձրացրին. Նրանց ներուամ հայտնեցին, Բոլորը գոռացին ուռուառ և նետվեցին գեղի. Պուգաչովի կայանը. Պուգաչովը նստել եր բազկաթուի վրա, ընդունելով Հազարի թաթարների ընծաները, վորոնց յեկել ելին նրան իրենց խոնարհությունը հայտնելու. Ազա հարցը ին՝ ծվ և կամենում ծառայել թագավոր Պյուր Ֆեռուովիշին. Շատ ցանկացողներ գտնվեցին:

Հարձակման բոլոր ժամանակ յեպիսկոպոս Բենիամինը դըտնը գումարում եր բերդուամ, Ավետման առաջարուամ և ժողովրդի հետ ծընկալութ աղոթում եր աստծուն քրիստոնյաների փրկության համար. Հրաձգությունը հազիկ եր լսել, վոր նա վերցրեց հրաշազործ սրբապատկերները և չնայած հրդեհի անտանելի տապին և գերաններին, արդարությունը ներսից յըջեց բերդը մաղթանքի յերգառացությամբ. Եներեկոյան գեմ փոթորիկը հանգարավեց և ընկնող քամին գարձավ հակառակ կողմը, Վրա հասավ գիշերը՝ սոսկալի—բնակիչների համար. Այրվող ածուխի շեղակուլաներ գարձած Հազանը միում և կարմրին եր տալիս խափարի մեջ. Վոշ վոքչընեց. Լուսանալուն պիս ընակիչները շտապեցին բարձրանալ բերդի պարիսպների վրա և իրենց հայացքներն ուղղեցին դեպի այն կողմը, վորտեղից նրանց նոր հարձակում եյին սպասում. Սակայն, փոխանակ Պուգաչովյան հրասակախմբերի, նրանք զարմանքով տեսան Միխելսոնի հուսարներին, վորոնք սրաբշավ քա-

դաք եյին գալիս, Նրա կողմից նահանգապետի մոտ ուղարկված
սպալի առաջնորդությամբ:

Վոշ-վոք չգիտեր, վոր զեռ նախորյակին Միխելսոնը քա-
ղաքից լոթ վերստի վրա արյունանեղ կոփվ եր ունեցել Պուգա-
չովի հետ և վոր խոռվարաբները անկարգ նահանջել եյին:

Մենք թողինք Միխելսոնին, վորն անխոնջ կերպով հետա-
պնդում եր Պուգաչովի փութեկոտ շարժումները: Ուփայում նա-
թողեց իր հիվանդներին ու վերավորներին, հետն առավ մարտ
Դումեյին և հունիսի 21-ին գտնվում եր Բուրնովոյում: Բիրսկից
մի քանի վերստի վրա: Յակուրովիչի այրած կամուրջը խոռվա-
րաբները նորից վերաշինել եյին: Մոռ յերեք հազար հողի դուրս
յեկան նրա դեմ: Նա ջարդեց նրանց և Դումեյին ուղարկեց բաշ-
կերների մի հրասակախմբի դեմ, վորը գտնվում եր վոչ այնքան
հեռու տարածության վրա: Դումեյն ցրեց նրանց: Միխելսոնը
զնաց Ոսայի վրա և հունիսի 27-ին ճանապարհին ջարդելով բաշ-
կերների և թաթարների խոռվածնը: Նրանցից իմացավ Ոսայի
առման և Պուգաչովի՝ կամայից անցնելու մասին: Միխելսոնը
զնաց նրա հետքերով: Կամայի վրա վոչ կամուրջ կար, վոչ նա-
զակներ, Այրումին լողալով անցավ գետը, հետեակը՝ լաստերով:
Միխելսոնը Պուգաչովին իր աջ կողմում թողնելով, ուղիղ զնաց
զեղի Ղազան և հունիսի 11-ի յերեկոյան արդեն գտնվում էր նրա-
նից տառնինդ վերստի վրա:

Գիշերը նրա զորախումը շարժվեց իր տեղից: Առավայան
Ղազանից քառասունինդ վերստի վրա նա լսեց թնդանոթաձդու-
թյան ձայները: Կես որքա դեմ թանձր, բոսրագույն ծուխը նրան
հայտնի դարձրեց քաղաքի վիճակը:

Կեսորվա շողը և զորախումի հոգնածությունը Միխելսոնին
հարկադրեց մի ժամ դադար տալ: Նույն միջոցին նա իմացավ,
վոր վոչ հեռվում գտնվում և խոռվարաբների մի խոռման: Մի-
խելսոնը հարձակվեց նրանց վրա և չորս հարյուր հոգու գերի
վերցրեց: մնացածները փախան զեղի Ղազան և Պուգաչովին հայտ-
նեցին թշնամու մոտենալու մասին: Հենց այդ ժամանակ եր,
վոր Պուգաչովը լերկյուղ կը ելով անակնկալ հարձակումից, բեր-
դից նահանջեց և յուրայիններին հրամայեց ջուռով դուրս գու-
թաղաքից, իսկ ինքը բռնելով նպաստավոր դիրքեր, ճակատ կազ-
մեց Յարիցինուի մոտ, Ղազանից յոթ վերստի վրա:

Ալդ մասին տեղեկություն ստանալուն պես Միխելսոնը մի
զորայանություն շարժվեց անտառի միջով և դաշտ դուրս գալով իր

առջն տեսավ խուզվաբարներին, վորոնք կանգնել եյին ռազմա-
կան կարգով:

Միխելսոնը Խարինին ուղարկեց նրանց ձախ թեր դեմ,
Դուշեյին՝ աչ թեր, իսկ ինքը գնաց ուղիղ դեպի Թշնամու մարտ-
կոցը: Պուզաշովը՝ հազթութունից սիրա առած, և դրաված թշն-
դանոթներով ուժեղացած, հարձակումն ընդունեց սաստիկ կրա-
կով: Մարտկոցի առաջ տարածվում եր ճանինը, վորի միջով
Միխելսոնը պետք եւ անցներ, մինչդեռ Խարինը և Դուշեն աշ-
խատում եյին շրջապատել թշնամուն: Միխելսոնը գրավեց մարտ-
կոցը: Դուշեն աչ թեռու նույնպես խլեց յերկու թնդանոթ, Խուզ-
վաբարները, բաժանվելով յերկու հոծ խմբերի, շարժվեցին—մի
մասը՝ Խարինի դեմ և մասավ խրամատի այն կողմի կապանում
մարտկոցները դրեց և կրակ բացեց: մյուսներն աշխատում ելին
անցնել զորախմբի թիկունքը, թողելով Դուշելին, Միխելսոնը
գնաց Խարինին ոգնելու, վոր թշնամու ուղմերի տակ անցնում
եր ձորակով: Վերջապես հինգ ժամվա համառ կոմից հետ Պու-
զաշովը ջարդվեց և փախավ, կորցնելով ութ հարլուր մարդ-
սպանված և հարյուր ութուն հոգի գերի ընկած: Միխելսոնի
կորուսան աննշան եր: Գիշերվա մթությունն ու զորախմբի հոգ-
նածությունը Միխելսոնին թույլ չտվին հետապնդել Պուզաշո-
վին:

Գիշերելով կովի վալրում, Միխելսոնը լուսավեմին զնաց
դեպի Դագան: Ամեն ըսպէ նրան հանդիպում եյին կողոպախնե-
րի խմբեր, վորոնք ամբողջ գիշեր հարրեցողությամբ ելին ըզ-
րազվել այրված քաղաքի ավերակների վրա: Նրանց սրակուսը
ելին անում և զերի վերցնում: Արսկոյն դաշտ համնելով, Մի-
խելսոնը տեսավ մտածող թշնամուն: Պուզաշովն իմանալով նրա
զորախմբի սակագաթիվ լինելու մասին, շտապեց կանինել նրա
միացումը քաղաքի զորքի հետ: Միխելսոնն այդ մասին նահան-
դապետին աեղեկացնելու համար մարդ ուղարկելով՝ թնդանո-
թաձգությամբ դիմավորեց աղաղակներով ու կանչերով իր վրա
հարձակվող խուժանին և հարկադրեց նրան նահանջել: Պատյամ-
կինը քաղաքից վրա հասավ կալապորով: Պուզաշովն անցավ
կազանկան և հետացավ քաղաքից տասնհինգ վերսո՞ւ Սոխալա-
ներ մինչև իսկ յերեսուն պիտանի ձի:

Դագանն ազատված եր, Բնակիչները խռնվեցին թերդի պար-
պի վրա, վոր գոնեն հեռվից տեսնեն իրենց ազատաբարի բանա-

կը Միխելսոնը տեղից չեր շարժվում, նոր հարձակման սպաս սելով Խակապես, Պուգաչովը զայրացած իր անհաջողություններից, այսուամենայնիվ հույսը չեր կտրում վերջ ի վերջո Միխելսոնին հաղթելու նա ամեն կողմից նոր արիկարախմբեր հավաքեց, միացնելով իր առանձին զորամասերին և հունիսի 15-ի առավոտյան, հրամանելով, վոր իր խառնիճաղան զորքին կարգան մանիֆեստը, ուր նա հայտնում եր իր դիտավորությունը՝ զնալ զեպի Մոսկվա, յերրորդ անգամ նետվեց Միխելսոնի վրա: Նրա զորքը բազկացած եր քանինդ հազար ամեն կարգի թափթուկներից, Բազմամարդ խուժաները շարժվեցին նույն այն ճանապարհով, վորով արդեն յերկու անգամ փախել եյին: Փոշուամպերը, վայրենի աղաղակները, աղմուկն ու դղրդյունը հայտնի զարձրին նրանց մոռենալը: Միխելսոնը նրանց դիմ զուրս յեկալ ութ հարյուր կարաքիներներով, հուսարներով և չուզուելան կազակներով, նա զրավեց նախկին կովի վայրը՝ Յարիցինի մոտ և իր զորքը բաժանեց յերեք խմբի, մեկը մյուսից մոտ առածությամբ: Բունտարարները հարձակվեցին նրա վրա: Յահիյան կազակները կանգնած եյին թիկունքում և Պուղաչովի հրամանով պետք ե սրախողիող անելին փախչողներին: Սակայն Միխելսոնը և Խարինը յերկու կողմից հարվածեցին նրանց, տապալեցին ու քշեցին: Ամեն ինչ վերջացավ մի վալրկյանում: Իզուր Պուղաչովն աշխատեց պահել ցրիվ յեկած խուժանը՝ նախ սրաբշավ հասնելով մինչև իր առաջին բանակատեղը, տպա և յերկորողը: Խարինը յետանդրւան կերպով հետապնդեց նրան, ժամանակ չտալով վոչ մի տեղ կանգ տանելու: Սույն բանակատեղերում զանգում եյին մինչև տաս հազար Ղազանի բնակիչներ՝ ամեն սերի ու աստիճանի: Նրանք աղատվեցին, Կազանիկա զետակը լիքն եր մեռած մարմիններով: Հինգ հազար զերի և իննը թնդանոթ մնացին հաղթողի ձեռքում: Կովի ժամանակ սպանվեր եյին մինչև յերկու հազար հոգի, մեծ մասամբ թաթարներ ու բաշկիներ: Միխելսոնը կորցրեց մոտ հարյուր մարդ սպանված ու վիրավոր: Նա քաղաք մտավ խանզավառ բնակիչների՝ իր հաղթության վկաների կանչերի տակ: Նախանդապետը՝ հիմանդրությանից տանջված, վորից նա մեռավ յերկու շաբաթ հետո, բերդի սպարիսպներից զուրս դիմավորեց հաղթողին, աղնվականության և հոգևորականության ուղեկցությամբ: Միխելսոնը զնաց ուղիղ զեպի տաճար, ուր սրբազն Բենիամինը գոհաբանական մաղթանք կատարեց:

Ղազանի դրությունը սոսկալի յեր, նրա մեջ գտնված յերկու հազար ութ հարյուր վաթուն յոթ տներից յերկու հազար հիսուն յոթը այրված եր, Թառնեինդ յեկեղեցին և յերեք վանքը նույնպես այրված ելին։ Դաստիճի-Դվորը և մնացած տները, յեկեղեցիներն ու վանքերը կողապատմած ելին։ Դանվեցին մինչև յերեք հարյուր սպանված ու վիրավոր բնակիչներ. մոտ հինգ հարյուր մարդ անհետ կորան։ Սպանվածների մեջ ելին զանգում գիմնազիայի դիրեկտորը՝ Կանիցը, մի քանի ուսուցիչներ և աշակերտաներ ու գնդապետ Ռազինովը։ Դնենքրալ-մալոր կուգրյավշեմը, հարյուր տասնամյա մի ծնրունի, չուզեց պատոպարզիլ բերդում չնայած տմեն տեսակ հորդորների, Նա ծնկաչոք ազնիք և անում Ղազանի կուտանաց վանքում։ Ներս են վագում մի քանի կողապատմաներ, Նա սկսում է հորդորել նրանց։ Զարագործները սպանում են նրան լեկիղեցու գավթում։

Այսպիս եր տոնում իր վերագարձ խեղճ կոնդապորը, վորը մի տարի դրանից տուաջ փախիլ եր Ղազանից։ Բանափ շննչը, վորտեղ նա մարտկ ու տաժանկրություն պիսի տեսներ, այրել եր, խակ կալանավորները՝ Նրա վոչ հեռու անցրալի ընկերները ազատ ելին արձակված։ Զորանոցներում արգեն մի քանի ամիս եր, ինչ պահպում եր կազակունի Սովիտ Պուգաչովան իր լերեք յերեխաներով։ Առում են, վոր ինքնակոչը, նրանց տեսնելով, լոց և լեղել, սակայն չի դավանանել ինքն իրեն, Նա հրամակիլ և նրանց բանակոտեղ տանել, տեղելով, ինչպես հազարացնում են։ յետ զիան ետան. Երա մարդը ինձ մնձ ծառայուրյան և մատուցիլ, Դավանան Մինեյեմը՝ Ղազանի աղեաի գլխավոր մեղագարաց, Պուգաչովի տուաջին պարառության ժամանակ գերի ընկազ և ապօմական դատարանի վորոշումով քաջեց շարքի միջով և ձեծվելով մահացվեց¹⁾։

Ղազանի իշխանությունն սկսեց հոգ տանել բնակիչներին անվնաս մնացած աներում տեղավորելու համար։ Նրանց հրավիրվեցին բանակատեղ՝ Պուգաչովից խլված ավարը ջոկելու և

1) Տանջալից ժամապատճի մի տեսակը, յերբ զատազարյաւաշն Հարեւարան ելն քայլու յերեւար կանգնած զինվորների միջով, վարժություն բարձրացնելու մի առքան եր տեղավոր մանակաց։ Պատիճը լինում եր յերկու կորդի. կոտ վորոշ թվով հարգանքներ, կամ ցմուն-հարգանքներ ելին այնքան վոր զատազարյաւալը մեծում եր։ Հազարդի ելին այն գեղեցերը, յերբ վորոշ թվով հարգանքներ սուսուցը կննջանի, յեր մնում։ Մ. թ.

իրենց սեփականությունը յետ ստանալու համար Շատապեցին մի կերպ բաժանելու Ունեվոր մարդիկ չքավոր դարձան. ով տնանկ եր՝ աշքը բացեց հարուստ:

Պատմությունը պետք եւ հերքի այն պրապարտանքը, վոր մարդիկ թեթևամիտ կերպով կրկնում են. պնդում եյին, վոր Միխելսոնը կարող եր կանխել Ղազանի զբավումը, վոր նա դիմանք իւռովարաբներին ժամանակ եւ ովել քաղաքը թալանելու, վորպեսզի իր հերթին հարուստ տվար ձեռք ձգի, շահը գերազանելով փառքից, պատիվներից և թագավորական պարգևներից, վոր սպասում եր Ղազանի փրկչին և բունաը խաղաղեցնողին:

Ըսթերցողները տեսան, թե Միխելսոնը ինչպես արագ և ինչպես անխօնջ եր հետապնդում Պուգաչովին, Յեթե Պատյամկինը և Բրանտը կատարելիին իրենց գործը և կարողանային դիմանալ գոնե մի քանի ժամ, առաջ Ղազանը կփրկվեր, Միխելսոնի զինվորներն, ի հարկե, հարստացան. սակայն մեզ ամոթ կլիներ անոնց առացուցման մեղադրել էին, վաստակավոր ռազմիկին, վոր իր ամբողջ կյանքն անց եր կացըրել պատվի քաշում և մեռել և վորպես ռուսական գորքերի գլխավոր հրամանատար:

Հուլիսի 24-ին Ղազան հասավ յենթազնդապետ կոմի Մելլինը և Միխելսոնի կողմից ուղարկվեց Պուգաչովին հետապնդելու Ինքը Միխելսոնը մնաց քաղաքում — իր այրուձին թարմացնելու և պաշարեղնեն պատրաստելու համար: Մյուս պետերը շտապով մի քանի ռողմական կարգադրություններ արին, քանի վոր, չնայած Պուգաչովի պարտությանը, արգեն զիաելին, թե վորչափ վատանգավոր եր սույն ձեռներեց ու գործունյա խռովարը: Նրա շարժումներն այնպես արագ եյին ու աննախառնելիի, վոր հնար չկար նրան հետապնդելու, մանավանդ վոր այրուձին չափից դուրս ուժապատ եր յեղել: Աշխատում եյին կարել նրա ճանապարհը, սակայն մեծ տարածության վրա ցըրված գորքերը չելին կարողանում ամեն տեղ հասնել և արագ շրջումներ կատարել: Պետք եւ ասել և այն, վոր այն ժամանակվա զորապետների մեջ հազիվ կը առնվեր մեկը, վորն ի վիճակի լիներ Պուգաչովի կամ նրա ավելի քիչ հայտնի համախոնների հախից դար:

Աւրեւորաց զյուկ

Պուգաչովը Վոլգայի այն կողմանու—Ըստնաևը իրարանցում—Դժներայ Սառուղինի նամակը:—Մեկառերինայի զիտագործությունը—Նույ Գ. Իդ. Պուգաչովը բարձումը:—Պենզայի զրագումը:—Վակայումու տակը:—Դերմագինի զնները Բոլշակը և այլու—Մարտավի գրագումը:—Պուգաչովը Ծորեցինի տառ:—Առաջարարությունիցից հանու:—Պուգաչովի պարագաները:—Առաջարարությունը:—Պուգաչովը և կառավարության ձեզը:—Նրա խօսքաբարթունը կամ Պանինի համար:—Պուգաչովի և նրա համարներին դաշտ:—Բանաբարթների ամենապահեց:

Ջիեր փոխներով Պուգաչովը փախչում եր կոկչայսկի ճանապարհով, յերեք հարյուր յարիկյան և իլեցիկի կազակների հետ ու վերջապես ընկապ անառու Խարբինը, վոր նրան հետապնդում եր ամբողջ յերեսուն վերստ, ստիպված յեղագ կանգ առնել: Պուգաչովը գիշերեց անտառում: Նրա ընտանիքը հետոն եր: Նրա ընկերների մեջ գանվում եյին յերկու նոր անձինք: Նրանցից մեկը յերիտասարդ Պուլազիկին եր, փառապանի կոնֆեգրատի հարազատ յեղբայրը¹⁾, Վորոգի ռազմագերի նա գանվում եր Ղազանում և զեղոյի Ռուսաստանը տածած իր առելությունից միացագ Պուլազովի հրոսակալմբին: Ենրկորդը ունիորմատորական գագանության պատկանող մի պատոր եր Ղազանի հըրդինի միջնոցին նրան տարել եյին Պուլազովի մոտ: Ինքնակոչը ճանաչել եր նրան: մի ժամանակ քաղաքի փողոցներով շղթակաղ անցնելիս Պուգաչովը նրանից վազորմություն եր ստացել: Խեղճ պատորը մահվան եր պատառում: Պուգաչովը սիրալիր ընդունեց նրան և զնդապեաի տատիճան շնորհեց: Պատոր-զըն-

1) Նրանց յերեք յեղբայր եյին: Ավագը նոյտնի եր իր հանգույզ մասնակի ուղղագում Սամահալավ Պուլազովի թագավորի անձի զեմ, կրաքերը 1772 թվից զանգում եր գերության մեջ և ողբուժ ճանանդադիտի անց, ուր նրան ընդունեում եյին իրեն նարացայ:

Մահք. նեղինակի

գաղեաին նստեցրել ելին բաշկիրական ձիու վրա և Նա ուղեկցեց
Պուգաչովի փախուսաը և մի քանի որ անց արդեն հետ ընկառ
նըանից և վերազարձավ Ղազան:

Պուգաչովը յերկու որ թափառում եր մերթ այս, մերթ այն
կողմը, այդ կերպ խաբելով ուղարկված հետապնդումը: Նրա սրի-
կաները, ըրվելով, սովորական կողոպւտներ ելին կատարում:
Բելորորդումը բռնվեց Ղազանի շրջականերում, մորակով ծեծ-
վեց, հետո տարվեց Մոսկվա և մահապատժվեց: Մի քանի հա-
յուր փախուսականներ միացան Պուգաչովին: Հուլիսի 18-ին նա
հանկարծ ուղղվեց գեղի Վոլգա՝ Կոկչայսկի գետանցը և իր զոր-
քի ամենալով մասով հինգ հարյուր մարդկանց հետ անցավ
մյուս կողմը:

Պուգաչովի գետանցումն ընդհանուր իրարանցում առաջաց-
րեց, վրացի ամբողջ արևմտյան կողմն ապաստամբվեց և անձ-
նատուր լեզավ ինքնակոչին: Կալվածատերերին պատկանող գյու-
ղացիները բռնատ արին: այլապավանները և նոր մկրտվածները¹⁾
սկսեցին սպանել ուստ քահանաներին: Զորավարները քաղաք-
ներից փախան, աղնվականները՝ կարգածքներից: խաժամուժ ժո-
ղովուրդը վարսում եր թե նրանց և թե մյուսներին ու ամեն կող-
մից բերում և ներկայացնում եր Պուգաչովին: Պուգաչովը ժո-
ղովրդին աղատություն հայտարարեց, աղնվական ցեղի վաշն-
չացում, պարտիքների ներում և աղի ձրի բաշխում: Նա զնաց
գեղի Ցիվիլսկ, քաղաքը թալանեց, զորավարին կախեց և իր հրո-
սակախումբը յերկու մասի բաժանելով, մի մասն ուղարկեց
Նիժեգորոդկայտ ճանապարհով, իսկ մյուսը՝ Ալատիրսկի ուղիով
և այլպիսով խզեց Նիժնիի և Ղազանի հաղորդակցությունը:
Նիժեգորոդի նահանգապետը՝ գեներալ-պորուչիկ Ստուպիշինը
գրեց իշխան Վոլկոնսկուն, թե Ղազանի վիճակն և սպասում նաև
Նիժնիին և վոր նա չի յերաշխավորում նաև Մոսկվայի համար:
Ղազանի և Որենրուրդի նահանգներում գանվոր բոլոր զորախօմ-
բերը շարժվեցին և ուղղվեցին Պուգաչովի դեմ: Շահերատովը
Բուգուլմայից, իսկ իշխան Գոլիցինը Մենդելինսկուց շատպեցին
դեմի Ղազան: Մելլինն անցավ Վոլգան և հուլիսի 19-ին գուր

1) Նվաճմած մասեր ազգությունների մեջ տորիչի գաղութային եքողուն-
սիային (ասքասփառութին) զուգընթաց մուտք էր գործում և ուղղութառ զախ-
նանքը: Այսուղ խոսքը բռնի կերպով կամ խորեցոյնթյամբ ուղղութա-
ռ զարձականների մասին եւ Ռ. թ.

գեկավ Ավյաժակից. Մանսուրովը Յարշէ քաղաքից շարժվեց գեղի Սիդրան. Մուֆելը զնաց Սիմբիրսկի վրա. Սիխելսոնը Զերոկարիից փութաց գեղի Արգամատ, վորպեսպի կարի Պուգաչովի հանապարհը գեղի Մոսկվա...

Սակայն Պուգաչովն այնու գիտավորություն չուներ հին մայրաքաղաքի վրա զնալու Ասեն կողմբը շրջապատված կառավարական զորքերով, հավատ շշնեայելով իր համախոներին, նա արդեն իր գրիսության մասին եր մտածում. Նրա նպատակն եր՝ անցնել Կուրանի այն կողմը, կամ թէ Պարսկաստան։ Դըլիսավոր բաւարարաբները նախատեսում եյին իրենց ոկտած զորքի վախճանը և արդեն սակարկում եյին իրենց տաշնորդի գլուխը։ Պերֆիլեվը բոլոր հանգապարտ կազակների անունից դադանի կերպով մի հավատարմատար ուշարձեց Պետրովը, ինչնակոչին հանձնելու առաջարկությունը, կառավարությունը, վոր մի անգամ խարզիլ եր նրանից, լով չեր հավատում նրան, սակայն բանակցությունների մեջ մտագ նրա հետ։ Պուգաչովը փախավ, բայց նրա փախուստը ասես արշավանք լիներ, Սերբեց նրա հաջողություններն այնպես սոսկալի չեյին, յերբեք խռովությունը չեր մոլեգնել այդպիսի ուժով։ Ապստամբությունը մի գյուղից մյուսն եր անցնում, մի գավառից մյուտը։ Հերիք եր, վոր հայտնվեյին յերկու-յերեք շարագործներ, վորպեսպի ամրող մարդեր բունստ անենին, կազմվում եյին կողոպահիչների և բունտարարների առանձին հրասակախմբեր և յուրաքանչյուրն իր Պուգաչովն ուներ...

Այս ցավալի լուրերը խոր տպավորություն գործեցին Պետերբուրգում և մթագնեցին այն ուրախությունը, վոր թողել եր տանկարան պատերազմի վախճանը և Քյուչուկ-Նայնարշիի փառավոր հաշոտության կնքումը։ Թագուհին, վոր անրավական եր իշխան Շչերբասովի գանդաղկուությունից, զենքն հուլիսի ըսկըրին, մնեց նրան յետ կանչել և դորքի գլխավոր հրամանաւարությունն հանձնել իշխան Քոլցինին։ Այս հրամանը տանող սուրհանգակը կանգ առավ Նորման-Նովգորոդում՝ նանապարհի անապահովության պատճառով։ Իսկ յերբ թագուհին իմացավ Ղաղանի առման և ըունուը Վոլգալի այն կողմը փոխադրվելու մասին, այն ժամանակ նա արդեն մտածում եր ինքը մեկնել այդ լերկրամատը, ուր սաստկանում եր աղետն ու գտանքը, և անձամբ ղեկավարել զորքը, կոմս Նիկլիաս Խվանովիչ Պանինը կարողացավ համոզել թագուհուն թողնել այդ գիտավորությունը։

Թագուհին շպիտեր՝ ձևմ հանձնի հայրենիքի փրկությունը, Սուլին ժամանակ մի ազնվատոնմիկ՝ պալատից հեռացված և թիրիկովի պես աշխից ընկած՝ կոմս Պյոտր Խվանովիչ Պանինը ինքը պատրաստակամություն հարսնեց իր վրա զերցնել այն սիրազըրծությունը, վորը չեր ավարտել իր նախորդը, Յեկատերինան յերախտազիտությամբ տեսավ իր բարենքնունդ հզատակի յեռանդը և կոմս Պանինը այն ժամանակ, իերը իր զյուղացիներին ու դարպանավորներին¹⁾ զինելով պատրաստվում եր գուրք գալ Պուգաչովի դեմ, իր զյուղում հրաման ստացավ ընդունել խովությամբ բռնված նահանջների և այստեղ ուղարկված զորքերի իշխանությունը, Այսպիսով Բենդերի²⁾ նվաճողը պատերազմի գուրք յեկավ մի հասարակ կաղաքի դեմ, վոր դրանից չորս տարի առաջ, անհայտ կերպով ծառալում եր նրա հրամանատարությանը հանձնված զորքի մեջ:

Հուլիսի 20-ին Պուգաչովը Կուրմիշի մոտ լողալով անցավ Սուրա գետը, Ազնվականները և չինովնիկները փախան, Խաժամում ամբոխը դիմավորեց նրան գետափին՝ սրբոց պատկերներով ու հացով։ Կարգացվեց վրդովեցուցիչ մանիթեստը, Հաշմանդամ զինվորների զորախումբը բերվեց Պուգաչովի մոտ։ Դրա պետ մայոր Ոլլովը և մի յենթասպա, վորի անունը դժբախտաբար չի պահպել, միայն նրանք չուզեցին կերպին և յերես ու յերես մերկացրին ինքնակոչին նրանց կախեցին և մեռած վիճակում հարվածեցին մարակներով։ Ոլլովի այրին փրկվեց իր տան սպասովորների ձեռքով։ Պուգաչովը հրամայեց պետական ողի բաժանել չուվաշներին։ Կախեց մի քանի ազնվականների և զնաց Յաղըրինակի վրա, քաղաքը թողնելով յափկյան չորս կաղակների իշխանության տակ և նրանց անորինությանը հանձնելով իրեն միացած վաթուուն նորտերին։ Նա իր յետեկոց մի փոքրիկ հրո-

1) Ձաօրում—ֆեղալական Ռուսությամբ բաժնեկալվածավոր հոյսովն էր վաճառ մեծ մեծ իշխանների պալատական լատուր, ոկոտ բուրժներից մինչև զամոպանների ու խնարարները Ալյուեդ խորը կուլյանտարեկան նորտերից նըսնց մասին եւ, գործոց կալվածատերը հողից կարած ունում եր կուլյանտարեկական առնը՝ ոչ և ոչ ճառարություններ տնելու։ Դրապատճենարիք թիգը շաման եր, համախ մինչև մի քանի հարբորի, եր համառ մի կուլյանտարեւմ։

2) Բենդերի—քաղաք ոյժման Բնաբարիտում, Դնեստր զետի աջ ոփին Ռուսաստանը ար քաղաք ստոցի և 1806-1812 թ. թ. ռուս-ռումենական պատերազմի հետանջազ. համաձայն Բուլիարեսում կնքված զանգը (1812) ամրող Բնաբարիան անցավ Ռուսաստանին Մ. թ.

աակախումբ թողեց՝ կոմս Մելլինին բանելու համար։ Դեպի Արդաման շարժվող Միենելունը՝ Խարինին ուղարկեց Յաղթինսկի, ուր շապեց և կոմս Մելլինը։ Պուգաչովն իմանալով այդ մասին, շրջվեց դեպի Ալտափիք. բայց իր շարժումը թաղթնելով. զեղի Յաղթինսկի ուղարկեց մի հրոսակախումբ, վորը յատ մզվեց զորավարի և բնակիչների կողմից, իսկ դրանից հետո նրանց հանդիպեց կոմս Մելլինը և բոլորին ցրիվ տվեց. Մելլինը շտապեց զեղի Ալտափիք, հանապարհին ազատեց Կուրմիլը, ուր կախեց մի քանի խռովարարների, իսկ իրեն զորավար անվանող կազակինները վերցրեց վորակն ուղմագերի։ Հաշմանդամ զինվորների սպաները, վորոնք յերգում ելին տվել ինքնակոչին, արդարանում եյին նրանով թե իրենց յերգում տվել են վոչ թե անկեղծ սրտով, այլ նորին Կայսերական Մեծուրյան տանիեր պանապանիու նամար։ «Ցեղ վոր մենք, դրեւ ելին նրանք Ստուպիլինին, աստեղու և մեր ամենավողորմած թագուհու առջև խախտել ենք յերգումը և այն չարագործին յերդին, դրանում մենք մատուցում ենք մեր քրիստոնեական զղումը և լարապին ազերսում՝ թողություն տալ առյօն մեր ակամա հանցանցը, քանի վոր այդ բանին մեղ հասցրել և միայն մահվան սարսափեց։ Թան մարդ ստարագրել են առյօն ամսթալի մեղայականը։

Պուգաչովը սրանում եր արտասովոր արագությամբ, ամեն կողմ իր հրոսակախմբերն ուղարկելով։ Զգիտեյին՝ դրանցից վերի մեջ և զանգում նա ինքը, Հասնել նրան անհնար եր. Նժուուդ նստած նա ուղանում եր գյուղական ճանապարհներով, ձիերը փռիսերվ և իր լուսեից խռովարկուներ թողնելով, վորոնք թվով յերկու, յերեք և հինգից վոչ ամել, անվանող կերպով շրջում երին գյուղերում ու քաղաքներում, ամենուրեց նոր հրոսակախմբմբեր հավաքելով։ Նրանցից յերեքը հայտնվեցին Նիժնի-Նովգորոդի շրջակայցում։ Դեմիզովի գյուղացիները կապուտեցին նրանց և ներկայացրին Ստուպիլինին։ Սա հրամայեց բնանանավակների վրա կախաղան բարձրացնել նրանց և թողնել Վոլգայի հռանցով ցած, բռնատարար ափերի մտավ։

Հուլիսի 27-ին Պուգաչովը մտավ Սարանսկի նրան զիմավորեց վոչ միայն հասարակ ժողովուրդը, այլ և հոգևորականությունն ու վանականությունը... Յերեք հարյուր ազնվականների՝ ամեն հասակի ու սեռի՝ նա կախեց արդակու. գյուղացիներն ու գարպասավորները խմբով գալիս հավաքվում ելին նրա շուրջը։ Թաղացից նա դուրս, լեկավ 30-ին։ Մյուս որը Մելլինը մտավ Սո-

ըանսկ, պահակների հակողության տակ առավ պրապոբանիկ Շախ-
մամեղովին, վորին ինքնակոչը զորապես եր կարգել, ինչպես և
հոգուր ու աղնվականական կոշման այլ աշխի ընկնող գավաճան-
ներին, իսկ հասարակ մարդկանց՝ հրամայեց մարտկով ծեծել
կախաղանի տակ.

Մինելունը Արգամատից ընկավ Պուգաչովի յետեւ. Մուֆելը
Սիբիրից շատպեց զուրս գալ նրա զեմ. Մելլինը գնում եր կրնկա-
կախ հետապնդելով նրան. Այսպիսով յերեք զորախմբեր զրջա-
պատեցին Պուգաչովին, իշխան Շշերբատովն անհամբերությամբ
եր սպասում Բաշկիրիայից յեկող զորքերին, վորպեսզի ողնու-
թյան ուղարկի զործող զորախմբերին և ինքն ուղում եր շտա-
պել նրանց յետեւց. սակայն ստանալով հուլիսի 7-ի հրամանը,
իշխանությունը հանձնեց իշխան Գոլիցինին և մեկնեց Պետեր-
բուրդ:

Նույն միջոցին Պուգաչովը մոտեցավ Գենգային. Զորավար
Վանվորժակին մի առ ժամանակ խաժամումը դահնել եր հնազան-
դության մեջ և ժամանակ ավեց աղնվականներին փախչելու.
Պուգաչովը յերեաց քաղաքի տառի Բնակիչները նրա զեմ զուրս
յեկան սրբապատկերներով ու հացով և նրա աշնե ծունկ չափե-
ցին. Պուգաչովը մտավ Գենգա. Վանվորժակին, վորին քաղաքի
զորք լժել եր, տանեներկու աղնվականների հետ փակվեց իր տանը
և վճակ պաշտպանվելը Տունը կրակ տիլին. քաջ Վանվորժակին
ընկավ իր ընկերների հետ. պետական և աղնվականնական տները
կողոպտավեցին. Պուգաչովը կարվածատիրական մի մուժիկի զորա-
վար կարգեց և զնաց Սարատովի վրա:

Տեղեկանալով Գենգայի զբավման մասին, Սարատովի իւ-
խանությունն ակսեց իր կարգադրություններն անել.

Այդ ժամանակ Սարատովումն եր գտնվում Դերժավինը,
Նա ուղարկված եր (ինչպես մենք արդին տեսանց) Մալիկովիա-
գյուղը, վորպեսզի կարի Պուգաչովի ճանապարհը նրա՝ զեպի Իր-
դիկ փախչելու զեղչքում. Դերժավինը տեղեկանալով կիրգիդ-
կայսականների հետ Պուգաչովի ունեցած հարաբերությունների-
մասին, կարողացավ նրանց կարել Ուզեն զետերով չվող հորգա-
ներից և մտադրվել եր զնալ Յափիյան քաղաքն աղատելու, սա-
կայն զեներալ Սանկտուրովը նախազգուշացրեց նրան. Հուլիսի
վերջին նա հասավ Սարատով, ու գվարդիայի պորտայիկի տարի-
ճանը, կարուկ խելքն ու կրակու բնավորությունը կարելոր աղ-
դեցաթյան ունեցան ընդհանուր արտմագրության վրա:

Ազգաստոսի Տ-ին Դերժավինը դաղսւթավորների խնամակալության գրասենյակի գլխավոր գառավոր Լողիթինսկու հետ միասին Սարտառվիր պարեա Բոշնյակին հրամայեց իր մոտ զալիսորհրդակցելու այն միջացների մասին, վորոնք պետք է ձեռք առնվային ներկա հանգամանքներում։ Դերժավինը պնդում եր, վոր դրասենակային մագաղինների մոտ, քաղաքի ներսում պետք է ամբութքուններ ջինել, պետական գանձը փոխադրել այնուեղ, վորդայի վրա յեղած նավակներն այրել, ափի յերկարությամբ մարտկոցներ գնել ու գնուլ Պուլաչավի դեմ։ Բոշնյակը չեղ համայնքմ թողնել իր բերդը և ուզում եր ամբանալ քաղաքի յառեկ մասում։ Վճճեցին, տաքացան—և Դերժավինը համբերությանը կորցրած առաջարկեց ներքակալի պարեստին, Բոշնյակը հաց անդրդպիլի, կրկնելով, թե նա չի ուզում թողնել, վոր իրեն վստահված բերդը և առածո առաջները թալանվին։ Դերժավինը նրան թողնելով, յեկազ մապիխարատ, առաջարկեց, վոր բոլոր բնակիչները անխօսիր գան հոգային աշխատանքների այն աեզզ, վոր նշանակնել և Լողիթինսկին, Բոշնյակը գանդավեց, սակայն վոչ վոք չանց նրան։ Սույն վեճերի մասին փառքի հաւաքաթուղթ մնաց Դերժավինի կեռ նամակը՝ ուղղված համար պարեստին։

Ոգոստոսի Գ-ին Սարտառվում իմացան, վոր Պուլաչավը դուրս է յեկել Պինդայից և մտանելում և Պետրվակին։ Դերժավինը պահանջեց Դոնի կազակների մի զորախումբ և նրանց հետ ճանապարհ ընկազ զետի Պետրովիկ, վարպետի աշխեղից դուրս բերի պետական գանձը, վառողը և Թնդանոթները։ Սակայն քաղաքին մոտենալիս նա լսեց զանգերի զաղանցյան և տեսավիրութարների առաջավոր խառնիխուռան խմբերը, վարոնք քաղաք եյին մտնում և հոգուրականությունը, վոր սրբապատկերներով ու հացով դուրս եր յեկել նրանց դիմավորելու Յեսաուլի և յերկու կազակների հետ նա ազատ թշեց ձիերը և տեսնելով, վոր ամես անելիք չկա, նրանց հետ միասին վերադարձավ Սարտառվ։ Նրա զորախումբը մնաց ճանապարհին, Պուլաչավին սպասելով։ Խնջնակոչն իր համախունների հետ մտացավ նրանց։ Նրան ընկունեցին ծնկաշաք։ Նրանցից լսելով գվարդիական սպայի մտային, Պուլաչավը տեղն ու տեղը ձին փոխեց և տեղը ձեռքն առնելով ինքը չորս կազակների հետ սրացավ հետապնդելու։ Դերժավինին ուղեկցող կազակներից մեկին Պուլաչավը տեղաւարեց։ Դերժավինը կարողացավ մի կերպ հասնել Սարտառվ, վորտեղից հաջորդ որը դուրս յեկազ Լողիթինսկու հետ, քաղաքի

պաշտպանությունը թողնելով իր կողմից ծագրված Բոշնակի հոգատարությանը:

Ոգոսառուի 5-ին Պուգաչովը շարժվեց դեպի Սարատով: Նոր զորքը բաղկացած եղ յերեք հարյուր յափկան և Դոնի հարյուր հիսուն կազակներից, վորոնք նախորյակին երին միացել նրան, և մինչև տաս հազար կալմիկներից, բաշկիրներից, յասակ թաթարներից¹⁾, կալվածատիրական գյուղացիներից, ճորտերից և ամեն տեսակ սրիկաներից: Մինչև յերկու հազար հոգի մի կերպ զինվել երին, մյուսները զնում եյին կացիններով, լեզաններով ու մահակներով: Նա ուներ տասներեք թնդանոթ:

6-ին Պուգաչովը մոտեցավ Սարատովին և կանգ առաջ քաղաքից յերեք վերստի վրա:

